Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3604-3607

491.99-8
9-36

R010

Մ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

491.99-8

ՄԵՂՐԱԳԵՏ

ՄԻԶԻՆ ԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

ԼՈՒՍԱՂԲԻՒՐ

Հրատարակչական Ընկերութիւն

Թիւ 4

12075

Կ. ՊՈԼԻՍ Տպարան «Արաքս» 1913

11930



12271-58

Դպրոցական նախորդ տարեշրջանի սկիզբը մեր բրած յայտարարութեան համաձայն, լոյս կընծայենք հիմա ՄԵՂԻԱԴԵՏ ներու միջին ընթացքի Ա. եւ Բ. տարիները, այն լի յոյսով որ այս երկու գրքերը եւս նոյն չերմ ընդունելութեան պիտի արժանանան՝ ինչ ընդունելութիւն որ գտան տարրական Ա. եւ Բ. տարիները։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ

Կ. Պոլիս 1913



Սերմնացան

ՍԵՐՄՆԱՑԱՆ.

Գիւղացին, բեռը չակած՝ գնաց դաշտ, կեցաւ իր արտին գլուխը, վար դրաւ ծանր բեռը, կապեց գոգնոցը ու երկինքին նայեցաւ։

— Կապո՛յտ երկինք, ուղիղ սրտով քեզ կը կանչեմ, որ դուն արև, անձրև շատ տաս իմ այս սերմին։ Դուն լաւ գիտես թէ քանի մարդ աչք է դրեր ցանածիս, քանի պարտք ու պատուհաս կը սպասեն սերմածիս։

Այսպէս ըսաւ, ու երեսը խաչակնքեց դողալով. սերմը լեցուց գոգնոցին մէջ, ու սկսաւ ցանել բուռ բուռ։

Ցանկարծ խլուրդ մը վազեց, կեցաւ անոր առջև ու ծրւծրւաց.

— «Մեզի համար ալ սերմ ցանէ, որ չուտենք ամբողջ սերմածը։»

— Ահա՛, ասի ձեր ցեղին ըլլայ, պղտաբերուի ձեզի համար. միայն թէ ցանքիս ձեռք չի դպցնէք...

Երկրորդ բուռը դեռ չէր ցաներ, երբ երևցաւ մորեխ մը.

— «Մե՛զի ալ մաս հանէ քու սերմէդ, որ չի լափենք կանչրցածը։»

— Աս ալ ահա ձեզի կուտամ, թող չատնայ ձեզի համար. կանաչ արտիս վնաս չի տաք, խե՛ղճ եմ ու աղքատ։

Երրորդ բուռը դեռ չէր ցաներ, մէյ մըն ալ տեսնես մրջիւն մը.

—« Մե՛զի ալ բաժին տուր, եթէ չես ուզեր որ սերմդ կրենք մեր բոյնը։»

— Ձեզ չա՛տ լաւ կը ճանչնամ, ա՛յ մրջիւններ. դուք անկուշտ էք. ահա այս ալ թող ձեզի ըլլայ. չի կրէք իմ սերմերս։

Ցանկարծ, վերէն կաչաղակը թռաւ ու կանչեց.

—« Մե՛զ ալ մարդու տեղ դի՛ր, մենք գող չենք, մենք շատ վախկոտ ենք։»

—Ահա աս ալ թռչուններու դասին. չի ժողվէք իմ ցանքը, մեղք եմ ու պ[illegible]ի տակ։

Վերջին անգամ, [illegible]երկրագործը յիշեց աղքատները, յիշեց տէրտէրն ու օտարական հիւրերը, և ամէնուն ալ մասը սերմանեց բուռ բուռ։

Ապա, կեցաւ ակօսին մէջ, աչքը ձգեց երկինքին ու ըսաւ.

— Ինչ որ մնաց, ան ալ ինձի տուր, կապուտի՛կ Աստուած, որ հնձեմ, կամնեմ ու տամ պարտքիս...։

1. Ինչ « պատուհաս » է որ կը սպասէ երկրագործի սերմանին։
2. Դուք տեսե՞ր էք սերմնացան. եթէ այո՝ պատմեցէք թէ երկրագործը ի՛նչպէս կընէ սերմնացանը։

ՀՕ՝-ՀՕ՝, Ե՛Զ ՃԱՆ

Հօ՛, հօ՛, Ե՛զ ճան, հօ՛, կալ ըրէ՛.
կալիդ ղուրպան, հէ՛յ ընկեր.
հօ՛, կալ ըրէ՛, ճար մի ըրէ՛,
թեղը դիզենք, ճա՛ն ընկեր։

Իրկուն կուգայ, մութը կրնկնի,
աստղ ու լուսին կը բացուին.
հովիկ կուգայ, զովը կրնկնի,
հոգո՛ւդ մատաղ իմ հոգին։

Կուրծքս բացած առտուն կելլեմ,
յարդ ու ցորեն կը մաքրեմ.
հօ՛, հօ՛, Ե՛զ ճան, հօ՛, հօ՛, կալէ՛ն,
յարդերնիս շատ, մեր տունը չեն։

Երբ ձրմեռ գայ փուք-պորանով,
ցուրտ գայ, սով գայ աս տարուան,
մեզ համար չեն.— ի բերանով
փա՛ռք տանք Տիրոջ. հօ՛, եզ ճան։

ՇՈՂԳԱՄՆ ՈՒ ԲՈՂԿԸ

1

Ժամանակին, կար ու չի կար, կնիկ մը կար։ Անունն էր մուրացկան Մարնոս։ Այս կնիկը դռնէ դուռ կը մուրար և կը տանէր երկանը։

Օր մը, Մարնոս դեռնէն դըդումի կուտ մը գտաւ. կուտը տնկեց իրենց բակին մէջ։ Քիչ ետքը այդ կուտէն դուրս եկաւ կանաչ ընձիւղ մը. ընձիւղը ծլեցաւ, մեծցաւ, և եկաւ, եկա՛ւ մինչև երկինք։

Էրիկը ըսաւ Մարնոսին.

— Կնի՛կ, եկո՛ւր, փութթուի՛ր սա ծառին, ելիր Աստծու քով, և պոռա՛ որ մեզի ամէն օր մէկ մէկ հաց տայ։

Կնիկը ելաւ,— թը՛խ, թը՛խ։

— Ո՞վ է սա։

— Աղքատ Մարնոսը, Աստուած-պապա, մուրաղը կուզէ։

— Ի՞նչ է մուրաղը։

— Օրական մէկ հաց ինձի, մէկ հաց էրկանս։

— Ա՞ռ է ուզածդ. չա՛ռ աղէկ, գնա՛, ձեզի մէկմէկ հաց ամէն օր։

2

Անցաւ մէկ քանի օր։

— Է՛յ կնիկ, ըսաւ էրիկը, հացը աղէկ, բայց ցամաք է. հեղ մըն ալ ելիր տա երկինքը, ըսէ՛ որ չաբաթը երկու անգամ միս, կիրակէ առտուներն ալ մէկ մէկ ակնիկ ու փիլաւ տայ մեզի։

Մարնոս եկաւ։ Ուզեց իր նոր մուրաղը։

— Հա՛, իրաւունք ունիս, ըսաւ Աստուած-պապան, ցամաք հացին հետ խաղեղ ալ պէտք է... վրա՛յ գլխուս. ձեզի չաբաթը երկու խապուղա, կիրակէ առտուներն ալ փիլաւ ու ակնիկ։

3

Անցան օրեր։ Էրիկը դարձաւ՝ ըսաւ կնկան.

— Մարնո՛ս, սա Աստուծմէն մեզի լաւ տուն մը և ինձի ալ ձի մը ուզէիր՝ որ ֆէյս ծռէի, հեծած քաղաք երթայի։

Կնիկն եկաւ երկինքը և Աստուած-պապան ըսաւ.

— Լա՛ւ, ձեզի տուն մը, էրկանդ ալ ընտիր նժոյգ մը։

Տունն ու ձին որ եղան, Մարնոս օր մըն ալ եկաւ դդմենիին դագաթը, և պոռաց.

— Հէ՛յ Աստուած, ողո՛րմած Աստուած, եկուր չէ՞ մի՛ ըսեր, էրիկս փաչա ըրէ՛, դիս ալ խաթուն։

— Հը՛մ, այդպէս դիւրին դի՛ւրին. չէ՛, պոռաց Աստուած-պապան բարկացած, դուք որ ձեր գեղը մոռցաք, ես ալ ձեզ կը մոռնամ ահա... դուն չողգամ եղիր, էրիկդ ալ բողկ։

Սա էր որ ըսաւ։ Մէյ մըն ալ տեսնես, Մարնոս դարձաւ չողգամ, էրիկն ալ բողկ. երկուքն ալ ինկան գետինը, մտան հողին մէջ։ Ան օրէն է որ՝ կան ու կան Շողգամն ու Բողկը, երկուքն ալ գետնին տակ, երկուքն ալ հողին մէջ։

ԻՄԱՍՏՈՒՆ ՋՈՒԼՀԱԿԸ

1

Հեռու երկրէ դեսպան մը եկաւ, կեցաւ թագաւորին առջև, և առանց խօսելու, անոր գահին շուրջը կլոր գիծ մը քաշեց. յետոյ, լուռ ու մունջ, մէկ կողմ քաշուեցաւ, նըստեցաւ։

Թագաւորը բան չի հասկցաւ այս մարդուն ըրածէն։ Կանչեց իր իշխանները. անոնք ալ բան չի հասկցան։

Նեղուեցաւ թագաւորը։ Իրեն համար մեծ ամօթ էր որ իր պալատականներուն մէջ խելօք մարդ մը չի կար՝ դեսպանին ըրածը հասկցող։

Շատ բարկացաւ, և յայտնեց որ՝ եթէ այդ դեսպանին պատասխան տուող մը չգտնուի, ողջ մարդ պիտի չձգէ։

2

Թագաւորին կողմէ խնդրակներ եկան ամէն կողմ, և իմաստուն մարդ փնտռեցին։ Գացին, գացին, գտան ջուլհակ մը իր տանը մէջ։

Կը տեսնեն որ այս ջուլհակը, նստած տեղը, երեք գործ մէկ անգամէն կը կատարէ.— թէ՛ կտաւ կը գործէ, թէ՛ երկու մանուկի օրօրոցները կօրէ, և թէ ճիպոտով մը տանիքին ճնճղուկները կը փախցնէ։

Երբ իր կտաւին թելերը կը շարժէ՝ կտաւը կը գործուի, օրօրոցները կօրուին, և քովի ճիպոտն ալ շարժուելով՝ ճնճղուկները կը փախցնէ, որ տանիքին վրայ փռուած ցորենը չուտեն։

Խնդրակները այս բանը որ տեսան, շատ զարմացան։ Պատմեցին ջուլհակին որ՝ հեռու երկրէ մարդ մը եկաւ և թագաւորին գահին շուրջ գիծ մը քաշեց. հասկցող մը չեղաւ թէ

ի՞նչ ըսել կուզէր այդ մարդը։ Ելի՛ր երթանք, եթէ դուն պատասխան մը տաս անոր, թագաւորը քեզի մեծ պարգևներ կուտայ։

Ջուլհակը քիչ մը մտածեց, յետոյ առաւ երկու վէգ ու վառեկ մը, և գնաց անոնց հետ։

3

Հասնելով թագաւորին քով, ջուլհակը գօտիէն կը հանէ վէգերը ու կը ձգէ դեսպանին առջև։

Դեսպանը, անմիջապէս, գրպանէն կը հանէ բուռ մը կորեկ և կը ցանէ գետինը։

Ջուլհակն ալ խսկոյն կը թողու վառեկը՝ որ կը սկսի շուտով կոցահարել կորեկներն ու հատցնել։

Այս բանը տեսնելով՝ դեսպանը կը հագնի տրեխները և առաջ ու փուս կը հեռանայ։

4

Թագաւորը կը հարցնէ ջուլհակին.

— Ըսէ՛ տեսնեմ, աս ի՞նչ էր եղաւ, ես բան չի հասկցայ։

Ջուլհակը պատասխանեց.

— Այս մարդը եկեր էր ըսելու. «Մեր թագաւորը կուզէ պատերազմիլ քեզի հետ և քու երկրիդ տիրել. կը խոնարհի՞ս թէ կռուով կուզես պատասխանել։» Ես անոր առջև երկու վէգ ձգելով՝ հասկցուցի. «Դուք մանուկներ էք, գացէ՛ք, վէգ խաղացէք. դուք ո՞վ, մեզի հետ կռուողը ո՞վ։» Այն ատեն, անիկա գետինը կորեկ ցանելով՝ ուզեց հասկցնել թէ. «Մեր զօրքերը անթիւ, անհամար են. դուք չէք կրնար դիմանալ մեզի։» Եւ երբ ես վառեկս թողուցի ու անոր բոլոր կորեկները կերաւ, ասով պատասխանեցի. «Մեր մէկ մարդը կուտէ ձեր հազար մարդը. գնա՛ ու պատմէ թագաւորիդ։»

5

Թագաւորը մեծ մեծ պարգևներ տուաւ խելացի Ջուլհակին և ուզեց որ զայն իր վեզիրը չինէ։

Ջուլհակը ո՛չ պարգևներն առաւ և ոչ ալ վեզիրի պաշտօնը ընդունեց. միայն թէ՝ Թագաւորին ըսաւ.

— Ո՛չ, ես կուզեմ իմ հորս գործել և իմ գեղիս մէջ աշխատիլ. սակայն, միտքդ պահէ, Թագա՛ւոր, թէ՝ հասարակ արհեստաւորներն են՝ քու նեղ օրիդ քեզի հասնողները։

1. Հասարակ արհեստաւորները ինչով է որ Թագաւորին նեղ օրին կը հասնին։
2. Եւ մինակ նե՞ղ օրին է որ կը հասնին։

ԿՈՏԼՈԶ ԴԳԱԼԸ

Ճաշի ատեն սպաս բերին,
անփոր դգալն ինկաւ հիւրին.



հա՛մ անփոր էր,
հա՛մ կոտլոզ էր՝
բեռ չէր տաներ,
ուզէր չուզէր.
— Հայրի՛ի, բաւ որդին հօրը,
հեղ մը նայիր աս ախբօրը,
կոտլոզին բեռ բառնալ կուգէ։
—« Է՛, բա՛ն չունիս, որդի՛ս, լսէ՛,
թէ կոտլոզը՝ մեր կոտլոզն է,
լաւ գիտեմ որ բեռ տանող չէ։»

ԳԵՂԵՑԻԿ ՊԱՐՏԷԶԸ

1

Երբ որ մեր դրացի Պօղոս աղբարը մեռաւ, իր երկու տղաքը՝ Մարտիկն ու Աստուրը, եկան, կանչեցին հայրս։

— Կարապե՛տ աղբար, ըսին անոնք. մեր հայրը մեռաւ, արևը քեզի ու քու զաւակներուդ. եկո՛ւր, դատաւոր եղիր, մեր ժառանգութիւնը արդար կերպով բաժնէ՝ երկու աղբրտոցս մէջ...

Հայրս չատ կը սիրէր ողորմած հոգի Պօղոս աղբարը. ինկաւ անոր տղոցը եաւէն, գնաց որ բաժնէ անոնց ժառանգութիւնը։

Տունը բաժին հանեց Մարտիկին։

— Մարտիկը կարգուած է, զաւկի տէր է, ըսաւ հայրս, տունն անոր ձեռքը թող մնայ, Աստո՛ւր. քեզի ալ խանութը։

Այսպէս, անուշ-բարուշ բաժնեցին ժառանգութիւնները։

Կարգը եկաւ պարտէզին, որ ողորմած-հոգին իր աչքին պէս կը սիրէր. ձեռքովը տնկեր էր անոր պտղատու ծառերը՝ կարգ կարգ, և դրախտ էր դարձուցեր։

Աստուրն ըսաւ՝ ինծի պիտի մնայ, Մարտիկն ալ ըսաւ՝ ինծի։

2

Երկու աղբօր մէջ ինկաւ պաղութիւն։ Պաղութիւնը փոխուեցաւ կծու խօսքի, քէնի ու նախատինքի։

— Գէշ մարդ ես դուն, կըսէր Աստուր՝ Մարտիկին.

մեղք չէ՞ որ հօրս պարտէզը քեզի պէս մարդուն ձեռքը մնայ...

— Զամչցա՛ծ, կը պատասխանէր Մարտիկ, պարտէզը քեզի մնայ որ՝ տարիէ մը ծառերուն արմա՞տներն անգամ չորնան. ծո՛յլ անպիտան, այդ օրը չես տեսներ...

Հայրս տեսաւ որ գործը աղէկի պիտի չհասնի։ Կիրակի ցորեկ մը, մեր տունը կանչեց երկու եղբայրը և խրատեց.

— Եկէ՛ք, զաւակնե՛րս, վա՛զ անցէք այս անհամաձայնութենէն. կարգի դրէ՛ք ձեր այս գործը, բաժնուեցէ՛ք. վերցուցէք մէջտեղէն վէճը։

— Պարտէզը ինծի պիտի մնայ, ըսաւ Աստուր։

— Ինծի՞ ինչու պիտի չմնայ, ու քեզի մնայ, պոռաց Մարտիկ բարկացած։

Հայրս մէջտեղ մտաւ.

— Կա՛մ կիսենք, կէսը՝ մէկուդ, կէսը՝ միւսիդ. կամ ծախենք և դրամը բաժնենք մէջերնիդ։

— Չէ՛, ես անդրանիկն եմ, այդ ժառանգն ալ ինծի պիտի մնայ։

— Ինչո՞ւ, ո՞ր իրաւունքով. ես պարապ խօսք չեմ ճանչնար։

Հայրս, այն տեղն, առաջարկեց.

— Եկէ՛ք, վիճակ ձգենք. ամէն մարդ թող իր բաղդէն գոհ մնայ...

— Չէ՛, ես ողջ գլուխս աւետարանի տակ չեմ դներ, պատասխանեց մէկը։

— Հապա ե՞ս կը դնեմ, պոռաց միւսը, ձեռքը գետնին զարնելով։

«Մեղքը ձեր վզին», կրկնեց հայրս յուսահատ։ Ու մեր դրացիներց տղաքը եկան գացին տունէն, մէկը միւսին ետևէն։

3

Երկու եղբայրները ինկան դատարան։

Հա՛ դատ, հա՛ դատաստան, տարիներ մաշեցուցին դատարանին դռները։ Փաստաբանները, ամէն օր, նոր ծախքի ու նոր դրամի դուռ կը բանային։ Աստուրն ու Մարտիկը պարտք կընէին, խարճ կընէին, կը վարէին դատերնին։

Իսկ անդին, պարտէզին տէր տիրական չի կար, մնացեր էր երեսի վրայ։ Ծառերը կը չորնային, ցանկապատերը կը քակուէին. հովիւները կը բերէին նախիրը՝ անոր մէջ կը թողէին, ու ոչխարները կը կրծէին կանաչ ճիւղերը։

Քա՜նի օրերը կանցնէին, երկու եղբայրները այնքան տխուր, տրտում կը դառնային։ Գլուխնին կախ, ձեռքերնին իրենց գրպանին մէջ՝ կերթային սրտնեղ։ Բարեկամ, դրացի, ամէնքն ալ երես կը դարձնէին իրենցմէ. ղղուեր էին անոնց փոխադարձ ամբաստութիւնները լսելէ։

Տարիներ եաքը, վերջապէս դատը լմնցա՛ւ. բայց բանը հոն հասաւ որ դատարանը ծախու պիտի հանէր պարտէզը, գանձելու համար դատական ծախքերը։

Աստուր ու Մարտիկ, երկու բարի եղբայրները, մնացին բերանաբաց՝ երբ լսեցին դատավճիռը...

Նայեցան իրարու երես՝ կսկիծով ու արցունքով։

Այն օրէն ասդին՝ հայրս միշտ կըսէ.

— Է՛, տղա՛ք, գիտե՞ք ա՛ Պօղոս աղբրանց Մարտիկին ու Աստուրին գլխուն եկածը...։

ՀԷՅ ՃԱՆ ԼՈՒՍԻՆ

Լուսինն ելաւ այն լեռնէն,
լեռան բարձր կատարէն,
կլոր-կարմիր երեսով,
աշխարհին ըրաւ լոյսի ծով:
— Հէ՛յ ճան լուսին,
վա՛խ քու լոյսին,
մեռնիմ կլոր
քու երեսին:

Խաւարն խսկոյն չբացաւ,
ա՛լ գետինը չի կեցաւ,
լուսնի լոյսեն հալածուած՝
խոր ձորերուն մէջ մընաց:
— Հէ՛յ-ճան լուսին,
կարմիր լուսին,
մեռնիմ արծաթ
քու երեսին:

Բայց ամպերը ահագին՝
ճախանձեցան լուսնակին.
երկինքին եկան կապուտակ՝
լուսինն առին իրենց տակ:
— Հէ՛յ ճան լուսին,
խաւար լուսին,
կարօտ եղանք
մեզի քու լոյսին:



ԱՊՈՒ ՍԷԻՏԻՆ ԷՇԸ

1

Միամիտ ու բարի Ապու Սէիտը, գեղէն քաղաք կերթար՝ քաշելով էշը եռեւէն։



Երկու վարպետորդի դողեր՝ հեռուէն տեսան գեղացին, և որոշեցին անոր գլխուն խաղ մը խաղալ։

Դողերէն մէկը եկաւ, կամացուկ մը պախուցը հանեց իշուն գլխէն, անցուց իր գլուխը. միւս ընկերն ալ էշն առաւ, հեծաւ վրան ու քշեց։

Գեղացին բան չմացաւ, ու պախուցին ծայրը միշտ ափին մէջ՝ կը քալէր շարունակ։ Կը քալէր ու դողը կերթար եռեւէն։

2

Երբ էշ-մարդը տեսաւ որ՝ իր ընկերը հեռացաւ դողցած իշուն հետ, կանգ առաւ։

Գեղացին սկսաւ քաշել պախուցին ծայրէն, կարծելով թէ նորէն իշուն յամառութիւնը բռներ է։ Քաշեց, բայց տեսաւ որ կենդանին տեղէն չի շարժիր։ Նեռը դարձաւ։

Դարձաւ, ի՞նչ տեսնայ որ հաւնիս. աւանակին տեղ՝ ոտքով ու ձեռքով, ինձի պէս, քեզի պէս մարդ մը։

Գեղացին զարմանքէն ափ ու բերան կարած, հարցուց դողդղալով.

— Ո՞վ ես դուն... հապա աւանա՛կս... ինչ եղաւ աւանակս...

— Մի՛ յուզուիր, Ապո՛ւ Սէիտ, Աստծո՛ւ բարի ծառան. լսէ՛ ու զարմացիր... Ես եմ քու աւանակդ... և տես ինչ եկաւ գլխուս։ Ես ծերունի մայր մը ունիմ. օր մը գինով-գինով տուն եկայ ու նախատեցի զինք։ Մայրս բարկացաւ ու ըսաւ. «Զաւա՛կս, դուն նախատեցիր մայրդ, պէտք է որ քաւես։» Իսկ ես բարկացայ և ձեռք վերցուցի մօրս վրայ. վեցուցի թէ չէ՝ պատժուեցայ, ու նոյն րոպէին աւանակ դարձայ։ Եղաւ որ եկայ-ինկայ քու ձեռքդ և ծառայեցի քեզի։ Կերևի թէ մայրս բաւական սեպելով իմ ապաշխարհանքս, այս պահուս գթացեր է իմ վրաս և ուզեր է որ նորէն մարդ դառնամ. ու ահա դարձայ...»

Ապու Սէիտ, ապշահար ու բերանաբաց, մտիկ կընէր։ Վերջը ըսաւ.

— Ես քեզ մեղա՛յ, եղբա՛յր, որ դուն ինծի էշ եղար. քեզի բոռ բեռցուցի, աշխատցուցի, կարելի է անօթի ու ծարաւ պահեցի. բայց ինչ գիտնայի որ մարդ ես. մտքէս անգամ չէր անցներ։

Եւ ճարպիկ գողը անցաւ գնաց՝ հաղիւ իր խընդուքը բռնելով։

3

Միամիտ Ապու Սէիտը դարձաւ գեղ, դարձաւ իր տունը՝ չփոթած ու այլայլած։

— Ինչ է, ինչ ունիս, մա՛րդ, ըսաւ կնիկը՝ տեսնելով Ապու Սէիտին մտահոգ դէմքը։ Վախնա՛մ, բան մը պատահեցաւ քեզի ճամբան... ո՞ւր է հապա էշը։ Է՞շն ինչ եղաւ...

— Ա՛խ, կնի՛կ, մի՛ հարցներ, ըսաւ Ապու Սէիտ, և պատմեց լսածն ու տեսածը։

— Վա՛խ, վա՛խ, վա՛խ, ըսաւ միամիտ Ապու Սէիտին աւելի միամիտ կնիկը. ըսել է այսքան տարի՝ խեղճ մարդը աւանակի տեղ դնելով, չարաչար աշխատցուցեր ենք եղեր... ինչպէս պիտի աղատինք իր մեղքէն... վա՛խ, վա՛խ, վա՛խ...

Իսկ Ապու Սէիտ ա՛ն քան զարմանքի մէջ էր մնացեր, որ օրերով ձեռքը գործի չէր զարներ, կը նստէր իր դռանը առջև ու կը մտմտար։

4

Վերջապէս, կնիկը դարձաւ ըսաւ էրկանը.

— Է՛, մա՛րդ, արդ այսպէս առանց էշի չենք կրնար մնալ. արտը, այգին, պարտէզը՝ աշխատանք ունինք. ելի՛ր, քաղաք գնա և պազարէն էշ մը ծախու առ։

Ապու Սէիտ լսեց կնկանը խօսքը. եկաւ, գնաց քաղաք ու կեցաւ իշու պազարը։

Բայց, ինչ տեսնայ աղէկ. աւանակներու երամակին մէջ ահա իր հին էշը, որ ականջները կախ, խելոքիկ կեցեր է հոն։

Ապու Սէիտ որ տեսաւ էշը, մօտեցաւ և բերանը տանելով անոր ականջներուն մօտ՝ կամաց մը փսփսաց.

— Թշուառա՛կան, կերևի նորէն գինովցեր և մայրդ ծեծել ես ուզե՞ր, հա՞. բայց չէ՛, ա՛լ այս անգամ դիւրին դիւրին քեզ ծախու չեմ առնե՛ր...

ՏԵՐԵՒԱԹԱՓ

Ամայի դաշտին մէջ կանգնած է հին բարտին, կանգնած է միա-մինակ։

Օրը վերջանալու վրայ է, երկինքը կապարի գոյն է առացեր. հովը կը սկսի եղկել։

Խուլ ու միաձայն կը խշխշշայ բարտին։ Հովը՝ փրցնելով անոր թօշնած տերեւները, կը պտտցնէ դաշտին մէջ ու կը զարնէ գետին։

Բարտին կը ճօճի ու գանգատի պէս տխուր աղմուկ մը կը հանէ։

Տերեւները խումբ խումբ կը թափին վար, սաստիկ քամին հետ պտոյտներ կընեն, գետնին կը զարնուին ու նորէն վեր կը բարձրանան։

Քիչ մը կը հանդչի հովը. կը լռէ բարտին ալ։

Սակայն, կարճ դադարէ մը յետոյ՝ հովը նորէն կը փչէ, կը ցնցէ ճիւղերը, տակն ու վրայ կընէ բարտին։

Հիմա աւելի ու աւելի բարձր կը սօսաւէ ծառը. նոր նոր տերեւներ կը թափին վար, աւելի խիտ, աւելի՛ շատ...

Ահա բարտին վրայ ա՛լ տերեւ չի մնաց. մերկ ճիւղերը հեղ մը վեր կը անկուին, հեղ մը վար կը ծռին։

Հովը կը փոխուի փոթորիկի. տերեւները կը լողան ամպերու պէս ու կերթան հեռուները։ Ելաւ մրրիկը ու ցրուեց զանոնք դաշտին մէջ...

Կանգնած է մերկ բարտին. ու տխուր կը շառաչէ։ Բայց ահա կը լսուի չարագուշակ ու ահեղ ճայթիւն մը...

Ամայի դաշտին մէջ միայնակ ցցուած է կէս-մէջքէն կոտրած կոճղը...

Դուք ալ մրրիկ տեսա՞ծ էք. նկարագրեցէք բերանացի ու գրաւոր։

ՑՈՐԵՆՏԷՐՆ ՈՒ ՋԱՂԱՑՊԱՆԸ

1

Մէկը ցորեն տարաւ ջաղաց,
այդ ցորենէն ալիւր աղաց.
ջաղացպանն ալ բաղարջ եփեց,
թարմ ու տաք պաք բոնրէն հանեց.
— Եկո՛ւր պատմենք մէկ-մէկ լաւ բան.
որուն ըլլայ սուր, պերճաբան,
թող բաղարջը ուտէ անի.
ու չի նայիցք ճիշտ ու սուտի։»

2

Ցորենտէրն է՝ թէ ես ըսեմ.
ջաղացպանը՝ թէ կը լսեմ։
— Մենք ունէինք մեծ ու խոշոր
նրմանը փիչ մէկ հատ ախոր.
հերո՞ւ էր թէ մէկալ տարին,
հայրս հեծաւ ատ ախորին՝
գընաց գեղէն բերել ցորեն։
Դուն մ'ըսեր որ գայլ մը ձորէն
եկեր ձիուն կողն է կերեր.
հայրս անտառէն կերթայ բեռ-բե՛ռ
ուռիի ճիւղ կը կտրտրտէ
եւ իր ձիուն կող կը կերտէ.
հեծած նորէն իր ախորին,
կը պտտրտի ամբողջ տարին,
ու քառասուն լիտր ցորեն բեռցած,
ինքն ալ բեռին վրայ նստած,
կը կենայ մեր առջեւ դրռան։

Ելանք, բերինք մեկ ելարան,
հայրս վերեն մենք վար առինք,
բեռով ցորենն ալ ներս դրինք.
ան ցորենն է որ դուն հիմա
աս բաղարջն ես եփեր անա:

3

Ջաղացպանը՝ թէ ես ըսեմ,
ցորենտերը՝ թէ կը լսեմ:
— Մենք ունէինք մեկ մեղրանանն,
ուներ կոտոշ, համ ալ ականջ.
օր մը մեղուն փախաւ տունէն,
հայրս պարապ ըրաւ բանէն.
խեղճը գընաց, պըտրտեցաւ,
բայց խենդ մեղուն դէմը չելաւ:
Վերջը, հայրս դարձաւ գեղը,
առաւ մօրս մաստ ասեղը՝
տընկեց տանիքն իբրեւ վրան,
ու զոյգ ոտով ելաւ վրան.
տեսաւ որ հո՜ն, դաշտը հեռո՜ւն,
գուբանի են լրծեր մեղուն:
Տուն մը տընով դաշտ վազեցինք,
մեղուն գուբնէն ազատեցինք,
ու տուն բերինք բրռնած պոչէն,
բրռնած անոր զոյգ ականջէն:
Բայց դուն տես որ մեր առիւծը
ջախջախեր է անոր ուսը.
հայրս առաւ իր մեծ մուրճը,
կոտրեց մեկ մաղ տան ընկոյզը,
ու ընկոյզէն հանած իւղը

Քրսեց ուսին ցաւած տեղը:
Ամռան օր էր, սիրուն, պայծա՛ռ,
իսկոյն ուսէն բուսաւ մեծ ծառ.
ծառն որ տեսաւ մեկ մեծ ագռաւ,
եկաւ նիւղին վրայ թառաւ:
Հայրս հողի կոշտ մը առաւ,
այն ագռաւին գլխուն տրուաւ.
կոշտը փրշրած, դարձաւ մեկ հող,
մեկ օրավար վարելահող:
Երբ որ եկաւ հասաւ Մարտը,
ցորեն ըրինք մենք այն արտը.
մրտանք Ցունիս՝ ինկաւ քաղը,
ես վերցուցի սուր մանգաղը,
մրտայ արտը ու քաղեցի.
բայց լրսեցի ճիչ մը լացի:
Խեղճ աղուէսը, այն անմեղը,
ցորենին մէջ պառկած տեղը՝
իմ մանգաղիս դարձեր էր զոհ:
Այս ըրածէս ես ալ դըժգոհ,
բերի խեղճը ու հերքեցի,
մորքին մրսեն լաւ բաժնեցի.
բայց ի՞նչ կըսես՝ մորքուն տակէն,
ետի ոտին աջ կըրունկէն
թուղթ մը ելաւ ձեռքով ծալուած,
մէջն ալ գրչով ա՛յսպէս գրրուած.
«Է՛յ ցորենտեր, կուզե՞ս բարին,
բաղարջը տուր ջաղացպանին:»

Ցորենտերը հիքը կախած՝
ալիւրն առաւ ու տուն գընաց:

ԱՌԻԾԸ, ՇՆԱԳԱՅԼԸ ԵՒ ԱՂՈՒԷՍԸ

Առիւծը, շնագայլը և աղուէսը եղան երեք ընկեր, և երեք աղբօր պէս որսի գացին։

Գացին որսի ու բռնեցին կենդանի մը, եղնիկ մը և նապաստակ մը։

Լեռնէն իջան, անտառէն անցան, եկան նստեցան գետակի մը եզերքը։

Առիւծը դարձաւ, ըսաւ շնագայլին.

— Բաժնէ՛ որսերը և տուր ամէն մէկերնուս արդար բաժինը։

— Տէ՛ր, պատասխանեց շնագայլը, բաժանումէն դիւրին ի՞նչ բան կայ... կենդանիներու թագաւորին կինայ, եղնիկը՝ շնագայլին, իսկ նապաստակն ալ՝ ձեր ծառային...

Առիւծը այս բաժանումէն դժգոհ՝ թաթի այնպիսի զօրաւոր հարուած մը տուաւ շնագայլին, որ անոր գլուխը թռաւ մարմնէն, գլորեցաւ գետակին մէջ։

Այն ատեն, դառնալով աղուէսին, ըսաւ.

— Հիմա դո՛ւն բաժնէ, տեսնեմ։

Խորամանկ կենդանին, առանց վարանելու, այսպէ՛ս ըրաւ բաժանումը։

— Կենդանը, ըսաւ, Առիւծինն է՝ որ իր նախաճաշն ընէ։ Եղնիկն ալ Առիւծինն է՝ որ իր ընթրիքն ընէ։ Իսկ նապաստակը դարձեալ Առիւծինն է, որպէս զի ճաշէն ետք իր ակռաները մաքրէ։

— Կեցցե՛ս, ըսաւ անտառին թագաւորը. բայց ո՞վ սորվեցուց քեզի այդ արդար բաժանումը։

Աղուէսը պատասխանեց.

— Ջուրին մէջ գլորող գլո՛ւխը...

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԱՂՋԻԿԸ

1

Աւստրիոյ կայսրը կուզէր որ ընկճէ և իրեն հպատակեցնէ Զուիցերիոյ ազատասէր ժողովուրդը։

Զուիցերիացիները որոշած էին կռուիլ մինչև վերջը և երբեք հպատակ չդառնալ ուրիշին։

Անգամ մը, աւստրիացի զօրքերը եկան Զուիցերիոյ գեղերէն մէկուն վրայ, կողոպտեցին, և աւարը առած՝ կը վերադառնային։ Ցանկարծ, Զուիցերիացիները դուրս եկան անտառէն, յարձակեցան կողոպտիչներուն վրայ, ազատեցին անոնցմէ չատերը և ետ առին աւարը։

Այդ անտառին մէջ կային մէկ քանի ամուր և գաղտնի չէնքեր. Զուիցերիացիները այդ չէնքերուն մէջ էին պահուըտած և անկէ կը դիմադրէին։

2

Աւստրիացիները ուզեցին որ դուրս հանեն Զուիցերիացիները իրենց դիրքերէն, որպէս զի դիւրին յաղթեն անոնց։ Բայց, չէին գիտեր թէ քա՞նի հոգի էին անոնք։

Աւստրիոյ կայսեր զօրքերը գան, անտառին մօտերը, հովուհի մը և հարցուցին անոր.

— Ի՞նչ կընեն Զուիցերիացիները իրենց դիրքերուն մէջ։

— Ձեզի կը սպասեն,— պատասխանեց աղջիկը։

— Քանի՞ հոգի են։

— Ձեզի յաղթելու չափ կան։

— Քեզի կը հարցնենք թէ քանի՞ հոգի են անոնք։

— Օ՜, ինծի հարցնելու ի՞նչ պէտք կայ. լա՛ւ կըլլար որ վերջին կոիւին մէջ չփախէիք ու համբէիք զանոնք։

3

Աւստրիացիները զայրացա՜ծ աղջկան այս գաղտնապահ ու յանդուգն խօսքերէն, քաշեցին իրենց սուրերը և սպառնացան սպաննել զայն։

— Աղէկ կարճութի՛ւն է, ըսաւ աղջիկը արհամարհանքով, ինծի պէս անպաշտպան աղջիկ մը սպաննելը։ Եթէ արիւն թափել կուզէք, յարձակեցէ՛ք մեր զօրքերուն վրայ և առէք ձեր պատասխանը։ Անշուշտ, ձեզի համար հեշտ բան է որ փոքր աղջկան մը հետ գործ ունենաք՝ քան թէ մեր զինուորներուն. որովհետեւ, լաւ գիտէք թէ մեր զինուորները ձեզի պէս պարապ խօսողներ չեն...

Թշնամի զինուորները, զմայլելով այս հովիւ աղջկան քաջասրտութեան ու պաղարիւնութեան վրայ, չի համարձակեցան ձեռք դպցնել անոր։

ԱՇՈՒՆ Է

Տե՛ս, աշունն է, հունձքը քաղուած, կամնուած,
սիրուն դաշտը ալ չի ժրպտիր մեր դիմաց.
հիմա անշուք, քօղէ, զարդէ մերկ իսպառ,
ինկած է ցուրտ մահուան սեմը՝ ուժասպառ։

Չի կայ ծաղիկ ցօղաթաթաւ, շողշողուն,
ոչ թիթեռնիկ եւ ոչ միջատ գոյնզգոյն.
այն թարմ կեանքէն եռո՛ւն, զեռո՛ւն, կենսալից
կարծես մընաց սուգ ու թախիծ, սեւ կրսկիծ։

Դեռ այս քիչ էր, մեյ մ՚ալ յանկարծ մեկ ստուեր՝
կարմիր-դեղի՛ն, ծածկեց արտը վարէն վեր.
չոր խոզանը խրլեց բերնէն նախիրին,
այրեց, կիզեց, նստեցուց սեւ մոխիրին։

Դա՛շտ, թեւ մեզ ծածկեցին սեւ սաւանով,
մի՛ վրնատիր, ըսպասէ՛ դուն ապահով.
այդ մոխիրը իր մէջ թարմ ուժ կամփոփէ,
կու գայ գարուն, եւ դուն կանիս նոր կեանքով։

ԱՊՐՇՈՒՄԻՆ ԿԾԻԿԸ

1

Արքայաղունը այդ օրը լաւ չէր պատրաստեր իր դասերը, ուստի ուսուցիչը սաստիկ բարկացեր էր իրեն։

Իրկունը երբ պառկեցաւ իր անկողնին մէջ, ըսաւ ինքն իրեն. — «Ինչ գէշ բան է պզտիկ ըլլալը. դաս սորվիր, գիր գրէ, աշխատիր... ինչո՞ւ օրերը չուտ չեն անցնիր որ մեծնամ, խոշոր մարդ ըլլամ։ Ա՜խ, եթէ ձեռքէս դար ու ժամերը, օրերը, շաբաթները չուտ չո՛ւտ փոխէի, և մեծնայի՛, անմիջապէս մեծնայի՛...

Այսպէս մտմտաց, լացաւ, լացա՛ւ ու քնացաւ։

Առտուն կանուխ՝ երբ արթնցաւ, տեսաւ որ քովը նախշուն կծիկ մը կայ.— գոյնզգոյն ապրշումէ, սիրուն, փայլուն կծիկ մը։

— Ա՜հ ինչ սքանչելի, ա՜հ ինչ անուշ խաղալիկ է, ըսաւ տղան և ձեռքը երկնցուց անոր։

2

Ձեռքը երկնցուց թէ չէ՝ մէյ մըն ալ տեսնես ձայն մը եկաւ ականջին. սուր, տարօրինակ ձայն մը.

— Զգուշացի՛ր, զգուշացի՛ր, պզտի՛կ,— կըսէր ձայնը։ Քու անխոհեմ ձեռքդ թող անզգուշութեամբ չի մօտենայ ինծի։ Գիտե՞ս թէ ի՞նչ եմ ես. իմ վրաս կծկուած է քու օրերուդ թելերը. երբ իմ վրայէս մէկ թել քակուի՝ քու կեանքիդ մէկ օրն է որ կանցնի։ Երէկ կը դանդաղէիր որ ինչո՞ւ օրերդ չուտ չեն անցներ՝ որպէսզի չուտով մեծնաս. ա՜հա քեզի հրաման, քա՛կէ իմ թելերս և քու օրերդ պիտի անցնին արագ-արագ, ակնթարթի պէս. քակէ՝ ինչքան որ կուզես, միայն լա՛ւ մտածէ որ՝ եաքէն, քակուած թելը հեղ մըն ալ չես կրնար փաթթել վրաս...

Մանուկը՝ որ առաջ ձեռքը երկնցուցեր էր կծիկին, ետ քաշեց յանկարծ, լսելով այս խօսքերը։

Նայեցաւ անոր, նայեցաւ երկար տեսն, և չէր համարձակեր ձեռք դպցնել։ Բայց, սիրտ առաւ կամաց կամաց և ըսաւ ինքնիրեն.

— Քակեմ թել մը, տեսնեմ ի՞նչ կըլլայ...

Բռնեց թելի մը ծայրէն ու քակեց զայն։

— Ա՜հա մէկ օրս գնաց. բայց ի՞նչ կելլայ մէկ օրէն. քակեմ իրարու ետևէ միւսներն ալ...

3

Ու արքայաղունը քակեց, քակե՛ց թելերը, քակեց այնչափ, որ յանկարծ տեսաւ թէ մեծցեր է, եղեր է խոշոր մարդ. ունի պէս ու մօրուք։

Դարձեր է թագաւոր. իր քով նստեր են նախարարներ

ու խորհրդականներ, և իրեն հետ կը խօսին կառավարութեան գործերուն վրայ։

Առաջ չատ ուրախացաւ. բայց երբ իր մայրիկն ու հայրիկը հարցուց, իրեն պատասխանեցին թէ անոնք չատունց մեռած են։ Սկսաւ լալ։ Ինչ ամօթ բան որ թագաւոր մը լայ. իրեն ըսին թէ անվայել բան է թագաւորի մը լալը. եթէ մինակութենէ չատ կը նեղուի ու կը ձանձրանայ, իրեն թագուհի մը գտնեն։

Թագաւորը հաւանութիւն տուաւ և մարդ խրկեց որ՝ երթան դրացի թագաւորին աղջիկը ուզեն։

4

Դեսպանները գացին։

Կանցնի օր մը, երկու օր, չեն գար։ Թագաւորը անհամբեր է. ձեռքը կերկնցնէ կծիկին.

— Քակուի՛ր, չու՛տ քակուիր, իմ օրերուս թելը՛։

Ահա թագաւորը ամուսնացեր է. ի՞նչ աննման, ի՞նչ բարի թագուհի մը ունի։

Ծեր են մանուկներ. սիրուն, գիրուկ, քնքուշ մանուկներ։ Բայց որքա՜ն պզտիկ են և որքա՜ն ուշ պիտի մեծնան։ Կը գգուէ զանոնք, հետերնին կը խօսի, բայց անոնք կուլան միայն ու կը ճչան։

— Չէ՛, ո՛վ պիտի սպասէ տարիներ ու տարիներ՝ որ մեծնան այս պզտիկները, չէ՛, թող չուտ մեծնան, թող լեզու ելլան, թո՛ղ քալեն, մէկ մէկ կտրի՛ճ երիտասարդ դառնան...

Եւ թագաւորին մտանները անդադար կը քակէին կծիկը, կը քակէին թելերը։

Եւ իր օրերն ու իր տարիները կը փախին իր աչքերուն առջեւէն՝ ինչպէս որ կը փախի մեղուապար մը փոթորիկին առջեւէն։

Մէկ փափագը որ կը գոհանար՝ անոր ետեւէն կուգար ուրիշ բաղձանք մը, այդ բաղձանքին ետեւէն ուրիշ կարօտ մը։ Ու կը քակուէր, կը քակուէր կծիկը անդադար։

5

Վերջապէս, օր մըն ալ տեսաւ որ ապրշումի ոսկեգոյն թելերուն տակէն կերեւայ կծիկին ճերմակ քուրջը։

Թելերը հատնելու վրայ էին. կը վերջանային թագաւորին օրերը։

Ձեռքերը դողդողացին և վար ձգեց կծիկը՝ յանկարծակիի եկած ու սարսափահար։ Բայց, անմիջապէս վեր վերցուց ու դրաւ զայն ապահով տեղ մը։

Չէր համարձակեր մինչև անգամ անոր նայելու, վախնալով որ թելերը կը քակուին, և քակուելով կը հատնին։ Կուզէր որ բռնէ իր սրտին բարախումն ու կեցնէ, որպէսզի երի՛ւարի իր կեանքը, որպէսզի չուտով չի վերջանայ։

6

Դրած էր կծիկը իր սեղանին վրայ, կրթներ էր արմուկին և կը դիտէր զայն։

Եւ երբ կծիկը կամաց կամաց կը քակուէր, թագաւորին միտքը ինկան անցած օրե՛րը. հեղ մըն ալ յիշեց զանոնք։

Եկան իր կեանքին բոլոր օրերը ու մէկիկ մէկիկ անցան իր աչքին առջեւէն։ Բայց անոնք ամէնքն ալ դատարկ, դատա՛րկ էին... Ահա ծերացեր էր ինք. ճակատը խորշոմեր էր, մէջքը կորացած, ուսերը ազեղած։ Կէնճ ու կանաչ օրերը անցե՛ր, գացեր էին անդարձ, ու ա՛լ եա պիտի չդային։

Ինչ չէր տար՝, եթէ կարող ըլլար կծիկին վրայ նորէն քանի մը թել փաթթել, նորէն դառնալ իր երիտասարդ օրերուն։

Բայց, ահա իր ականջին եկաւ սուր ու տարօրինակ ձայն մը, այն ձայնը՝ որ լսեր էր շատ առաջ, երբ դեռ կծիկը չէր քակուեր։

Ու ձայնը կըսէր.

— «Է՛յ, իշխա՛ն, ուզածդ անկարելի է այլեւս։ Գացող օրերը ա՛լ եա չեն դառնար։ Քեզի պէս որքա՛ն ուրիշ անխելք մարդիկ կան, որ իրենց օրերը կը վատնեն այսպէս։

«Կեանքդ պարապ կերեւնայ քեզի. այնպէս չէ՞։ Իրաւունք ունիս. դուն գեղեցիկ գործեր չի կատարեցիր, ազնիւ ու լաւ բաներ չբրիր, որպէսզի հիմա ուրախ ըլլայիր։

«Օրերդ անցուցիր անգործ, պարապ բաներով, և հիմա կը տեսնես որ ամբողջ կեանքդ ոչինչ, ոչինչ է...։

«Դուն ծոյլ էիր, անոր համար ալ ուզեցիր որ օրերդ շուտ անցնին։ Ահա անցան, և հիմա կը զղջաս։ Կը զղջաս, բայց ա՛լ ճարը չի կայ...»

Դէպի դպրոց

ՀԱՅ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿ-ՍՍՌ
Ա. ՄԱՍԻՍՅԱՆ

ՍԱՐԴՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Խանութին մէջ խանութպանն է
նստեր կտաւ կը վանառէ,
«Վա՜յ, ես ջուլհակ, ըսաւ սարդը,
կըտաւ ծախէ յիմար մա՞րդը.
գիշերը գայ խերով-բարով,
կըտաւ գործեմ ես թոփերով:»
Եւ խանութին մէջ՝ իր տանը,
սարդը ճիմնեց իր ոստանը:
Հանեց իլիկ,
մանեց թելիկ,
հաշեց հենքը,
չափեց լայնքը
ու երկայնքը.
ելաւ, մտա՛ւ,
գործեց կըտաւ
այնքան արա՛գ,
ա՜յնպէս բարակ...:
Լուսաբացին
դուռը բացին,
մըտան խանութ՝
մէջն աւլեցին.
պատ, լուսամուտ
որ սրբեցին,
սարդն իր բոյնով
դուրս նետեցին:



— Մեղո՛ւ, պոռաց կատղած սարդը,
նախանձոտ չէ՞ այս չար մարդը.
քե՛զ կը յանձնեմ ես այս դատը,
զանազանե՛ լաւն ու վատը.
չուզեր հանիմ, ոչ ալ կատակ,
ո՞ր կըտաւն է նուրբ ու բարակ՝
աս սարդի՞ն
թէ մարդունը:
— Քուկդ է բարակ, վարպե՛տ սարդիկ,
ըսաւ մեղուն, բայց որ մարդիկ
քու կըտաւէդ լաթ չեն կարեր,
շատ բարակ է, տամ չի պահեր:

ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

1

Ես տանըհինգ տարեկան էի, բայց դեռ դպրոց չէի գացեր։ Հայրս մինակ էր, հազար ու մէկ հոգի ու ցաւի տէր. ես մեծ որդին էի ու պիտի օգնէի իրեն։

Առտուները՝ մինչդեռ մեր դրացիներուն տղաքը զուարթ խումբերով, ուրախաձայն կը վազէին դպրոց, ես հօրս հետ, մեր ճանչան սայլը առջևս ձգած՝ կերթայի դէպի դաշտ։

Այդ ժամերուն, միշտ սիրտս կը լեցուէր, աչքերս կը թացնային. իսկ հայրս, գլուխը կախ ձգած, խորունկ մըտմտուքի մէջ, ինքնիրեն կը չչնչէր. — Ա՛խ, մինակութեան տէրը մեռնի...

Խե՛ղճ հայր... կը տանջուէր իմ կրած զրկանքիս համար։

Իրկուն մը, ուշ աշնան, երբ վարուցանքը դեռ չէինք վերջացուցեր, հայրս ըսաւ ինծի.

— Գնա՛ դպրոց, զաւա՛կս, դուն ալ գնա՛, ես մինակ կաշխատիմ։ Աստուած ողորմա՛ծ է...

Եւ ես գացի դպրոց։

2

Ընկերներուս մէջ ամէնէն տարիքոտն էի, տանըհինգ տարեկան՝ ութը-տասը տարեկան մանուկներու մէջ. բայց դարձեալ ես երջանիկ էի որ ուսում պիտի սորվէի։



Մեր դպրոցը կը գտնուէր գեղէն կէս ժամ հեռու, դալարաւէտ բլուրին կուրծքը, հինաւուրց վանքի շրջափակին մէջ։

Ուսուցիչները երկուք էին. մէկը վանահայրն էր, Թոմա հայր-սուրբը, կորաքամակ, եօթանասուն տարեկան ծերունի մը։

Ամէն անգամ երբ հայր-սուրբը դասարան մտնէր, ես միշտ կը յիշէի մեր ժամուն վարագոյրին վրայ նկարուած ճգնաւորը։ Անոր պէս թաւ, երկար յօնքեր ունէր, որոնց տակ աչքերը հազիւ կը պլպլային։

Շատ երկար ու ձիւնի պէս ճերմակ մօրուքը՝ փռուեր էր կուրծքին վրայ, և գլխի իւրաքանչիւր շարժումին՝ կօրօրուէր աջ ու ձախ։

Հայր Թոման երևալուն պէս՝ իսկոյն կը դադրէր տղոց իրարանցումը, հրմշտուքն ու ճիչը։

Մինչև իսկ նախարապան Մարտիկին տղան՝ ան չիլ,

յանութիկունք Գաբօն, որ միշտ ասոր-անոր ուսին վրայ էր, որ միշտ աս ու ան կը հարուածէր կամ հարուած կընդունէր, շտապով կը վազէր իր տեղը, հանդարտ կը նստէր, կը կծկուէր յանցաւորի պէս, աշխատելով թեւովը միշտ թաց քիթը սրբել։

Քնաթաթախ ու կակազ Սրքէն, որ դասամիջոցներուն անընդհատ հաց կուտէր, հայր-սուրբին երեւալուն պէս՝ բերանին բոլոր պատառը մէկ անգամէն կը կլլէր, առանց ծամելու, և ձկնկուլի պէս վիզը կերկնցնէր, կամ կուրծքը կը սեղմէր՝ չհազալու համար։

3

Երբ հայր-սուրբը կը նստէր իր տեղը, ու սովորութեանը պէս, վեր կը բարձրացնէր աջ ձեռքը, բոլոր աչքերը կուղղուէին իրեն։

— Զաւակնե՛ր։— կըսէր անիկա. լսեցէ՛ք ինձի. Գաբո՛, դուն ալ լըսէ. Գա՛լօ, դուն ալ լսէ. Սրքէ՛, որդի՛, դուն ալ կը լսես, այնպէս չէ՞... Գառնի՛կ, մի լար, աղա՛ս, քեզի նորէն զարկեր են. ո՞վ է զարկեր Գառնիկին... ու հայր-սուրբը կը ժպտէր։

Գառնիկը մեր ամենափոքր ընկերն էր, որ չնչին պատճառով մը կուլար։ Ու հայր-սուրբը կը խօսէր.

— «Ատելութիւնը անէծք է. մարդիկ եղբայր են ու չեն գիտեր որ եղբայր են. ատոր համար՝ կը բզկտեն, կը արորեն, կը լափեն զիրար։

«Ո՞վ է տեսեր եղնիկին լացը՝ երբ անիկա վիրաւոր ու արիւնաքամ, կիջնայ քարքարուտ լեռան վրայ։

«Ես տեսեր եմ եղնիկին լացը՝ երբ անիկա վիրաւոր ու արիւնաքամ, կիջնայ քարքարուտ լեռան վրայ։

«Ես տեսեր եմ և լացեր եմ եղնիկին հետ։

«Ո՞վ է լսեր սարեակին ճիչը, երբ անիկա կը թպրտայ

բաղէին ճանկերուն մէջ՝ արիւնոտ սիրտը բաց և օրհասն աչքերուն։

«Ես լսեր եմ բաղէին ճանկերուն մէջ թպրտացող սարեակին ճիչը. ես լսեր եմ և լացեր սարեակին հետ։

«Մարդիկ եղբայր են ու չեն գիտեր որ եղբայր են. ատոր համար՝ դարձեր են որսորդ ու եղնիկ, բաղէ ու սարեակ։»

Քիչ բան կը հասկնայինք, բայց շատ բան կը զգայինք այս խօսքերէն։

Այսպէս էր մեր հայր-սուրբը. այսպէս դաս կուտար։

Մենք միշտ պատրաստ էինք՝ ժամերով լսելու զինք։

1. Դուք ալ վանք տեսե՞ր էք։ Ի՞նչպէս է ձեր տեսած վանքը։
2. Ձեր գեղին կամ ձեր քաղաքին մօտ ալ վանքեր կա՞ն. եթէ այո՛, նկարագրեցէ՛ք զայն, անոր վանահայրը, պարտէզը, մատուռը, ևն.։

ԺԱՄԱՆԱԿԸ



«Թիք-թաք, թիք-թաք։» Ո՞վ է այդ։
— Ժամանակն է որ կերթայ.
անոր ոտքի ձայնն է այդ,
թիք-թաք, թիք-թաք,
որ կը լսուի շարունակ։

— Ժամանակը, ո՞վ է այդ։
— Ցուպը ձեռքին՝ խուլ մէկ մարդ,
շալակն առած մէկ մեծ պարկ,
թիք-թաք, թիք-թաք,
որ կը քալէ շարունակ։

ԱՇԽԱՐՀՔԻ ԱՄԷՆԷՆ ՊԷՏՔԻ ԲԱՆԸ

1

Ժամանակով հեռու երկրի մը մէջ կապրէր իմաստուն իշխան մը։ Ունէր երեք աղայ։

Եղաւ որ իշխանը ծերացաւ և ուզեց, դեռ կենդանի եղած ատեն, իշխանութիւնը յանձնել իր երեք աղոցմէ ամէնէն խելացիին։

Ասոր համար, օր մը կանչեց երեք զաւակները, և ըսաւ անոնց.

— Սիրելի՛ զաւակներս, կը տեսնէք որ ձեր հայրը ծերացեր է և այլ չի կրնար կառավարել երկիրը։ Ես միտքս դրած եմ հրաժարիլ իշխանութենէս, միայն թէ կատարուէր իմ մէկ փափաքս։ Հիմա, ձեզմէ ո՛վ որ կատարէ այդ փափաքը, պիտի ըլլայ իմ յաջորդս և պիտի կառավարէ իմ ժողովուրդս։

— Ապրած կենայ մեր սիրելի հայրը,— ըսին աղաքը միաբերան. թող ըսէ իր փափաքը և մենք պիտի կատարենք զայն մեր բոլոր կամքով...

— «Ահա կը տեսնէ՞ք այն մեծ, այն ահագին չտեմարանը՝ որ ես չինել տուեր եմ շատուցս։ Իմ միտքս էր որ անոր մէջ լեցնեմ աշխարհքի ամէնէն պէտքի բանը և անով երջանկացնեմ իմ ժողովուրդս։ Այդ չտեմարանը մինչև հիմա պարապ կը մնայ։

«Հիմա՛, ձեզմէ ո՛վ որ լեցնէ զայն աշխարհքիս ամէնէն պէտքի բանովը, լեցնէ բերնէ բերան, առանց մաղի չափ պարապ տեղ մը ձգելու՝ անիկա թող ըլլայ իմ ժառանգս։

«Առէ՛ք գանձերէս՝ ինչքան որ կուզէք, և ամէն մէկերնիդ առանձին-առանձին ճամբայ ինկէք։ Ճամբայ ինկէք քաղաքէ քաղաք, աշխարհքէ աշխարհք, գտէ՛ք այդ բանը և լեցուցէ՛ք իմ չտեմարանս։ Ձեզի եօթն անգամ քառասուն օր միջոց կուտամ։»

Զաւակները համբուրեցին իրենց հօրը ձեռքը և ճամբայ ելան։

2

Անոնք եօթն անգամ քառասուն օր ոտք քաշեցին գեղէ գեղ, քաղաքէ քաղաք. տեսան ուրիշ աշխարհներ, ուրիշ մարդիկ և ուրիշ սովորութիւններ, ու ժամանակին եկան կեցան իրենց հօրը առջև։

— Բարի՛ էք եկեր, որդի՛ներս, տեսնամ, գտե՞ր էք աշխարհքի մէջ ամէնէն պէտքի բանը։

Խոնարհութիւն ըրին աղաքը իրենց հօր, և ըսին.

— Այո՛, գտեր ենք, հայրի՛կ։

Եւ հայրը առաւ անմիջապէս իր աղաքը և գնաց անոնց հետ՝ չտեմարանին առջև։

Այն տեղ հաւաքուած էին բոլոր պալատականները և ժողովուրդը։

Իշխանը մօտեցաւ չտեմարանին դռանը, բացաւ զայն և ըսաւ իր մեծ ղօշն.

— Ինչո՞վ կը լեցնես այս ահագին չտեմարանս, սիրելի՛ որդեակ, ի՞նչ բանով՝ որ աշխարհքի ամէնէն պէտքի բանն ըլլայ։

Մեծ որդին գրպանէն հանեց բուռ մը հացահատիկ և երկնցնելով հօրը, ըսաւ.

— Հացո՛վ կը լեցնեմ այս անագին չուամարանը, հա՛յր։ Ինչ կայ աշխարհքիս մէջ հացէն աւելի պէտքի բան. մէկը կրնա՞յ առանց հացի ապրիլ։ Շատ թափառեցայ, շատ բան տեսայ, բայց հացէն աւելի պէտքի բան չի գտայ։

Այն ժամանակ, հայրը հարցուց միջնեկ զաւկին.

— Ասէ՛ տեսնեմ, դո՞ւն ինչով կը լեցնես այս խոշոր չուամարանը, զաւա՛կս. ի՞նչ բանով՝ որ աշխարհքիս ամէնէն պէտքի բանն ըլլայ։

Եւ միջնեկ որդին գրպանէն հանեց բուռ մը հող և երկնցնելով իր հօրը, ըսաւ.

— Հողո՛վ կը լեցնեմ այս անագին չուամարանը, հա՛յր։ Աշխարհքիս մէջ հողէն աւելի ի՞նչ պէտքի բան կայ։ Առանց հողի՝ հաց չի կայ. առանց հողի՝ մարդ չի կրնար ապրիլ։ Շատ թափառեցայ, շատ բան տեսայ, բայց հողէն պէտքի բան չի գտայ։

3

Այն ժամանակ, հայրը հարցուց կրտսեր զաւկին.

— Դո՞ւն ի՞նչով կը լեցնես այս անագին չուամարանս, զաւա՛կս. ի՞նչ բանով՝ որ աշխարհքի ամէնէն պէտքի բանն ըլլայ։

Կրտսեր որդին հաստատ քայլերով մօտեցաւ չուամարանին, անցաւ սեմէն ներս և գնեց մեծածաւալ, մաւթ ու խաւար չուամարանը։

Ամէնքը հետաքրքիր անոր կը նայէին։

Ապա, գրպանէն քաշեց փոքրիկ մոմ մը, հրանոթը կայծքարին զարկաւ, կայծ հանեց ու վառեց մոմը։

Ամէնքը կը նայէին ու բան չէին հասկնար։

— Տէ՛, ըսէ՛, որդի՛ս, ինչո՞վ կը լեցնես այս չուամարանը՝ հարցուց իշխանը անհամբեր ձայնով։

— Լոյսո՛վ կը լեցնեմ այս անագին չուամարանը, իմա՛ստուն հայր, պատասխանեց տղան։ Շատ թափառեցայ, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սորվեցայ, բայց լոյսէն աւելի պէտքի բան չի գտայ։ Առանց լոյսի՝ հողը հաց չի բուսցներ, առանց լոյսի՝ երկրին վրայ մարդ չապրիր։ Աշխարհքիս մէջ լոյսէն ու գիտութենէն աւելի պէտքի բան չեմ գիտեր ես։ Ես լոյսով կրնամ բերնէ բերան լեցնել ո՛չ միայն քու այս անագին չուամարանդ, այլ քու բոլոր թագաւորութիւնդ՝ մէկ ծայրէն միւսը։

— Ապրի՛ս, գոչեց ուրախացած հայրը. քեզի է արժանի իմ գահս ու իշխանութիւնս, քանի որ լոյսով ու գիտութեամբ պիտի լեցնես երկիրդ ու քու հպատակներդ։

— Ապրա՛ծ կենայ մեր եղբայրը, պոռացին ուրախացած երկու եղբայրները. ճիշտ է որ աշխարհքի ամէնէն պէտքի բանը անիկա գտաւ։

— Ապրա՛ծ կենայ մեր լուսամիտ իշխանը, պոռացին ուրախացած պալատականներն ու ժողովուրդը։

Հայրը գրկեց իր կրտսեր որդին, համբուրեց ճակատը և անոր ուսերուն վրայ ձգեց իշխանական ծիրանին։

Եւ ժողովուրդը քառասուն օր, քառասուն գիշեր՝ երգեց ու պարեց, որ ունեցաւ լուսամիտ իշխան մը։

Լուսամիտը բարդ բառ է. ուրիշ ի՞նչ բառեր կրնաք գտնել՝ որ ածանցուած կամ բարդուած ըլլան **լոյս** արմատէն։

ՀԱՅՐԵՆԻ ՕՃԱԽ

1

Բարե՛ւ քեզ, խրրնի՛ր, հայրենի օճա՛խ,
իմ նախնիքներուս տուն, տեղն ու պուճախ.
տաշտ ու փեթակէդ ցորենն ու գարին,
հացն ու ալիւրը դուրս կը թափէին:

Բարե՛ւ ձեզ, բարե՛ւ, ա՛յ գոմ ու մարագ.
երնե՛կ ան օրուան, որ ձեր յարկին տակ
նախշուն կովերը, գոմէշն ու մատակ,
եզն ու ձին զոյգ-զո՛յգ, կայտառ եւ ուժեղ,
կուշտ խոտ կուտէին՝ ամենքն իրենց տեղ:
Անոնք մեր տանը սիւնն էին ամուր,
դաշտի ու արտի ընկե՛ր նեղ աւուր:

Ձե՛զ ալ շատ բարե՛ւ, կալ ու կալատա՛կ,
մառան ու կարաս, մեր դրուան առուա՛կ.
դուք շեն էիք միշտ, արեւ ու բա՛րի,
նոր կեանք կառնէիք դուք ամեն տարի:
Կը յիշեմ ահա թէ ի՛նչպէս դաշտեն
տասնեակ սայլերով խոտ նրուրնչալեն՝
կուգար մեր բակը ու հոն կը դիզուէր,
կանգուն մրնալով մինչեւ ձիւն-ձրմեռ:

2

Բարե՛ւ քեզի ալ, ա՛յ սիրուն գուբան,
դուն մեր օճախին հինաւուրց պաշտպան.
ի՛նչպէս կը սիրեմ քու մանդ ու շրդաղ,

քու խոփդ ու ձեւիչ, եւ լուծերդ յաղթ:
Միտքս է թէ գարնան եզներդ անգին
երբ աշխատանքի պէտք է տանէին,
ի՛նչպէս կը գրգուէր զանոնք աղբօր պէս՝
ողորմած-հոգի պապս Օհաննէս:

3

Ան ալ մեր տրնկած պարտէզն է ահա,
որ հիմա այսպէս անտէր կը մրնայ...:
Ան ալ մեր անգին
խաղողի՛ այգին,
հատրնտիր այգին մեր շրջակայքի,
թագն ու պրսակը մեր անշարժ կայքի.
ա՛խ, ինչո՞ւ այսպէս ամեն թուփ ու ծառ
անտիրուքենէ եղեր են ցանցառ.
ինչո՞ւ թրփերուն ա՛լ խաղո՛ղ չի կայ,
արդեօք խաղողը ա՛լ քաղո՞ղ չի կայ...:
Ահա արտերը,
դաշտին զարդերը,

չարքաշ գիւղացուն զոյգ աչքին լոյսը,
անոր քիւլֆաքին ապրուստին յոյսը։
Միտքս է թէ ինչպէ՛ս առատ էր տարին,
կը ծրփար անոնց ցորենն ու գարին.
ատոք հասկերը կանգնած գրլխիկոր՝
կը սօսաւէին, կրսէին օր-օ՛ր։
Եւ բազկատարած հայրրս արտին քով՝
փառք կուտար Աստծու՝ դողդոջ շրրթունքով։
Երնէ՛կ այն օրի՛ն,
երնէ՛կ բոլորին։

ՄԵԾ-ՄԱՅՐՍ

1

Կարծես տարիներ չեն անցեր. կարծես դեռ երէկ ըլլար։

Կը տեսնեմ անա իմ պառաւ մեծ-մայրս, նստած իր սովորական տեղը, մեր խրճիթին դռան դէմ։ Վիթխարի ընկուզենին կը պատսպարէ անոր ալեւոր գլուխը՝ ամառնային արեգակին տաք ճառագայթներէն։ Նստած է, ինչպէս միշտ, լուռ ու մտախոհ։

Մեծ-մայրս կը կոչուէր Շուշան. անունը Ժառանգեր էր իր մօրմէն։ Չնայելով իր պատկառելի տարիքին, ամէնևին չէր կորսնցուցեր իր ժրութիւնը. առաւօտէն մինչև իրկուն անդադար շարժման մէջ էր։

Իր ամէնատես աչքերը ամէն բան կը նկատէին. իր անհանգիստ լեզուն ամէն բանի մասին հաշիւ կը պահանջէր։

Մինչև մահը, անիկա ձեռքէն չի թողուց իր կառավարութեան գաւազանը՝ անագին փայտէ չերեփը, որով ընթրիքի ու ճաշի ժամանակ կերակուր կը բաժնէր։ Մինչև մահը, մեր տան թէ՛ մեծը և թէ՛ փոքրը, ամէնքս խոնարհութեամբ կը հպատակէինք իր հրամաններուն։

Մեծ-մայրս չատ աշխատասէր կին էր։ Կը յիշեմ որ՝ գիշերուան մեծ մասը, նստած այծի մորթիին վրայ, կը դնէր իր առջև ջարը, և ոսկրացած ձեռքով, կը դարձնէր ճախարակին թեւը. բամպակէն թել կը պատրաստէր։ Եւ ինծի կը թուի թէ՝ դեռ ականջիս կուգայ պառաւին տխուր ու դողդոջուն երգը. ինծի կը թուի թէ դեռ կը լսեմ անոր նահատակական մեքենային խուլ ճռճռոցը։

2

Մեր գիւղին մէջ մեծ-մայրս կը համարուէր խելացի պառաւներէն մէկը. իսկ իր տան մէջ անոր խմաստութիւնը կը հասնէր անսխալականութեան։

Ճշմարիտ ըսելով, ես ալ փոքր ժամանակս՝ համոզուած էի որ անիկա ամէն բան գիտէր։

Մեծ-մայրս գիտէր թէ ինչ նշանակութիւն ունի այս ու այն երազը։ Գիտէր թէ ինչ կը նշանակէ երբ «կը խաղայ» մարդուն մարմնին այս ու այն մասը։ Կը հասկնար

անծեղին լեզուն, երբ անիկա կրկնար մեր տանիքին պատին վրայ։

Այո՛, մեծ-մայրս շատ բան կը հաւնար։ Կը պատմէր ինծի թէ ինչպէս պիտի հանի այխարտիս վերջը, կամ ե՛րբ պիտի գայ Նեռը։ Կըսէր թէ անիծուած Նեռը պիտի գայ էշ մը հեծած. անոր իշուն ականջները այնքան երկար են որ՝ մէկ ականջին ծայրը կը հասնի մինչև արևմուտք, իսկ միւսինը՝ մինչև արևելք։ Կըսէր թէ այն ատեն մէջտեղ պիտի ելլեն «աճուճ-մաճուճները», թէ անոնք այնքան փոքր թզուկներ են՝ որ իմ կօշիկներս կրնային անոնց բնակարան դառնալ։

Բայց ես աւելի կը սիրէի մեծ-մօրս հէքիաթները, որ գիշերները կը պատմէր։ Երբեմն, մէկ անգամ սկսած հէքեաթը հազիւ կը վերջացնէր մէկ շաբթուան մէջ։ Ա՜խ, ինչ լա՜ւ կը պատմէր. ես միշտ հետաքրքրութեամբ մտիկ կընէի, — մտիկ կընէի ու կը քնանայի։

Իսկ երբ մեծ-մայրս մեռաւ, անկէ չէի վախնար։ Այնպէ՛ս հանգիստ պառկած էր դագաղին մէջ, որ կարծես կը քնանար։ Անոր դէմքը դարձեալ այնպէս բարի էր, ինչպէս միշտ։ Երբ գինքը թաղեցին, ես շատ լացի։

1. Դուք ալ մեծ-մայր ունի՞ք։
2. Պատմեցէք թէ ինչպէս է ձեր մեծ-մայրը, ինչ լաթեր կը հագնի, ինչ գործ կընէ և ինչ հէքեաթներ կըսէ ձեզի։
3. Դո՞ւք ինչ էք զգացեր, երբ մեռած է ձեր մեծ-մայրը։

ԿԱՌԱԽՈՒՄԲԸ

Դա՛ - գա՛ - դո՛ - գէ՛,
դա՛ - գա՛ - դո՛ - գէ՛,
ՖրՀ - ՖրՀ - ՖրՀ,
Ֆո՛ւ - Ֆո՛ւ - Ֆո՛ւ...

Դրդրդալեն ինք ահա,
կառախումբն է որ կուգայ.
ու կը Ֆրշայ,
կը Ֆշֆշայ,
կը հեւայ։

Կուգայ արագ, համարձակ,
ճամբան հարթ է, լայնարձակ։
Սար ու ձորեր ձայն կուտան՝
երբ որ կ՚անցնի մեքենան։

Ի՜նչ ծուխ ու բոց,
ի՜նչ գոլորշի.
ի՜նչ դրդրդոց,
հով ու փոշի։

Ֆրրր... Ֆրրր... Ֆրրր...

վրՀզ զ զ զ
ու՜ ու՜ ու՜ ու՜...

ԱՅԾԱՐԱԾ ԵՂՕՆ

1

Գարնան արձակուրդներուն՝ ես ստիպուած էի մնալ քաղաքը։

Հեռու էր մեր գեղը, բայց պատճառը հեռաւորութիւնը չէր. այն էր որ՝ լեռնային գեղ էր։ Մեր գարունը ուշ կուգայ, գալէն յետոյ ալ կը տանջէ մարդիկ՝ իր ձիւնախառն անձրեւներով, թանձր մշուշներով և մանաւանդ անտանելի դեղովը։

Բայց, այս տարի, Զատիկն ուշացաւ։ Ապրիլ 15 ին մեզ արձակեցին մինչև 29 ը, իսկ ասիկա այնպիսի տարն մըն է՝ որ նոյնիսկ մեր մառախլապատ ու ջրոտող լեռներն ալ կը չորնան։

Եղբայրս եկաւ. ինձի համար ձի մը բերաւ. իմ դրպրոցական կեանքիս մէջ առաջին անգամն էր որ, Զատկին, տուն կերթայի։

Ասոր համար ալ, երբ մայրս տեսաւ՝ գրկեց զիս մեծ հրճուանքով։ Անիկա հաշուեր էր որ՝ Զատիկը վեց անգամ մտեր է մեր տան դռնէն և վեց անգամին ալ զիս մեր օճախին մէջ չէ գտեր։

— Մահը մերն է, մենք մահուանը, — աւելցուց մայրս, արտասուալից համբոյրներ դրոշմելով դէմքիս։

Անցեալ տարի, մայրս հազիւ էր ազատեր մահէն և անկէ ասդին՝ այդ խօսքերը սովորական ասացուածք էին դարձեր իր բերնին մէջ։

Բայց սիրտս արտմեցնելու համար չէր բերեր. ուստի,

սկսաւ հարցումներու տարափ մը տեղացնել վրաս, — ի՞նչպէս էր քաղաքը, գլուխս արդեօք չէ՞ր ցաւցեր, անկողնոյս փափո՞ւկ էր...

Ցանկարծ, ընդհատեց իր հարցուփորձը, և յայտնեց որ այծարած Եղօն կարգուեր է։

— Հա՞, բացագանչեցի ես, սաստիկ զարմացած։

Միայն մայրս գիտէր թէ ի՞նչ է ինձի համար այդ այծարածը։ Տեսաւ թէ ո՞րպիսի մեծ ուրախութեամբ լսեցի ես այդ նորութիւնը, ուստի ինք ալ ուրախ ու ծիծաղկոտ էր։

Կարծես թէ կարգուեր էր մեր տան անդամներէն մէկը. կարծես այդ հարսնիքը մեր տան մէջ էր, — ա՜նքան ուրախ էի։

Ես նոյնիսկ մոռցայ որ քաղքէն ընծաներ եմ բերեր եղբօրս մանուկներուն համար, որոնք չրջապատեր էին զիս, կը շօշափէին իմ աշակերտական զգեստս և հրայրումով կը նայէին իմ պլինձէ փայլուն կոճակներուս։

Ամէն բան կրնար պատահիլ։ Բայց այծարած Եղօն ամուսնանա՛յ. անհաւատալի բան էր ասիկա։

2

Միջահասակ էր Եղօն ու նիհարակազմ։ Երիտասարդ ալ չէր։ Մայրս կըսէր թէ՝ վաղուց այդպէս է տեսեր զայն։

Իր աչքերը տեսնել անկարելի էր. գդակը քաշուած էր միշտ ճակատն վրայ, այնպէս որ՝ երբ ուզէր քիչ մը դէպի վեր նայիլ, պիտի բարձրացնէր ամբողջ գլուխը։

Ինչո՞ւ այդպէս կընէր. մարդ չէր գիտեր։ Ես շատ անգամ հարցուցեր էի մօրս, բայց համոզեցուցիչ բան մը չէր կրցած ըսել։

Հասասան ա՛ն էր որ՝ մէկը չի կար Եղօին ճակատը տեսնող։ Մինա՛կ, կըսէին, իր պառաւ մայրը տեսած է անոր ճակատը։ Եւ ան ալ ինչպէ՛ս։

Տարին երկու կամ երեք անգամ, հազարումէկ աղաչանքով ու յանդիմանութիւններով՝ կը համոզէր Եղօն, ու կը լուար անոր գլուխը։ Այդ առենն է որ կը տեսնէր իր տղուն ճակատը։

Բայց, լսեցէ՛ք, աւելի տարօրինակը կայ դեռ։

Իր կեցած խրճիթէն քանի մը քայլ անդին էր այն տունը, ուր ինք ծներ էր, և ուր կապրէին իր ծերունի հայրն ու երկու եղբայրները։ Մէհրուենց տո՛ւնը։

Բայց ինք, այդ տանը սեմէն ալ ներս շատ քիչ անգամ ոտք կը կոխէր։

Այդ տանը մէջ կը պատահէին ուրախ ու տխուր դէպքեր. եղեր էին հարսնիքներ, մահեր, բայց Եղօն ո՛չ կուգար, ո՛չ կերթար։

Մայրս կը պատմէր որ, տարիներ առաջ, մեռաւ Եղօին եղբայրը։ Երիտասարդ մարդ էր, շատ սնարար. ծերունի Սւադը կը պօռար որ «մարեցա՛ւ Մէհրուենց օճախը». մայրը անդադար կուշաթափուէր. դրացիներն անգամ կուլային։

Իսկ Եղօ՞ն։

Եղօն ներս մտաւ դունէն, կեցաւ սեմին վրայ, մէկ թէ երկու անգամ հառաչեց, ու նորէն դուրս կաւ։

Միւս օրը թաղումն էր, բայց Եղօն, սովորական ժամուն, քշեց իր հօտը դէպի արօտ։

Եղօն, կեանքին մէջ, երբեք ոտք չէր դրեր եկեղեցին։

Այս Եղօն է որ հիմա կարգուեր է անա։ Ասոր համար էր որ չէի հաւատար ականջիս...

ԾԻԾԵՌՆԱԿԸ

Ծիծեռնակը բոյն կը շիներ,
եւ՛ կը շիներ, եւ՛ կերգեր.
ամէն մէկ շիւղ որ կպցներ՝
իր հին բոյնը կը յիշեր։

Մէկ անգամ էր ան բոյն շիներ
եւ շատ անգամ կարկտեր.
բայց այս անգամ, վերադարձին,
բոյնն աւերակ էր գտեր։

Հիմա նորէն բոյն կը շիներ,
եւ՛ կը շիներ, եւ՛ կերգեր.
ամէն մէկ շիւղ որ կպցրներ՝
իր հին բոյնը կը յիշեր։

Կը յիշեր որ անցած տարին
շատ էր իրեն թըշնամին.
անոնք նամբէն իր ձագերը
ձեռքեն առին ու տարին։

Բայց ինք կրկին բոյն կը շիներ,
եւ՛ կը շիներ, եւ՛ կերգեր.
ամէն մէկ շիւղ որ կպցրներ՝
իր հին բոյնը կը յիշեր։

1. Որո՞նք են ծիծեռնակին թշնամիները. ո՞վ խլած էր անոր ձագերը։

ԵԴԵՄԱԿԱՆ ԾԱՂԻԿԸ

1

Կըլլայ, չըլլար, մեր աշխարհին մէջ վաճառական մը կըլլայ։ Այս վաճառականը կունենայ աղջիկ մը՝ անունը Ծաղիկ։ Ծաղիկ, իրա՛ւ ծաղիկ, այնքան քնքուշ, այնքան սիրուն, այնքա՛ն գեղեցիկ։

Հայրը շատ կը սիրէր իր աղջիկը։ Օր մը երբ պանդխտութեան կերթար՝ հարցուց Ծաղիկին։

— Ի՞նչ կուզես որ բերեմ քեզի, ի՛մ մէկ հատիկ աղջիկս։

— Ինծի եդեմական ծաղիկ բե՛ր։

— Շա՛տ լաւ, բերեմ, աղջի՛կս։

2

Կերթայ հայրը օտար երկիրներ. կընէ իր առուտուրը, կը լմնցնէ գործը և կուզէ իր աղջկան համար գտնել եդեմական ծաղիկը՝ որ տուն գայ։

Ադին կը հարցնէ եդեմական ծաղիկ, անդին կը հարցնէ եդեմական ծաղիկ, գիտցող չի կայ թէ ո՛ւր կը գտնուի այդ ծաղիկը և ո՞ւր կը բացուի։

Վերջը, մարդ մը կը հանդիպի իրեն. այս ծերունին ճամբայ մը ցոյց կուտայ ու կըսէ. «սա ճամբով որ երթաս, կը գտնաս եդեմական ծաղիկը։ Բայց զգուշ եղի՛ր ճերմակ դևէն՝ որ կը հսկէ եդեմական ծաղիկին վրայ»։

3

Հօր սիրտ է։ Ծերունիին ցոյց տուած ճամբան կը բռնէ ու կերթայ։

Շատ կերթայ, քիչ կերթայ, կը հասնի այն տեղը,

ուր կը բացուի եդեմական ծաղիկը։ Կը հասնի որ քաղէ թէ չէ, կը փրթի հով մը, փոթորի՛կ մը. փոթորիկին հետ կու գայ կը հասնի հրէշ մը։ Մարդ ըսես՝ մարդ չէ. գազան ըսես՝ գազան չէ, բայց գազանի պէս կը մռնչէ։

— Ո՞ւր փրցուցիր իմ ծաղիկս... քու մա՛հդ է հիմա...

Քու մա՛հդ է հիմա... ձայն կու գայ ամէն կողմէ։

Մարդը ո՛չ մեռած, ոչ կենդանի, կիյնայ հրէշին ոտքը.

— Ներէ՛, կըսէ, ո՛վ հզօր... իմ աղջիկս էր ուզեր...

— Կը ներեմ, կը պոռայ հրէշը, միայն ա՛յն պայմանով որ ատ աղջիկդ ինծի տաս։

— Վրայ գլխուս։

— Որ այդպէս է՝ քեզի բաշխեցի քու կեանքդ։ Գնա՛։ Բայց ձեր տան դիմացի լեռը ճերմկեցաւ թէ չէ՝ գիտցիր որ ատ իմ նշանս է. պիտի գամ աղջիկդ առնելու։

Դուն մի՛ ըսեր, այդ հրէշը՝ ճերմակ դևը ինքն է եղեր։

4

Վաճառականը կը վերադառնայ տուն։ Աղջիկը կը վազէ, կը փաթթուի անոր վզին. չի գիտեր գլխուն գալիքը։ Հայրը կը համբուրէ զինք, կու տայ եդեմական ծաղիկը և բան չըսեր ճերմակ դևին վրայ։ Բան չըսեր, բայց միշտ կը մտմտայ։

Կանցնին օրեր։ Առտու մըն ալ վաճառականը կը տեսնէ որ ճերմկեր է իրենց դէմի լեռը։ Կը սկսի լալ։ Կը հարցնեն պատճառը։ Մարդը կը պատմէ թէ այսպէս ու այսպէս. ճերմակ դևը պիտի գայ, տանի մեր Ծաղիկը։

— Բան չի կայ, հայրի՛կ. դուն մի՛ լար. ես կերթամ ճերմակ դևին հետ, ինչ կըլլայ թող ըլլայ։

Այն ինչ, ճերմակ դևը արդէն կտրեր է դուռը և կը մռնչէ. — Ո՞ւր է Ծաղիկը, ո՞ւր է... ինծի տո՛ւր...



Կը մանէ ու իր ցուրտ շունչէն կը դողան ծառերը, կը սասանի աշխարհքը։ Ինչ կրնայ ընել խեղճ հայրը։

Ծաղիկը՝ զուգուած, զարդարուած, դուրս կելլէ տունէն, իր ձեռքը բռնած եղեմական ծաղիկը։ Ձերմակ դէմն է կը սուլէ ու կոռնայ. սառով ու սևով, հովով ու փոթորիկով՝ կը յափշտակէ Ծաղիկը ու կը տանէ։

Կը տանէ Մասիսի մեծ վիհը։

Հոն, Մասիսի այն խորունկ վիհին մէջ, այն անմատչելի, միշտ մառայլ ու միշտ ցուրտ աշխարհքին մէջ՝ կանգնած է իր բիւրեղեայ ապարանքը։

Ձերմակ դևը երբ այդ ապարանքէն կիջնէր, սառով ու սարսափով կը պատէր աշխարհքը, և կը յափշտակէր, կը տանէր ամէն կեանք ու կենդանութիւն։

Ծաղիկն ալ տարաւ այդ բիւրեղեայ ապարանքը։

5

Այսպէս, կանցնին տարիներ։ Անգամ մը, գարնան սկիզբը, երբ Ձերմակ դևը դուրս էր ելեր, աղջիկը վեր կը կենայ, կը փախի պատուհանէն։

Դևը տուն կուգայ, կը տեսնէ որ Ծաղիկը չի կայ։ Կը կատղի, կը հաւաքէ իր բոլոր ուժը, և մրրիկի նման սուրալով, օձի նման սուլելով՝ կիջնայ անոր ետևէն։

Աղջիկը արդէն հասեր էր Արագածի ստորոտը։ Ետ կը նայի, կը տեսնէ Ձերմակ դևը՝ որ կուգայ, կուգայ, բայց ինչպէ՞ս կուգայ, Աստուած ետ ու հեռի ընէ։

Աղջիկը կը պոռայ, օգնութիւն կը կանչէ։ Կը կանչէ թէ չէ, Աստծու հրամանով առջևը դուռ մը կը բացուի։ Այդ դռնէն կը մտնէ Արագածի մէջ ու կրկին դուռը կը գոցուի ետևէն՝ Ձերմակ դևին դէմ։

Դևն է կը մնայ. իր լայն թևերով կը ծեծէ Արագածի գագաթը ու կոռնայ։

6

Ծաղիկը որ դռնէն ներս կը մտնէ, առջևը կը բացուի անման պարտէզ մը. պարտէզին մէջ կը տեսնէ զմրուխտէ պալատ մը, պալատին մէջ ոսկիէ դագաղ մը, դագաղին մէջ ալ պառկեր է գեղեցիկ երիտասարդ մը՝ որ ոչ քուն է, ոչ ալ մեռած. չունչը վրան, հազիւ կը տրոփէ։

Կը տեսնէ թէ չէ՝ սիրտը կը փլի, ա՛լ չի դիմանար, կուլայ ու կուլայ։

Արցունքի կաթիլները կիյնան երիտասարդին երեսներուն վրայ։ Երիտասարդը յանկարծ կը բանայ աչքերը ու կելլայ՝ կը կանգնի, այն դրախտին մէջ բուսած սօսկներուն պէս։

Դուն մի՛ ըսեր Արին-Արմանալին է եղեր ինք։

— Ո՞վ ես դուն, սի՛րուն աղջիկ, կը հարցնէ Արին-Արմանալին. ինչպէս եկար դուն այս աշխարհքը։

Ու Ծաղիկը կը կենայ, կը պատմէ գլխուն եկածը։

— Հա՛, Ձերմակ դէ՛ը. կը լսեմ, կը լսեմ անոր սարսափելի ձայնը, կը պատասխանէ Արին-Արմանալին։ Զիս ալ ան էր կախարդեր ամիսներ առաջ։ Այսպէս կընէ ամէն տարի, ան չ՚ըր։ Մէկը պէտք էր որ քակէր կախարդանքը. դուն եղար ատ մէկը։ Հիմա ես դուրս կելլեմ ու կը չափուիմ անոր հետ...

7

Ընկն ու ընելը մէկ կրլլայ։

Կառնէ կայծակէ թուրը ու դուրս կը թռի։

Երկու թշնամի ուժերը կը պատահին իրարու. կը բացուի օրհասական կռիւը։

Կը զարնեն, կը զարնուին. երկինք գետինք իրար կը խառնուին։ Մութ ամպերուն մէջէն կը մռնչէ Ձերմակ դէւը. ահաւոր կորոտայ Արին-Արմանալին ու կը չողացնէ կայծակէ թուրը։

Կռիւը կը վերջանայ. պարտուած է Ձերմակ դէւը և փչալով ու հեւալով, լացով ու թացով կը քաշուի նորէն իր մեայլ թագաւորութիւնը,— կը քաշուի Մասիսի այն մեծ վիհը, սառոյցէ ապարանքին մէջ։

Կը ծաղկի Արաքսի հովիտը. կը բացուին մանիշակներն ու փարթամ վարդերը. ինս ու ճինս, թռչուն ու մրջիւն հարանիք կընեն. աղմուկն ու աղաղակը, խաղն ու տաղը իրարու կը խառնուին։

Ու անոնց ամէնուն վրայ կամար կը կապէ կանաչ-կարմիր գօտին...։

1. Գիտցա՞ք թէ ո՛վ էր Ձերմակ դէւը, և ո՛վ էր Արին-Արմանալին։

ԴԷ՛Հ, ՔԱՇԵՑԷՔ, ՍԻՐՈՒՆ ԵԶՆԵՐ

Ահա ծագեց կարմիր արեւ,
տաք ու պայծառ է օրը.
դէ՛հ, քաշեցէ՛ք, սիրո՛ւն եզներ,
առաջ տարէք արօրը։

Վարը վարենք, ակօս փորենք,
խո՛ր ակօսներ հողի մէջ.
սերմը ցանենք՝ որ հունձ հնձենք,
ցորեն դիզենք կալի մէջ։

Կուզայ ձրմեռ, մենք վախ չունինք,
ուրախ կանցնի մեր օրը.
ուտելու միշտ պաշար ունինք,
լի ու կուշտ է մեր փորը։

Դէ՛հ, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
շուտով վարենք արտերը,
թող չըսեն մեր դըրացիներ՝
ծոյլ են Հայուն եզները։



ԾԻԼՆ ՈՒ ԱՊԱՌԱԺԸ

1

Լերկ ապառաժին տակ, երկու քարերու մէջտեղէն՝ գարնան կանուխ ըուսեր էր սէղ մը, պարզուկ, հասարակ խոտի չիւղ մը։

Կօրօրուէր անիկա նորածագ լոյսին մէջ՝ ցողով փայլփլլուն. յանկարծ, աչքն ինկաւ ժայռին մութ ճեղքին վրայ և այնտեղ նշմարեց նոր եկած ծիլ մը։

— Է՛յ, պուռաց սէղը. ո՞վ ես դուն, ո՞ւրկէ եկար։

Ծիլը, որ արդէն կէս մատնաչափ կար, վար նայեցաւ, տեսաւ վախտ սէղը ու ըսաւ.

— Բարև՛, բարեկա՛մ. ուրախ չե՞ս որ քեզի ընկեր եկայ։

— Օ՛, ուրախ եմ, չա՛տ ուրախ, բայց ո՞վ բերաւ քեզ և ո՞վ ես դուն։

Ծիլը ժպտեցաւ. ժպտեցաւ, օրօրուեցաւ ու այսպէս երգեց.

Ծառի ծիլն եմ ես,
Ելայ անտառէն,
Հովին թեւովը
Թըռայ դաշտերէն,
անցայ սար ու ձոր,
եկայ մինչև հոս։

Ցեղոյ երգը կարեց ու հարցուց.

— Հապա դո՞ւն ո՞վ ես, ընկե՛ր. դո՞ւն ո՞րտեղէն եկար։

— Օ՛, ըսաւ սէղը. ես ծներ եմ այստեղ, իմ մօրս կուրծքէն, մաեր եմ հողին մէջ, քնացեր ձմեռը, հիմա ալ դուրս եմ եկեր, եղեր տանս տէր։

— Դուն ուրեմն տուն-տե՞ղ ունիս այդտեղ։

— Ունի՛մ. կտոր մը հող. շատ պահանջկոտ չեմ։

— Կը տեսնեմ. բայց իմ տեղս շատ նեղ է և ես տիպուռած եմ բոլոր ուժս գործածել, որպէսզի քարին կուրծքը մանեմ ու տեղս քիչ մը լայնցնեմ։

— Եւ կրնա՞ս, հարցուց սէղը զարմացած։

— Դժուար է, բայց ուրիշ ճար չի կայ. թէ չէ՝ կը մեռնիմ։ Իսկ ես ապրիլ կուզեմ։

2

Եւ ծիլը կաշխատէր. կաշխատէր որ մեծնայ, ուժեղնայ և քարէն տեղ խլէ իրեն համար։

Ու պէտք էր տեսնել անոր ջանքն ու աշխատանքը՝ անվերջ, անդադար, գիշեր-ցորեկ, անվհատ յամառութեամբ ու քարէն աւելի պինդ կամքով։

Եւ այսպէս՝ ամիսներ, տարիներ, շատ-շատ տարիներ։

Ձմեռը կը քնանար, կը կազդուրուէր. իսկ երբ գարուն կու գար, կելլէր աշխուժով, կերկնցնէր նոր ուժ ստացած արմատները և գործի կը սկսէր։

Երբեմն անունդը քիչ կու գար, հովերուն բերած հողն ու փոշին բաւական չէր ըլլար. երբեմն ալ ամառները անձրևներ չէին գար. քիչ կը մնար որ յուսահատի ու չորնայ։

Բայց նորէն նոր սիրտ կառնէր. անմիջապէս որ քիչ մը կը կազդուրուէր՝ նուրբ ու բարակ արմատները կը խրէր, միշտ կը խրէր քարէն ներս։

Եւ ի՛նչքան արմատները տեղ կը գրաւէին, այնքան քունը կամրանար ու կը հաստլնար, այնքան ալ հպարտ

գլուխը վեր կը բարձրանար՝ դէպի երկինքն ու դէպի արևը։

Տեսէ՛ք, բարձրը, ապառաժին եզերքը, կը տեսնէ՞ք այն խոշոր, սաղարթախիտ հսկայ ծառը։ Անիկա յաղթեր է արդէն, անիկա ապրիլ կուզէր և կապրի։

ՄԱՅՐԻԿԸ ԿԸ ՔՆԱՆԱՅ

Մայրը պառկած էր դագաղին մէջ. հագուած, զարդարուած վերջին անգամ։

Վահրամ, խաղալով կը մտնէ սենեակը. կը մտնէ ու զարմանքով կը նայի մայրիկին։

Ինչքա՜ն սիրուն է այն ծաղկեփունջը, որ դրուած է անոր խարտեաշ մազերուն վրայ։ Բայց աւելի գեղեցիկ են անոր կուրծքին վրայ զետեղուած ծաղիկները։

Վահրամ՝ հանդարտիկ ու փայփայիչ ձայնով կըսէ.

— Մայրի՛կ, սիրելի՛ մայրիկ, փունջէդ ծաղիկ մը կո՞ւտաս ինծի. չա՛տ պիտի սիրեմ քեզ։

Եւ որովհետև մայրիկը լուռ կը մնայ, Վահրամ կըսէ ինքնիրեն. «Մայրիկը կը քնանայ, բայց երբ որ արթննայ՝ պիտի տայ ինծի ծաղիկը։»

Եւ ոտքերուն ծայրին վրայ կոխելով, դուրս կերթայ կամաց-կամաց, որպէսզի աղմուկ չելլէ. կը գոցէ դուռը ետևէն, և ատեն ատեն կու գայ մտիկ կընէ դռնէն՝ տեսնելու համար թէ, արթնցած չէ՞ տակաւին մայրիկը։

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՒՕՏ

Թարի լոյսի զանգը զարկին
զընկզընկալեն անո՛ւշ, անո՛ւշ.
լոյսը ցաթեց մեր աշխարհին
ճրողճրողալեն անո՛ւշ, անո՛ւշ։

Հովտին առուն կը խոխոջէ
գլգլալեն անո՛ւշ, անուշ.
բարակ բամին զով կը՝ փչէ
զուզուալեն անո՛ւշ, անո՛ւշ։

Կրուունկն եկաւ երամ կապած
կրղկրղալեն անո՛ւշ, անո՛ւշ.
ցամաքն ալ հոն, բարին նստած՝
տաղ կը կանչէ անո՛ւշ, անո՛ւշ։

Հարս ու աղջիկ դաշտերն ելան
շորորալեն անո՛ւշ, անո՛ւշ.
ծաղկին բուրումն անմահական՝
օդն է բռներ անո՛ւշ, անո՛ւշ։

ԾԵՐՈՒՆԻ ԽԱՉՕՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Առաւօտ է։ Կը վառին ծերունի Խաչօյին տանը թոնիրները։ Մէկուն վրայ դրուած են պղինձէ ահագին կաթսաներ, հողէ մեծ-մեծ պուտուկներ ու կերակուր կեփեն. միւսին մէջ հաց կը թխեն։

Հարսները, աղախինները՝ հաւաքուած թոնիրներուն շուրջը, շարժման մէջ են։ Տունը լեցուած է կերակուրներու հոգիով. տեսնողը կը կարծէ թէ ճաշ կը պատրաստուի՝ ամբողջ բանակ մը կերակրելու համար։

Եւ իրաւ, ծերունին ահագին գերդաստանէն զատ, անոր սեղանէն կը կերակրուին բազմաթիւ հովիւներ ու մշակներ, իրենց ընտանիքներով. անոնք ամէնքն ալ կը ծառայեն Խաչօյին տանը մէջ։

Ամէն օր կը վառեն նոյն թոնիրները, կը պատրաստուին նոյնքան կերակուրներ։ Ծերունին ժրաջան հարսները՝ վայրկեան մը անգամ հանգիստ չունին։

Ահա այն տեղ, բակին մէջ, հարսներէն մէկը կովերն ու ոչխարները կը կթէ. միւսը՝ օճախին վրայ կաթ կը տաքցնէ՝ մածուն շինելու համար. երրորդը պանիր կը մակրդէ. չորրորդը խընոցի կը հարէ՝ կարագ պատրաստելու համար։

Անոնց բոլորտիքը կը վազվզեն բազմաթիւ մանուկներ՝ կը խաղան նորածին գառնուկներուն ու հորթերուն հետ։

Պատին տակ, մէկը միւսին վրայ, կարգով շարուած են մէկ քանի հարիւր փեթակ։ Ապրիլի արեգակը կը թափէ անոնց վրայ իր տաքուկ ճառագայթները։

Ծերունի Խաչօն ահա կը բանայ փեթակներուն դռնակները։ Մեղուները ուրախ-զուարթ դուրս կը թափին

ծակերէն, կը սաւառնին ծերունիին գլխուն վերև, կը բզզան, կը վըժվըժան և օդը կը լեցուի միջատներուն ձայնովը։ Կը դանուին անոնց մէջ չարաճճիներ՝ ալ որ կը կճեն ծերունիին խորշոմած երեսները։ Բայց՝ ծերունի Խաչօն չի բարկանար, միայն կըսէ.

— Ա՜յ չար սատանայ, ինչ չարութիւն է ըրեր քեզի Խաչօն։

1. Դուք ալ գեղ դացե՞ք էք. տեսե՞ք էք գեղացիի տուն։ Նկարագրեցէ՛ք։

ՇԵՐԱՄ

1

Գարնան սկիզբը, երբ որ բըրեցին
կը բանայ իրեն տերեւը մանրիկ,
շերամի ձուէն որդի մը մարմին
դուրս կելլէ սեւուկ, անընշան փոքրիկ։
Կը նայիս իրեն ու չես հաւատար
որ ան ալ ունի ոտքեր ու բերան։
Հէ՛յ, բարե՛ւով եկար, դուն այս մեր աշխարհ,
շերամի՛ն որդը, շերամի՛ն տըղան։

Բայց ան ինկած է տերեւին վրայ,
կուտէ, կը մեծնայ եւ շատ ուրախ է.
չորս հեղ կը բըմբի, մորքը կը փոխէ,
եռասուն օրուայ մէջ լաւ կը խոշորնայ։

Եռսուն օր յետոյ՝ բան չուտեր որդը,
հոս ու հոն կիյնայ, տեղ կը փընտռէ.
կերած տերեւին ամբարած հիւրը
բարակ թելի պէս բերնէն կը հանէ:

Երեք օրուան մէջ որդն այդ թելերէն
ամուր տրնակ մը կը գործէ իրեն,
անոր մէջ փակուած խոր կը
քընանայ՝
տասնուր օր յետոյ թիթեռ կը
դառնայ.
բերնին շողինքով տունը կը ծակէ,
ներսակ թեւերով լոյս աշխարհ
կուգայ:

Եւ այդ թիթեռը երեք օրուայ մէջ
հազարէն աւել ձու ածելէ վերջ՝
կիյնայ, կը մեռնի անխօս ու անլաց,
իրեն աշխարհի պարտքը կատարած:

2

Իսկ ի՞նչ կըլլան որդին տրնակներ:
— Ճերմակ ու դեղին սիրո՛ւն բոժոժներ:
Այդ բոժոժները մարդիկ կը թափեն
տա՛ք, տա՛ք ջուրի մէջ, եւ թելին ծայրէն
կամաց բռնելով, կը փաթթեն արագ,
մինչեւ որ դառնայ ջանր ու նախարակ
ու թելը շինէ ապրշում բարակ:
Գործարաններն ալ իրենց հորերով
գործեն ու բանին, բանին օրերով
եւ ապրշումէն գոյնզգո՛յն, նըրբին,
շինեն մետաքսէ կերպաս թանկագին:

Գիւղական տեսարան

ԵՐԵՔ ԽՐԱՏ

Իմաստուն էր Խիկարը, և անոր անունը դուրս էր եկեր Ալթուն Թագաւորի պալատէն, ու տարածուեր էր շատ հեռու երկիրներ։

Ամէն աշխարհէ իմաստուններ կուգային՝ անոր խրատները լսելու։ Թագաւորներ ու իշխաններ կուգային՝ անոր յարգանք յայտնելու։

Բայց, մինակ իմաստութիւնը չէր Խիկարին անունը փառաւորողը։ Խիկար այնպիսի սիրտ մը ունէր՝ որ կարեկից էր ուրիշներու վշտին. կը սիրէր թշուառները և կը սրբէր անոնց արցունքները։ Երբէ՛ երկիր թափառական մուրացկաններ ու անանկ ճամբորդներ կուգային իր քով, և կը գտնէին գուրգուրանք ու սփոփանք։

Ծառաները այլևս չէին հարցներ թէ՝ եկողը ո՞վ է,— խրատի կարօտ իմաստո՞ւն, թէ՝ հացի կարօտ մոլորած ճամբորդ։ Ամէնուն առջև բաց էին անոր դռները։

1

Ամիրխան ալ ուզեց Խիկարին իմաստութիւնը լսել և անոր հացը վայելել։ Եւ ահա օր մը, իրկուան դէմ, Ամիրխան ներս մտաւ Խիկարին մեծ դռնէն, էշը առջևը ձգած։

Հեռու տեղէ կուգար Ամիրխան և երկար ճամբայ էր քալեր։ Էշը անօթութենէն հազիւ ոտք կը փոխէր, և տէրը ալ կարծես ուժ չունէր անոր «չո՛շ, չո՛շ» ըսելու։ Երկուքն ալ ծածկուած էին փոշիով։

Էշը տարին ախոռը և առջևը գարի լեցուցին, իսկ

հիւրն ալ առաջնորդեցին Խիկարին քով։ Կերաւ, յագեցաւ օտարականը, հանգըստացաւ և օրհնեց Խիկարը։

Այդ դիշեր, Ալթուն թագաւորին պալատը խնջոյք կար։ Խիկար մոմտուքի մէջ մնաց. չէր կրնար օտարականը տունը ձըգել և ինք խնջոյքի երթալ. հիւրասիրութեան դէմ բան էր ասիկա։ Հիւրին պատճառով ալ չէր կրնար տունը մնալ. ուստի, լաւ սեպեց որ հիւրն ալ հետը տանէ։ Զէ՞ որ ամէնէն շատ այս տեսակ մարդիկ ուրախութեան ու խնջոյքի կարօտ են։

— Սիրելի՛ս,— ըսաւ Խիկար. հիւրն Աստծունն է, և ես շնորհակալ եմ որ Աստուած քեզ խրկեց իմ տունս։ Այսօր միասին կերթանք թագաւորին պալատը խնջոյքի։ Դուն թագաւորի պալատ չես գացեր. մեծամեծներու և իշխաններու հետ սեղանի չես նստեր, բայց վնաս չունի, մի՛ քաշուիր, մի՛ ամչնար. միայն, լսէ՛ իմ խրատներս. լսէ՛, և շատ գոհ սրտով տուն կը դառնաս խնջոյքէն։ Քեզի երեք խրատ պիտի տամ, զանոնք միտդ պահէ ու պիտի չզղջաս։

—« Տեղդ ճանչցի՛ր. վերը մի նստիր՝ որ հետզհետէ վար չիջնաս. վարը նստիր՝ որ վեր բարձրանաս։

— «Մէջ մի՛ խնար ուրիշին խօսակցութեանը, և երբ քեզի հետ խօսին՝ տասը լսէ՛, մէկ պատասխան տուր։

— «Մինչև քեզմէ բան մը չուզեն, մէջ չիջնաս ու չի տաս»։

Լսեց Ամիրխաս այս խրատները և ըսաւ.

— Շնորհակա՛լ եմ, տէ՛ր, քու խրատներուդ համար. ըսածիդ պէս կընեմ։

Եւ սատիկ ուրախացաւ որ թագաւորին պալատը խնջոյքի կերթայ։

2



Գացին պալատ. սկսաւ խնջոյքը։ Ամիրխաս չէր հեռանար Խիկարին քովէն։

Նստեցաւ թագաւորը. աջ ու ձախ կողմն ալ մեծամեծ ու իշխան։ Խիկարը նստեցաւ աջ կողմը, անմիջապէս թագաւորին քով։

Ալ չսպասեց Ամիրխաս, որ հիւրերը սեղաւորուն ու յետոյ ինք նստի։ Հոս հոն նայեցաւ, և տեսաւ որ Խիկարին քով մեծ, զարդարուն բազմոց մը դրուած է. ա՛լ աջ ու ձախ չի հաշուեց, հրմշտկելով հիւրերը, չիտակ գնաց ու ծալապատիկ նստեցաւ Խիկարին քով, մէջքը հպարտ-հպարտ կրթնցնելով փափուկ գորգին։ Շատերը նայեցան

իրեն, բայց ինք գլուխը վեր տնկեց, կղակը իրեն քաշեց և այնպէս փքացա՛ւ, որ կարծես թագաւորն ինքն ըլլար։

Խիկար աչքին պոչովը նայեցաւ հեղ մը անոր, գլուխն երերցուց, չփեց երկար մօրուքը ու հառաչեց։ Բայց բան մը չըսաւ։

Սենեկապետը կը հրամցնէր հիւրերը և ամէն մէկուն ցոյց կուտար իր նստելու տեղը։ Հիւրերէն մէկը մօտեցաւ Ամիրխասին և ձեռքով նշան ըրաւ որ քիչ մը վար քաշուի։ Ամիրխաս, առանց ձայն հանելու, ձեռքերուն վրայ յենուելով՝ սողաց դէպի վար։ Եկաւ երկրորդը և խնդրեց որ քիչ մըն ալ վար իջնէ. նոյն ձևով գնաց վար։ Այսպէս, իրարու ետևէ կուգային ու կուգային, և Ամիրխաս վար երթալով, հասաւ դռան քով։

Նստած էր դռան ետև, և ծառաները՝ կերակուր բերելու և ամանները տանելու առեն, իւղը կը կաթեցնէին անոր գլխուն և ուսերուն վրայ. կամ, անցած-դարձած առեն՝ կը զարնուէին իր թևին ու ծնկանը։

Խնջոյքը տաքցաւ. կենդանացան երգ ու խօսակցութիւն։ Համադամ կերակուրներու այդքան առատութիւն և այդքան անուշահամ գինի՝ Ամիրխաս չէր տեսեր իր կեանքին մէջ։

Խմեր էր գինին, տաքցուցեր էր կատարը, և խելքը կորսնցուցած՝ կը խնդար բարձրաձայն կամ կը ձայնակցէր նուագածուներուն և երգիչներուն։ Քովը նստողներուն կը

պատմէր իր քաջագործութիւնները. թէ ինչպէս առիւծի բերան է պատռեր, թէ ինչպէս ձի է գողցեր, թէ ինչպէս կիներն է ծեծեր։ Վերջապէս, կը պատմէր թէ ինչ աննման գինիներ է խմեր, թէ որքան խեղճ է թագաւորին սեղանը, գինին անհամ՝ կնկայ խմելիք։

Քովը նստողները ձանձրացան իրմէ և քրթմնջելով՝ իրեն ու Խիկարին երեսը կը նայէին. և ամէնքն ալ չէին ուզեր լսել զինք։

Բայց, մեր Ամիրխասը չի յուսահատեցաւ. չէ՞ որ Խիկար իրեն ըսեր էր թէ՝ համարձակ եղիր։ Խռպոտ ձայնը ձգեց և սկսաւ բարձրաձայն խօսիլ աւելի հեռուն նստողներուն հետ. ա՛լ չէր թողուր որ մէկը խօսք խօսի. մէջ կիյնար, կընդհատէր խօսողները և բերանը չէր գոցեր...։

3

Խիկարին դէմ նստած էր Փուչքար երիտասարդ. իշխանը։ Փուչքար գեղեցիկ ու պճնազարդ էր և կորիճի համբաւ կը վայելէր։ Նոր էր վերադարձեր որսորդութենէ, և այդ օրը թագաւորին ընծայ էր բերեր իր սպաննած առիւծին մորթին։

Բայց մորթին հերիք չէր. Փուչքար կուզէր պատմել թէ ինչպէ՛ս մինակը սպաննեց ամէնի դաղանը։ Կուզէր որ թագաւորին ու հիւրերուն գովասանքը լսէ։

— Մութ անտառին մէջ ենք,— սկսաւ պատմել Փուչ-

քար. արևը կը կոսուէր սաղարթներուն եռև։ Կենդանի-ներէն ու գազաններէն շատերը իրենց որջերէն դուրս կելլէին՝ որս ընելու. շատերն ալ կը պառառուէին որջ դառնալու։ Այս ատենն է որ առիւծը կը պահուի լճին մօտ, ջուրի եկող կենդանիները որսալու համար։ Որսորդները շրջանակաձև ցրուեցի ծառերուն եռև, ես ալ եկայ հաստաբուն կաղնիին վրայ։ Ցանկարծ, տեսայ հսկայ առիւծ մը... գլուխը կարմրագոյն բիծերով. մորթին աննման. դանդաղաքայլ կը մօտենար լիճին։ Ակ չսպասեցի որ դարան մտնէ. արծիւի թռիչքով վար իջայ ճիւղէն և սուրս քաշած՝ արշաւեցի շիտակ անոր դէմ։ Առիւծը նայեցաւ ինծի. անոր կատաղի աչքերը արիւնազանգ էին՝ մարը մըտնող արևին պէս կարմիր. ցից ու սուր ժանիքները՝ պողպատէն ալ փայլուն, և թաթը՝ հինգ լիտրոց երկաթի պէս ծանր։ Առիւծը կծկուեցաւ որ յարձակի վրաս։ Մահկանացուն չէր կրնար դիմանալ այս տեսարանին։ Բայց, ամօթ էր որ թագաւորին որսորդ Փուչքարը ձայն տար ընկերներուն, կամ պոռար վախէն, և կամ դողար։ Սուրս ուղղեցի անոր բաց երախին և...

— Էյ, ատ ալ քաջութիւն է որ,— մէջ ինկաւ գինիէն տաքցած Ամիրխասը. օր մը կինս փիլաւն էր այրեր և ես կից մը տալով անոր, այնպէս գետին փռեցի զինք՝ որ մինչև իրկուն խելքի չեկաւ։

Հիւրերը, որ չունչերնին բռնած, մտիկ կընէին Փուչքարին, երեսնին դարձուցին դէպի Ամիրխասը և սկսան բարձրաձայն խնդալ։

Մոռցեցաւ երիտասարդ Փուչքարը, կրճատեցուց ակռաները, նայեցաւ Խիկարին և զսպեց բարկութիւնը։

Կասկարմիր դարձաւ Խիկար, և պաղ քրտինք եկաւ ճակտին վրայ։

Աւա՜ղ, երկրորդ խրատս ալ հովը տարաւ առաջինին պէս,— կը մտածէր անիկա։

4

Ուրախութիւնը կը մօտենար իր վախճանին։ Ձայները յոգներ ու խռպոտեր էին։ Դուրս կը տանէին կերակուրներուն ամանները։

Ներս բերին վերջին պնակը. կորիճ Փուչքարին ըսպասնած եղնիկն էր, մեծ սկուտեղի մը մէջ, բարդուած փիլաւին վրայ։

Մատակարարը՝ բռնած սկուտեղը երկու ձեռքերուն վրայ, բերաւ և հանդիսաւորապէս դրաւ երիտասարդին առջև։ Որսորդը ինք պէտք է կտրտէր իր որսին միսը և ձեռքովը բաժնէր ամէնուն։

Մատակարարը կը հեռանար արդէն և դռան մօտ էր, երբ Փուչքար ձայն տուաւ.

— Դանա՛կ, դանա՛կ... դանակը մոռցեր ես, դանա՛կ տուր...

Մատակարարը չփութած՝ դուրս վազեց, դանակ բերելու։

Բայց Ամիրխաս չի համբերեց. ցատկեց տեղէն և սլացաւ դէպի երիտասարդը. քաշեց իր գոտիէն կախուած ոսկորէ կոթով դանակ մը ու...

—Առ, հրամմէ՛, կտրէ՛,— ըսաւ, և դանակը եղնիկին կողը խրելով՝ հպարտ-հպարտ, փորը

դուրս անկած և թուչը ցցած, տեղը վերադարձաւ։

— Հէյ վախ, վերջին խրատս ալ ջուրն ինկաւ,— մտմտաց Խիկար. թող Տէրն աղա՛տէ հիւրս կրակին բորբոքումէն։

Իսկ Փուչքար ապշահար, Ամիրխասին նայեցաւ կատաղի աչքերով, և դանակը քաշելով եղնիկին կուրծքէն՝ կուզէր նետել անոր երեսին։ Բայց, զսպեց ինքզինք. նայեցաւ դանակին փղոսկրեայ զարդարուն կոթին ու բան մը մտմտաց. յետոյ շեշտակի նայեցաւ Ամիրխասին և ըսաւ անոր՝ առիւծի մռնչիւնով.

— Էյ մարդ, ո՞վ ես դուն. չեմ ճանչնար քեզ։ Ո՞ւրկէ գտար այս դանակը. ասիկա իմս է, իր փղոսկրէ կոթէն ճանչցայ։ Վաղուց է որ կը փնտռէի, գողցեր էին ինծմէ. և հիմա գողը գտայ... դո՛ւն ես գողը...

Եւ դառնալով թագաւորին, ձեռքերը դրաւ կուրծքին վրայ, խոնարհութիւն ըրաւ և ըսաւ.

— Տէ՛ր, արևի ճառագայթ և կայծակի զաւա՛կ, թափէ՛ քու բարկութիւնդ յանցաւորին գլխուն։ Պատժէ՛ գողը՝ կարել տո՛ւր անոր ձեռքերը, որովհետև գողութիւն է ըրեր։ Չիկացած երկաթէ թասակ անցուր անոր գլուխը, որովհետև դանա՛կ է գողցեր. իսկ դանակի գողը մարդասպան է։

Հիւրերը սարսափեցան երիտասարդին անարկու ձայնէն, և մազերնին փուշի պէս տնկուեցան իրենց գլխուն վրայ։ Վայրկեան մը լռեց ամէն ինչ. բոլոր բերանները բաց։ բոլոր աչքերը չմորած՝ կը նայէին թագաւորին։

Բարկացաւ Ալթուն թագաւորը, բարկութենէն դողաց ամբողջ մարմնով, որովհետև աւրուեր էր իր ինքնոյքին ուրախութիւնը։ Դէմքը խոժոռեց, բերանը բացաւ և ուժգին ձայնով պոռաց.

— Դահի՛ճ, դահի՛ճ, դահի՛ճ...

Մարդիկ վեր ցատկեցին իրենց տեղէն և կեցան անշարժ՝ արձաններու պէս. իսկ Ամիրխաս դեփ-դեղին կըտրեցաւ՝ իր քովի մարմարէ սիւնին նման։

Խափշիկ դահիճը ներս մտաւ՝ ահագին մերկ սուրը ուսին, և մինչև գետին խոնարհելով, կեցաւ դռան մօտ։



Թագաւորը մատն ուղղելով Ամիրխասին, հրաման տուաւ գլխատելու։

Խիկար, որ մինչև այդ ատենը վրդովուած կը նայէր Փուչքարին, առաջ եկաւ, խոնարհութիւն ըրաւ թագաւորին և ըսաւ.

— Տէ՛ր, արդարութեան պահա՛պան, լա՛ւ է որ ամէն հրամանի վրայէն մէկ անգամ արև ծագի. գիշերուայ հրամանը լա՛ւ է որ լոյսով կատարուի...

Եւ դառնալով հանդիսականներուն, աւելցուց.

— Այս մարդը ինչպէս դուք չէք ճանչնար, նոյնպէս ես. բայց այսօր իմ հիւրս էր ան և իմ տունէս եկած է հոս. ես հիւրասէր եղած չէի ըլլար՝ եթէ իմ տունէս դէպի մահ առաջնորդէի զինք. ասկէ ետք Խիկարին տան դուռը ալ ո՛և է օտարական չէր բացիներ։ Ուստի, կը խնդրեմ, տէ՛ր թագաւոր, և դո՛ւք հանդիսականներ, թոյլ տուէք որ հիւրս տանիմ իմ տունս։ Այս գիշեր կը պահեմ զինք յարկիս տակ պատուով, իբրև հիւր. վաղը ճամբայ կը ձգեմ նոյնպէս

պատուով. յետոյ, դուք կրնաք բռնել ու դատել զինք, ինչպէս որ կուզէք։

— Ո՛չ, ըսաւ Փուշքար. Խիկարը իմաստուն է և կրնայ գիշերը լեզու դնել այս աւազակին բերանը ու ազատել զինք արդարութեան ձեռքէն։

Թագաւորը վարանման մէջ էր։ Ամիրխասի գլուխը մինչև գոտին խոնարհած, ձեռքերը կախուած, աչքին տակէն կը նայէր դահիճին ու կը դողար՝ հովին կախուած լաթի կտորի մը պէս։

Խիկար նայեցաւ անոր դողացող մարմնին և հանդիսաւոր ձայնով ըսաւ.

— Թագաւորին ու պալատականներուն առջև խոստում կուտամ՝ որ ամբողջ գիշերը և վաղը մինչև ձեզի հանդիպելս, այս մարդուն հետ մէկ խօսք անգամ չփոխանակեմ. թող պապանձի լեզուս՝ եթէ ասոր հետ մէկ բառ փոխանակեմ. ոչ ալ կը թողում որ ծառաներս խօսին անոր հետ։

— Լա՛ւ, ըսաւ Թագաւորը. թող քու խօսքդ ըլլայ. իմ պետութեանս մէջ դեռ չէ ծըներ մէկը, որ Խիկարին խոստումին և աղնիւ խօսքին չհաւատայ։

Խիկար, առանց խօսելու, ձեռքի նշանով իր հիւրն առաջնորդեց դէպի դուռը։

5

Ամիրխաս, անխօս ու դողդղալով, կերթար Խիկարին հետևէն։

Մտան հիւրին համար պատրաստուած սենեակը. նըստեցան երկուքն ալ՝ լուռ ու գլխիկոր։

Ամիրխաս ամօթէն չէր նայեր Խիկարին։ Կարծես կը վախնար իր շնչառութեան ձայնէն և կաշխատէր շունչը իրեն պահել։ Իսկ Խիկար, աջ արմուկը ծնկան կրթնցուցած՝ մատներով կը խաղար մօրուքին հետ, և աչքը յառած գետնին՝ խորասուզուած էր մտածման մէջ։

Յանկարծ, Խիկար վեր ցատկեց տեղէն և ժպիտ մը անցաւ իր երեսէն։ Կանչեց ծառան, որ ներս մտաւ՝ խոնարհութիւն ընելով։

— Բե՛ր ինձի ճրագը և մահակ մը։

Ծառան կատարեց հրամանը։

— Դո՛ւն, — դարձաւ Խիկար ծառային, անկողինը պատրաստէ՛ և հոս կեցիր մինչև իմ դալս. ես ախոռը պիտի երթամ ու գամ։

Ըսաւ ու դանդաղաքայլ դուրս ելաւ սենեակէն։

Ամիրխաս, որ աչքին տակէն կը դիտէր անոր ամէն մէկ շարժումը և կարծես հրաշքի պէս բանի մը կը սպասէր, հետևեցաւ անոր։

Խիկար՝ ճրագն ու մահակը ձեռքին, մտաւ ախոռը, ուր կապուած էր Ամիրխասին էշը. ճրագը դրաւ բարձր տեղ մը և մօտեցաւ իշուն։

— Գարին կերեր ու փքացեր ես, խե՛ղճ անասուն, ու բնաւ չես մտածեր թէ ինչ փորձանքներ կան աշխարհքիս մէջ։

Ու յանկարծ, մահակը տարա՛ւ-բերա՛ւ, և թրա՛խկ

իջեցուց լշուն մէջքին։ Ամիրխաս կը նայէր շմորած աչքերով։

— Է՛շ, քե՛զի կըսեմ, էյ էշ, լա՛ւ լսէ,— պոռաց Խիկար՝ երկրորդ հարուածը տալով խեղճ անասունին։

— Հերի՛ք է իշութիւնդ բանեցնես, անդամ մըն ալ մարդավարի եղի՛ր, ականջ դի՛ր տիրոջդ խրատներուն։ Է՛շ, լա՛յն բաց ականջներդ և լա՛ւ լսէ, որ գայլերուն բերանը չընկնիս։ Վաղը քեզ դատելու պիտի տանին. կա՛մ կը կախեն, կա՛մ տրամ-տրամ կը մորթեն... լա՛ւ լսէ, Է՛շ...

Կըսէր ու կիջեցնէր փայտը։ Իսկ Ամիրխաս աչքերը չորս բացած և ականջները տատնչորս, կը լսէր այդ ձայնը, և այդ ձայնէն թէ՛ կը սարսափէր, թէ՛ կուրախանար։

— Երբ կը բացուի տեսանը և Թագաւորը կը նստի

դատաւորական աթոռին վրայ, դո՜ւն, էշ, քե՛զի կըսեմ, լա՛ւ լսէ,— Թագաւորին և բոլոր դատաւորներուն առջև խօսք առ Փուչքարէն՝ որ դանակը իրենն է։ Մէկ քանի անգամ կրկնել տուր այս բանը, և Թագաւորն ու դատաւորները վկայ բռնէ՝ որ ինք իր բերնով ըսաւ թէ դանակը իրենն է։ Երբ անիկա կրկին կրկին կը սնդէ ու երդումով կը հաստատէ, այն ատեն՝ դարձի՛ր Թագաւորին ու ըսէ.

«Տէ՛ր, կը խնդրեմ, քու տէրութեանդ դրքերուն մէջ նայել տաս։ Եօթը տարի առաջ, այս ժամանակ, Թաւրիզի ու Պաղտատի մեծ պողոտային վրայ՝ աւազակներն յարձակեցան հինգ հարիւր ուղտ ու ջորիէ բաղկացած չորս կարաւաններու վրայ, և կողոպտեցին։ Տարին բոլոր ապրանքները, ոսկիներն ու ակնեղէնները, և մարդիկն ալ արախողխող բրին. կարաւանին պետը՝ Հաճի Իսմայիլ, կըսես, իմ հայրս էր։

«Այս դանակը ես անոր կուրծքէն դուրս քաշեցի, կըսես։ Է՛շ, աղէ՛կ լսէ, քեզի կըսեմ.— կըսես՝ այս դանակը կապեցի գօտիս ու ելայ Թափառելու։ Այդ օրէն մինչև այսօր ի՞նչքան կեր ու խում կը պատահի, ամէն տեղ կը հանեմ դանակը՝ որ գտնեմ տէրը։ Հիմա գտա՛յ անոր տէրը, հայրս սպանողը. ուստի, կը խնդրե՛մ, պահանջեցէ՛ք անկէ իմ հօրս արեան գինը։ Լա՛ւ լսէ, Է՛շ, մէկ բառ անդամ չի մոռնաս. համարձակութիւնը քաջութիւն է ո՛չ թէ խնջոյքի մէջ, գինիի դաւաթը ձեռքին, այլ դահիճի տապարին առջև...»

Ըսաւ Խիկար և նորէն քանի մը հարուած տալով տքացող անասունին, վար դրաւ մահակը։ Առանց Ամիրխասին նայելու, վերցուց ճրագը և լուռ գնաց դէպի դուռը։

Երբ Խիկար վեր կը վերցնէր ու կիջեցնէր մանակը իշուն մէջքին, Ամիրխաս դողալով իշուն հետ՝ կը կծկուէր, ինք ալ կը ծռէր ու կը շփոթուէր. կարծես թէ հարուածները իր մէջքին տեղային։ Վերջին հարուածին՝ կծկուած, գրեթէ գետնին էր կպեր, երբ ընդհատուեցաւ Խիկարին ձայնը։ Ամիրխաս շփոթուեցաւ, ոտքի կեցաւ և վազեց Խիկարին հետէն՝ հնազանդ ստրուկի պէս։

Խիկար, առանց բառ մը ըսելու անոր՝ գնաց իր նընջասենեակը։

Առաւօտուն, Խիկար ճամբայ ձգեց իր հիւրը, միշտ առանց խօսք մը ըսելու անոր։

Թագաւորին ծառաները, Խիկարին դուռն առջև, շղթայելով Ամիրխասը, իր իշուն հետ տարին դատարան։

6

Ատեանը բացուեցաւ։ Զորս կողմէն եկած, լեցուած էին պալատականները՝ տեսնելու Ամիրխասին պատժուիլը, որ վիրաւորեր էր արքայական քաջ որսորդը և խառնակեր էր Թագաւորին խնջոյքը։

Եկաւ նաև Խիկարը, ու լուռ կանգնեցաւ պալատականներուն կողմը, ամէնէն վերև։

Հնչեցին շեփորները, թնդացին թմբուկները ու երևցաւ Սլթուն Թագաւորը։ Սաստիկ բարկացեր էր և կուզէր պատժել թշուառական օտարականը։

Կանգնած էր դահճապետն ալ, մէկ քանի դահիճներով։

Բայց Ամիրխաս ա՛լ չէր դողար՝ ո՛չ սեամոթի դահճապետին զարհուրելի դէմքէն, ոչ ալ Թագաւորին կատաղի նայուածքէն. չէր վախնար ո՛չ Փուշքարին վրէժխնդիր աչքերէն, ոչ ալ հանդիսատեսներու սուր հետաքրքրութենէն։

— Դէ՛հ, ըսաւ Թագաւորը, խոստովանի՛ր, ո՞ւրկէ և ի՞նչպէս ձեռք ձգեցիր իմ քաջ որսապետիս դանակը։ Քանի՞ շուտ խոստովանիս, այնքան թեթև կրլլայ պատիժդ։

— Ո՛չ, տէ՛ր արքայ, այդ դանակը իմս է, գոչեց Ամիրխաս համարձակ։ Մէկը չի կրնար հաստատել որ ժանգոտ բերնով դանակը՝ արքայական որսորդ Փուշքար իշխանինն է։ Ես հեռու տեղէ եկած օտարական մըն եմ, բայց իմ երկրիս մէջ հարիւրաւոր վկաներ ցոյց կուտամ, որ հաստատեն թէ, եօթը տարիէ իվեր, այս դանակը իմ քովս է։

— Սո՛ւտ կըսէ,— պոռաց Փուշքար. դանակը իմս է և ճիշտ եօթը տարի առաջ զողցան ինծմէ՝ երբ անտառին մէջ որսորդութենէ յոգնած, քնացեր էի միայնակ։ Ես վկաներ ունիմ. ահաւասի՛կ։

Եւ եկան վկաներ, ու մէկիկ մէկիկ հաստատեցին անոր ըսածները։

— Երիտասարդ իշխանը թող երդո՛ւմ ընէ Թագաւորին ու պղատականներուն առջև, ըսաւ Ամիրխաս։ Երդումէն յետոյ ալ՝ թող իր խօսքերը հաստատէ կնիքով, այն ատեն կը հաւատամ որ դանակը իրենն է և կը խոստովանիմ ճշմարտութիւնը։

— Այո՛, այո՛, կերդուընամ,— վրայ բերաւ Փուշքար. կերդուընամ հազար անգամ. թող այսօր արևին հետ իմ ալ արևս խաւարի՝ եթէ սուտ կայ այստեղ։ Դանակը իմս է։

Վկաներն ալ երդուընցան և Փուշքար իր ըսածները կրկին կրկին պնդեց։

Այն ատեն, Ամիրխաս քայլ մը առաջ եկաւ և սկսաւ...

Լեզուին կապերը քակուեր էին և ճարտար խօսքը բերնէն կը հոսէր աղբիւրի պէս։

— Ուրեմն, լսէ՛, տէ՛ր արքայ, լսեցէ՛ք դուք ալ, մեծա՛մեծներ։ Դուք բոլորդ ալ հաստատեցիք որ այս դանակը երիտասարդ իշխանինն է։ Ես, հասարակ հողեղէն մարդ, չեմ կրնար չհաւատալ անոր երդումին և ձեր խօսքերուն։ Ճշմարիտ է. այս դանակը իմս չէ. ես գողցեր եմ։ Մինչև այսօր կը փնտռէի տէրը՝ որ իրեն տամ։ Փլնտռեցի եօթը տարի, վերջապէս այսօր գտայ։

«Կը խնդրե՛մ, տէ՛ր թագաւոր, քու ալրութեանդ գիրքը բանալ տաս և հրամայես կարդալ թէ՝ եօթը տարի առաջ, ի՛նչ նշանաւոր դէպք պատահեցաւ երկրիդ մէջ։

«Եօթը տարի առաջ, ճիշտ այս օրերուն, Թաւրիզէն ճամբայ ելնելու Պաղտատի ամենամեծ կարաւանը, որ բաղկացած էր չորս առանձին-առանձին կարաւաններէ։

«Առաջին կարաւանին ուղտերը բեռնաւորուած էին Հնդկաստանի ակերով ու փղոսկրով։ Երկրորդ կարաւանը կը տանէր Հնդկաչինի ամաններ ու ապակեղէն։ Երրորդ կարաւանին հակերը լեցուած էին Իրանի ու Թուրանի մետաքսեղէններով և թանկագին դիպակով։ Իսկ անոնց ետևէն՝ ջորիներու կարաւանը կը տանէր ուտելիքի ու խմելիքի անսպառ պաշար։

«Այդ չորսին մէջ ամենէն հարուստը՝ Հաճի Իսմայիլի կարաւանն էր, որ առաջնորդն էր միւս երեքին։

«Տասնը ութ օրուայ ճամբայ էին կտրեր, երբ աւազակները գիշերով յարձակեցան կարաւանին վրայ։ Կոտորեցին բոլոր ուղեկիցները՝ սկսած առաջնորդէն մինչև վերջին ծառան. կողոպտեցին ապրանքն ու հարստութիւնը։

«Հաճի Իսմայիլի ամբողջ հարստութիւնը այդ կարաւանին մէջ էր. անոր մահով որբացան կիներն ու զաւակները և սնանկ դարձան։ Կինը էրկանը մահուան լուրն առնելով, գետինն ինկաւ ու իր շունչը փչեց։ Չորս փոքր որբուկները, մերկ ու բոպիկ, փողոցներն ինկան։

«Իսկ մեծ որդին գնաց հօրը դիակը գտնելու, որ գաղտներուն ու ագուաներուն կեր չի դառնայ։ Շատ լեռ ու ձոր ինկաւ, գետ ու անտառ անցաւ, վերջապէս կիրճի մը մէջ տեսաւ հօրը այլանդակուած դիակը։ Վազեց անոր մօտ, որ անոր երեսին վրայ թափէ որդիական արցունքներ։ Գրկեց զայն և անոր կուրծքէն քաշեց դանակ մը։

«Անկէ վերջ, ամբողջ եօթը տարի, Իսմայիլի որդին ո՛չ քուն ունէր, ո՛չ ծածք, ոչ ալ հաց։ Մէկ հատիկ էշը առած՝ կը թափառէր քաղքէ-քաղաք, գեղէ-գեղ։ Կը մտնէր հարուստի ու ազքատի տունը, ուր որ հարսնիք կար կամ մեռելի սգահաց։ Կը հանէր ամէն տեղ դանակը, կը հրամցնէր պատահողին, որպէսզի գտնէ թերևս անոր տէրը, իր հայրն սպաննողը։

«Եւ ահա եօթը ամառ արևի տակ խաշելով, եօթը ձմեռ փուքի տակ սրսփալով, այսօր կեցած է անիկա քու առջևդ, տէ՛ր...։ Ե՛ս եմ Հաճի Իսմայիլին զաւակը, և այս դանակը հօրս կուրծքէն եմ քաշեր։ Ահա՛ իմ հօրս սպաննիչը և դանակին տէրը։

«Պահանջէ՛ անկէ, ո՛վ արդարադատ թագաւոր, հօրս արեան գինը և կորսնցուցած հարստութիւնը...»

7

Պալատականներուն հետ, նոյն իսկ թագաւորը դողաց այս խօսքերէն։ Փուչքարի երեսը մոխիր դարձաւ,



դողդոջին ծնկուընները և քիչ կը մնար որ գետնատապալուէր։

— Ո՛չ, դանակը խմ չէ, գոչեց անիկա դողդոջուն ձայնով...

— Հօրս արեան գինը կուզեմ, ո՛վ արդարադատ թագաւոր, կը պոռար Ամիրխան՝ հեազհատ բարձրացնելով ձայնը։

— Մահը քիչ է,— գոչեց թագաւորը. հանեցէ՛ք ատոր վրայէն իշխանական լաթերը, զէնքերն ու զարդերը։ Խլեցէ՛ք անկէ իր ամբողջ հարստութիւնը։ Աճո՛ւրդի հանեցէք անոր բոլոր ստացուածքը, և ոսկին ու ակնեղէնները տուէ՛ք Իսմայիլի զաւկին։ Հագցուցէ՛ք ատոր՝ իր ընտանիքին հետ, ստրուկի լաթեր, և թող դառնայ Իսմայիլի զաւկին ջուր կրող գրասը։

— Գթութի՛ւն... խեղդուկ ձայնով մռնչեց Փուշքար, և երեսի վրայ ինկաւ գետին։

— Աւաղակին ու մարդասպանին գթութիւն չի կայ,— գոչեց թագաւորը։

— Այո՛, գթութիւն չի կայ աւաղակին,— աղաղակեց Ամիրխան. գլխատել տո՛ւր զայն, տէ՛ր...

Փուշքար սղոցեց Ամիրխանին ոտքերուն քով և գթութիւն կը խնդրէր, բայց Ամիրխանին սիրտը քար էր կարեր։

Դահիճները կուզէին կապկպել Փուշքարը, բայց Խիկար, որուն հրամանը դահիճներուն համար թագաւորի հրաման էր, ձեռքով նշան ըրաւ սպասելու, և առաջ եկաւ.

— Թագաւո՛ր, երկու խօսք տուր ինծի։

Եւ հրաման առնելով, դարձաւ Ամիրխանին ու ժըպտելով ըսաւ.

— Դո՛ւն, ո՛վ անծանօթ օտարական, լսէ՛ ինծի այսպէս՝ ինչպէս գիշերը էշը կը լսէր գաւազանիս հարուածներուն տակ՝ օղի՛կ-օղի՛կ գալով։ Մի՛ ըլլար իշավարի մարդ՝ երէկուան պէս. այլ եղի՛ր մարդավարի էշ՝ ինչպէս գիշերն էիր ախոռին մէջ...

— Մահը մեր ձեռքին մէջ է ու չարը մեր ոտքերուն տակ. չի կայ մէկը որ մահէն փախչի ու փորձանքէ հեռու կենայ։ Երէկ մահը Փուշքարին ձեռքն էր, այսօր՝ քու։ Երէկ անոր ամէն մէկ քայլը քեզի համար փորձանք էր, այսօր՝ քուկդ անոր համար։ Ինչ օգուտ, եթէ անիկա քեզ սպաննել տար՝ քու տխմարութեանդ պատճառով. ու ինչ օգուտ եթէ դուն զինք սպաննել տաս՝ իր

անապարծութեան համար։ Ո՞վ է Հաճի Իսմայիլը,— ո՛չ դուն կը ճանչնաս զայն և ոչ ալ Փուշքարը. թո՛ղ երիտասարդը ազատ, վերցո՛ւր դանակդ ու գնա՛ ճամբադ...

Բոլորը զարմացած՝ իրարու երես կը նայէին ու լաւ չէին հասկնար բանին էութիւնը։

Խիկար, դառնալով Փուշքարին, ըսաւ.

— Մարդը փորձանքի մէջ ձգելը հեշտ բան է. բայց անմեղ մարդուն վրայ յանցանք բարդելն ալ դժուար չէ։ Դո՛ւն, երիտասա՛րդ իշխան, անման ես Հաճի Իսմայիլի ապանութեան մէջ, ուստի պէտք չէ որ գլուխդ դնես դահիճի տապարին հարուածներուն տակ։ Բայց, լա՛ւ իմացիր, ուրիշին մահամութեան վրայ ծիծաղիլը և ուրիշը չար փորձանքի մէջ ձգելը՝ փորձանքի դուռ կը բանայ մեզի համար։ Եւ որովհետև դուն քու անապարծութեանդ պատճառով ուրիշը մահուան փորձանքի մէջ կը ձգէիր, արժանի է որ քաւես յանցանքդ։ Դուն հարստութեան ու պատանեներու տէր ես, իսկ այս օտարականը՝ թշուառին մէկը։ Մաս հանէ քու հարստութենէդ անոր, և անիկա, թշնամութեան տեղ՝ թող քեզ օրհնելով հեռանայ մեր երկրէն։

Ամէնքը հասկցան թէ բանն ի՛նչ է, և հիացումով կը նայէին Խիկարին։

Չի համբերեց Ալթուն թագաւորը և գլուխը խոնարհեցնելով Խիկարին առջև, ըսաւ.

— Իմաստուն ես, Խիկա՛ր, և քու իմաստութեանդ առջև՝ ծածկուած արդարութիւնը կը ծաղկի, ինչպէս արևին տակ ձիւնծաղիկը։ Կարեկից ես թշուառին, և կարեկցութիւնը քու իմաստութեանդ վարդն է։ Թող այդ վարդը մշտապէս բացուի իմ տէրութեանս մէջ։

Ամէնքը կօրհնէին Խիկարը. իսկ Փուշքար՝ չի համարձակելով անոր քղանցքները համբուրել, մօտեցաւ Ամիրխասին և փաթթուեցաւ անոր վիզը։ Ցուն տարաւ զայն, լաւ հիւրասիրեց և հազար ոսկի տալով՝ ուղեկցեցաւ անոր, մինչև քաղաքէն դուրս...։

ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼԸ

Գարնան անձրեւի կաթիլը փայլուն՝
օրին մէկն հարցուց իր ընկերներուն.
— «Ինչու մենք աղտատ այս խրճիթին հին
լուսամուտն այսպէս կը բաղխենք ուժգին։»

Կաթիլներն ըսին.— «Է՛յ, եղա՛յր բարի,
«այստեղ երկրագործ մշակը կապրի.
«Քաղցր աւետիս մենք կուտանք անոր,
«քէ՝ արտն է ծաղկեր, կանի ամէն օր։»

ԿԼԱՅԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏ ՍԱՀԱԿԸ

1

Վարպետ Սահակը մտաւ գիւղը, ետին ձգած իր էշը՝ որուն շրուշակէն կը քաշէ աշկերտ Մինասը։

Կանգ առաւ ժամուն դռան առջև, իշուն քամակէն վար իջեցուց խուրձը՝ որուն մէջ դրուած են իր գործիքները,— փքոցը, մուրճը, կայեկ...

Վարպետը նստաւ ժամուն դռան առջևի ճերմակ քարին վրայ, սրբեց ճակտին քրտինքը, հանեց իր ծխախոտը և սիկառ մը վառեց։ Ցողներ է խեղճը՝ քաղաքէն մինչև գեղը քալելով։

Աշկերտ Մինասը յարդին տոպրակը անցուց իշուն գլուխը, ու զիլ ձայնով պոռաց.

— Տանտիկիններ՝, կլայագործն է եկեր... ո՞վ ունի սան ու կաթնայ, ման ու չման...

2

Ահա բոլոր դռներուն առջև կերևնան տանտիկինները. ձեռքերնին բռնած են սեպ-սև տապակներ, դեղնած չերեփներ, կաթնաման, սան ու պնակներ...

Կը բերեն, կը դիրեն վարպետ Սահակին առջև։

Կլայագործ Սահակը ամէն տարի, գարնան, կու գայ գեղը. տանտիկինները ամէնքն ալ ծանօթ են իրեն։ Սակարկութիւն չեն ըներ։ Վարպետը տուն-տուն կը կլայեկէ ամանները և, հունձքին, կու գայ՝ կը հաւաքէ իր վարձքը։

Մէկը կոտ մը ցորեն կու տայ, միւսը՝ հաւկիթ, ուրիշ մը՝ հաւ ու վառեկ, և չատեր՝ ոսպ ու սիսեռ։

3

Ահա վարպետ Սահակը գործի կը սկսի. կը քննէ, մէկիկ-մէկիկ, իր առջև դիզուած ամանները. Կաթսայեան քէհեանենց տապակը ծակեր է, պէտք է կարկատան ձգել. քէհեա Յովսեփենց պղինձին երկու անկերն ալ մէկէն փրթեր են, պէտք է նորոգել...



Աշկերտ Մինասը կը վառէ կրակը, գործիքները կը դնէ որ տաքնան ու կը փչէ փուքը։

Էշը հանդարտ-հանդարտ, իր տոպրակին մէջէն կուտէ յարդը, և տեղ տեղ գլուխը կը տանէ իր կողին քով, կը փախցնէ չհասանները։

— Աւազէ անցո՛ւր սա պնակները, կը հրամայէ վարպետ Սահակ իր աշկերտին։

Աշակերտն է կը հանէ կօշիկները, կը բոպկնայ, մատները աւազը կը լեցնէ պնակներուն մէջ և ոտքով կը յղկէ զանոնք, կը յղկէ արա՛գ արա՛գ։

Գարուն օր է, արեգակը տաք. քրտինքը Ջուրի պէս կը հոսի աշկերտ Մինասին ճակտէն դար վար։

4

Կաշխատին վարպետ ու աշկերտ՝ մինչև իրկուն. կը յղկեն, կը մաքրեն, կը նորոգեն ու կը կլայեն մէկ քանի օր։

Տեսէ՛ք, ինչպէս ծուռ՝ ու մուռ սափորները չիտվուեր են. սև տապակներն ու դեղնոտած սանները կը փայլին ճերմակ ձիւնի պէս։ Այլ վախ չի կայ որ պղինձները ժանգ զարնեն։

Տանտիկինները կուգան, կառնեն մէկիկ մէկիկ իրենց ամանները. կը դարձնեն իրենց ձեռքերուն մէջ, կը նային ամէն կողմը, և կուրախանան՝ տեսնելով որ նոր-նոր են եղեր։

Վարպետ Սահակ կը հաւաքէ իր գործիքները, կը բառնայ իշուն, կերթայ մօտիկ գիւղը, որպէսզի կալին վերադառնայ և հաւաքէ իր վարձքը։

1. Ինչո՞ւ կը կլայեն պղնձէ ամանները։
2. Դուք ինչ պղնձէ ամաններ ունիք։
3. Ինչ բանի կը գործածէք զանոնք, ըսէք մէկիկ մէկիկ անոնց գործածութիւնը։

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ

1

Առիւծ - Մրհերը զարմով դիւցազուն,
քառասուն տարի էր որ կիշխէր Սասուն.
կիշխէր ան անեղ, ու անոր օրով
թշուն չէր անցներ Սասմայ սարերով։
Սասմայ սարերեն շա՜տ ու շատ հեռու
կը բընդար անոր հռչակն անարկու.
կը խօսուէր իր փառքն, արարքն անվեհեր,
հազար բերան էր մէկ Առիւծ - Մրհեր։

2

Այսպէս անաւոր առիւծի նման՝
Սասմայ սարերը նստած էր իշխան

քառասուն տարի։ Քառասուն տարի
«ախ» չէր քաշեր դեռ իր սիրտը արի.
բայց հիմա երբ որ եկաւ ծերացաւ,
այն անահ սրտեն ներս սողաց մէկ ցաւ։
Սկսաւ մրտածել դիւցազուն ծերը.
— Հասեր են կեանքիս աշնան օրերը,
շուտով սեւ հողին ես կերթամ գերի.
կանցնի ծուխի պէս փառքը Մրհերի,
կանցնին ե՛ւ անուն, ե՛ւ սարսափ, ե՛ւ ահ.
իմ անտեր ու որբ աշխարհիի վրայ
ոտքի կը կենան հազար քաջք ու դեւ...
ժառանգ մը չունիմ՝ իմ անցման ետեւ,
որ թուրս կապէ, պահպա՛նէ Սասունի...։»
Ու մեծ տարտ կրներ հրսկան ծերունի։

3

Օր մրն ալ այն գորշ յօնքերը կախած՝
երբ կը մրտմրտար, երկինքեն յանկարծ
հուր - հրեղեն մը երեւցաւ քաջին,
ոտքերը ամպոտ՝ կեցաւ իր առջին։
— Ողջո՛յն երկնամերձ Սասնոյ հրսկային.
քու ձայնդ հասաւ Աստծու գահին,
ու շուտով Ան քեզ զաւակ մը կուտայ։
Բայց լաւ իմանա, լեռնե՛ր ու արքայ,
ո՛ր օրը որ քեզ ժառանգ է տուեր՝
այն օր կը մեռնիք քու կինդ ալ, դուն ալ։
— Իր կա՛մքը ըլլայ, ըսաւ Մրհերը,
մենք մահուանն ենք միշտ ու մահը մերը.
բայց որ աշխարհքը ժառանգ ունենանք,

մենք այդ ժառանգով անմեռ կը մընանք:
Հրեշտակն այստեղ ցոլացաւ նորէն,
ու այս երջանիկ աւետման օրէն
երբ ինը ամիս, ինը ժամ անցաւ,
Առիւծ - Մրիները զաւակ ունեցաւ:
Դաւիթ անուանեց իրեն կորիւնը,
կանչեց իր եղբայր Զէնով Օհանը,
երկիրն ու որդին աւանդեց անոր,
ու կինն ալ, ինք ալ մեռան այդ մէկ օր:

4

Այդ դարուն Մըսրը անյաղթ ու հզօր
Մըսրայ - Մելիքն էր նստած թագաւոր:
Հէնց որ իմացաւ թէ Մրիներ չի կայ,
կրռիւի եկաւ Սասունի վրայ:
Զէնով Օհանը անէն սարսափած,
թշնամիին դէմն ելաւ գլխաբաց,
աղաչանք ըրաւ, ինկաւ ոտքերը.
— Դո՛ւն եղիր, ըսաւ, մեր գլխուն տէրը.
ու քու շուքիդ տակ քանի որ մենք կանք,
քու ծառադ ըլլանք, քու խարնդ միշտ տանք,
միայն մեր երկիր քար ու քանդ չընես
ու քաղցր աչքով դուն մեզ պահպանես:
— Չէ՛, ըսաւ Մելիք, քու ամբողջ ազգով
պէտք է որ անցնիք իմ բրիս տակով
որ ասկէ ետք ես ինչ ալ որ ընեմ՝
ոչ մէկ սասունցի թուր չառնէ իմ դէմ:
Ու գընաց Օհան, բոլոր բովանդակ

Սասունը բերաւ, քաշեց բրրի տակ.
միանակ Դաւիթը, ի՞նչ ալ որ ըրին,
մօտ չեկաւ տուշման Մելիքի բրրին:
Եկան քաշեցին որ զօրով տանեն.
թորուբուաւ, մարդիկ ցրուեց դէս ու դէն:
Փոքր նկոյթն որ քարի մը զարկաւ,
ապառաժ քարէն կրրակ դուրս բրուաւ:
— Պէտք է սպանենք ես խենդն այս փոքրիկ,
ըսաւ թագաւորն իրեն մեծերուն:
— Թագաւո՛ր, ըսին, դուն այսքան հզօր,
թուրիդ տակն առիր Սասունը այսօր,
ի՞նչ կրնայ ընել քեզ մէկ երեխայ,
երէ ինք ամբողջ կրրակ ալ դառնայ:
— Դուք գիտէք, ըսաւ Մսրայ թագաւոր,
բայց եթէ գլխուս փորձանք գայ մէկ օր,
այսօրը վրկա՛յ,
ասկէ՛ պիտի գայ:

ՄԵՂՈՒՆԵՐՆ ՈՒ ՊԻԾԱԿՆԵՐԸ

1

Կէսօրուան նաքի դասին, մեր ուսուցիչը պատմեց Մեղուին և Պիծակին առակը։

Ինչպէս կըլլայ, ինչպէս չըլլար, չերտ մը մեղրախորիսխ կը գտնուի տեղէ մը։

Անոր տէր կելլեն պիծակները. մեղուները կը հասնին թէ, չէ՛, մեղրախորիսխը մե՛րն է։

Գործը հանեցին Իշամեղուին դատաստանին։

Խնդիրը վիճելի էր. ուստի, վկայութեան կանչուեցան մրջիւն մը և ծղրիթ մը։ Վկաները յայտարարեցին թէ՝



— Շատ անգամ տեսանք որ մեղրախորիսխին բոլորտիքը կը թռչտէին թուխ գոյնով, քիչ մը երկար ձևով, բզզացող, և մէկ մէկ կնճիթ ունեցող թեւաւոր կենդանիներ։

— Ինչ մեծութեան կայն ասոնք, հարցուց Իշամեղուն։

— Պզտիկ կաղինի մը չափ կամ ատոր մօտ բան մը,— պատասխանեց մրջիւնը։

Իսկ ծղրիթը, քիչ մը մտմտալէ ետք, ըսաւ.

— Պզտիկ խոզկաղինի մը չափ կային ու չի կային։

Դատարանը բաւարար լուսաբանութիւն ստացած չէր։ Հարկ եղաւ նոր քննութիւն մըն ալ կատարել։

Այդ միջոցին, թռաւ մեղու մը, եկաւ կեցաւ դատական ամպիոնին առջև։

— Տէ՛ր նախագահ,— ըսաւ մեղուն. դուք մինչև որ ձեր քննութիւնը լմնցնէք, մեր մեղրը կաւրուի, կը լմննայ. ճշմարտութիւնն հասկնալու համար՝ շատ աւելի դիւրին միջոց մը կայ. թող գան պիծակները ու մեղի հետ աշխատին. տեսնենք թէ մեզմէ ո՞րը կրնայ ծաղիկներու հիւթէն շինել այդ քաղցր հեղուկը և այդ ճարտարարուեստ բջիջները։ Թող գործէն ճանչցուի գործաւորը։

Պիծակները մերժեցին այս առաջարկը. ասոր վրայ, Իշամեղուն յայտարարեց որ՝ մեղրախորիսխը մեղուներունն է։

2

Երբ դրաւոր պարտականութեան այս դասը լմնցաւ, մեր ուսուցիչը անցաւ Թուաբանութեան դասին։

Դառնալով ինծի, ըսաւ.

— Սիսա՛կ, կարդացի խնդիրդ, շատ ճիշտ լուծած ես. եկո՛ւր գրատախտակին առջև, անգամ մըն ալ հո՛ն լուծէ։

Խնդիրն ան էր որ՝ աղբիւր մը այսքան ատենէն կը լեցնէր աւազան մը. ծորակներ կային՝ որ այսքան ատենէն կը պարպէին ջուրը. պէտք էր գտնել թէ՝ ո՞րքան ատենէն կը պարպէին։

Դացի գրատախտակին առջև. բա՛յց, «այսքան» խորհրդաւոր ջուրին ու «այսքան» ժամերուն մէջ դարձա՛յ-դարձա՛յ, մէջէն դուրս չի կրցայ ելլել։

Ուսուցիչը տեղս խրկեց գլս, և գրատախտակին առջև կանչեց Խոսրովը։

Խոսրով ջնջեց իմ թուանշաններս և երկու բոպէի մէջ լուծեց խնդիրը։

Այն ատեն, ուսուցիչը նորէն դարձաւ ինծի և ըսաւ.

— Հիմա կը հասկնամ թէ ի՞նչու երէկ, երբ տուած այս խնդիրս կը լուծէիք, ծռեցար և Խոսրովին ոտքին առջևէն աւիր ծալուած պզտիկ թուղթ մը. կերևի թէ...

— Այդ թուղթը... այդ թուղթը... կակազեցի ես։

— Այդ թուղթը, ըսաւ ուսուցիչս... մեղուներուն մեղրախորիսխին էր, որուն տէր ելլալ կուզէին պիծակները... և պիծակները միայն խաբեբայ չէին, այլ դեռ ստախօս և գող, որ ուրիշին արժանիքը իւրացնել կաշխատէին...

Այս յանդիմանութիւնը այնչափ ծանր էր՝ որ ամօթէս գետինն անցայ։ Բայց, հաւատացէ՛ք, անկէ ասդին՝ ա՛լ հեղ մըն ալ մտքէս չանցաւ ուրիշին արժանիքը իւրացնել։

ԽԵԼԱՑԻ ԱՂՋԻԿԸ

1

Այն ժամանակ, երբ Ֆրանսացիները կը պատերազմէին Գերմանացիներուն հետ, սահմանագլուխի փոքրիկ գեղի մը մէջ կապրէր ծերունի մարդ մը՝ իր կնոջ և պզտիկ թոռան հետ։

Ծերունիին հինգ զաւակներն ալ մեռեր էին պատերազմին մէջ և իրենց մխիթարութիւն մնացեր էր միայն փոքրիկ Անանն։

Օր մը, առաւուանց, երբ մեծ-մայրը հաց կեփէր, Անանն, յանկարծ, սարսափահար ներս վազեց և գոչղղալով ըսաւ.

— Մե՛ծ-մայր, մե՛ծ-մայր, Ֆրանսացիք հոս կուգան... անոնք արդէն մօտեցեր են գեղին... մեր դրացի Մարիամն ըսաւ... գեղացիք ամէնքն ալ խորհուրդ կընեն որ փախչին, որովհետև զինուորները կը սպանեն ու կայրեն տունները...։

2

Պառաւը սկսաւ աղի-աղի արցունք թափել... բաւական չէր որ կորսնցուցեր էր իր հինգ զաւակները, հիմա ալ պէտք է զրկուէր իր տունն ու տեղէն։

... Ելան ափալ-թափալ հաւաքեցին բոլոր թանկագին իրերը և պատրաստուեցան փախչիլ գեղէն։ Անանն ինք ալ կօգնէր և կը մտածէր.

— Արդեօք կարելի չէ՞ ճար մը գտնել և ազատել մեր տունը...

Յանկարծ, միտքը բան մը ինկաւ։

Առաւ կաւոր մը թուղթ, կիսեց, երկու մասի բաժնեց և ամէն մէկ կտորին վրայ գրեց.

«Պարո՛ն զինուորներ.

«Ես, տասնըչորս տարեկան Անանա Յովհաննէսեանս, կապրիմ այսպեղ՝ իմ մեծ-հօրս և մեծ-մօրս հետ, որոնք շատ կը սիրեմ և որոնք մէկու մը չարութիւն չեն ըրած։ Կը խնդրեմ ձեզմէ, բա՛րի զինուորներ, գթացէ՛ք, չայրէք մեր տունը։ Գուցէ դուք ալ, ձեր հայրենիքին մէջ, ունիք ինծի պէս փոքրիկ քոյրեր և իմ մեծ-հօրս ու մեծ-մօրս պէս ծեր ծնողքներ. գոնէ զանոնք յիշելով՝ խղճացէ՛ք մեզի... Դուք մեր մառանին մէջ կը գտնէք հաց և ուրիշ ուտելիքներ. առէ՛ք, կերէ՛ք... Մենք ձեզի դեռ շատ բան կը թողէինք՝ եթէ կարողանայինք...։» Անանա Յովհաննէսեան

Հիմա, պէտք էր հնար մը գտնել՝ որ նամակը զինուորներուն ձեռքն անցնէր։

Երբ որ փախստականները գիւղէն բաւական հեռացեր էին, Անանն ըսաւ.

— Վա՛յ, մոռցայ բաղերը անտառը քշել. երթամ, շուտ մը քշեմ, գամ. ես շուտով կը գտնեմ ձեր թագստոցը։

Վազեցէ վազ տուն հասաւ, բաղերը դուրս քշեց մարգէն, հանեց գրած նամակները, մէկը փակցուց դուրսի դռան, միւսը՝ խոհանոցի դռան վրայ։

3

Իրիկուան դէմ, մէկ քանի վաշտ Ֆրանսացի զինուորներ գեղը մտան։

Գնդապետը շատ հաւնեցաւ Անանայենց տանը և զայն բնակարան ընտրեց իրեն համար։ Ներս մտնելու ատեն, յանկարծ աչքին դպաւ դռան վրայ փակցուած թղթի կտոր մը։ Հետաքրքրուելով, կարդաց Անանային նամակը։

— Սիրելի աղջիկ, ըսաւ ինքնիրեն գնդապետը. իրա՞ւ մենք այնքան անգութ կրլլանք որ կայրենք քու տունդ... ապնիւ զինուորը աւազակ չէ...

Անմիջապէս կանչեց բոլոր սպաները և հրամայեց որ

չըլայ չըլա՛յ թէ զինուորները տուն թալլեն կամ այրեն։

— Միայն թէ, քանի որ անօթի են, թող ուտեն գտած ուտելիքնին, հաւերն ու բադերը։

Սակայն, գնդապետը պատուիրեց որ Անանայենց բադերէն մէկ հատը ողջ թողուն։

4

Միւս օր, զօրքը հեռացաւ գեղէն։ Վախէն կիսամեռ գեղացիք վերադարձան իրենց տունները։ Անոնք հաւատացած էին որ միայն կրակէն սեցած պատեր ու մոխիր պիտի գտնեն...

Բայց, որքա՜ն զարմացան, երբ տեսան որ իրենց բնակարանները այրած չեն, և ոչ ալ իրենց արտերը կոխկրտուած։

Անանան ուրախ-ուրա՜խ վազեց բակը. տեսաւ իր բադը՝ որ միս-մինակ, ախուր կանգնած է պատին տակ։ Վազեց անոր քով, մօտեցաւ և տեսաւ որ թռչունին վիզէն բան մը կախուած է. փրցուց և գտաւ փոքրիկ քսակ մը, և տոմսակ մը, որուն վրայ գրուած էր.

«Սի՛րելի աղջիկս, կը խրկեմ քեզի մեր բարեները։

«Ներէ՛ որ մենք օգտուեցանք քու բադերէդ. անոնց փոխարէն՝ կը թողում քեզի այս քսակին դրամը. անով կրնաս նորեր գնել։ Քու բադդ կուտայ քեզի այս նամակը և մեր բոլորիս բարեները»։

Տոմսակին տակ ստորագրեր էին գնդապետը, բոլոր սպաները և մէկ քանի զինուորներ։ Իսկ քսակին մէջ կար երեք-չորս ոսկի։

Շուտով ամբողջ գեղը իմացաւ այս բանը. և ամէնքը, մեծ ու պզտիկ, եկան շնորհակալութիւն յայտնեցին Անանային՝ որ այսպէս ազատեց իրենց տունները։

Մայրը իր տղերով

ՀԱՅ-СОР

ՓԱՅՏԱՀԱՏՆ ՈՒ ՄԱՀԸ

Ծերն հազալով, տրֆալով,
թոյլ ծունկերուն զօր տալով՝
մէջքին ցախը վար առաւ,
նըստաւ այսպէս սուգ ըրաւ.
— Ես տուն ունիմ՝
դուռ չունի,
թոնիր ունիմ՝
խուփ չունի։
Զիւնն է ծածկեր դրռնակս,
փարտն է մաշկեր կրռնակս։
Ես ծե՛ր... անցա՛ծ...
տունով քաղցած.
հա՛ մերկ... հա՛ զուրկ...
տալիք ու տուրք...
խարն ու խարան...
ա՜խ, վա՛յ, ա՜խ, վա՛յ...
ո՞ւր ես, սե՛ւ մահ,
աս ալ ապրո՞ւստ...»
Մէյ մ՚ալ պրպուստ
մահը ահա.
— Ծերո՛ւկ, ի՞նչ կայ։»
— «Հէ՛չ, բան չիկա՛յ...»
փրրրած լեղին,
մոմէն դեղին՝
կրմկրմալով
ու հազալով
ծերուկն բաւ.
«Մէկը չի կար

«որ այս փայտը շալակս տար..
«ապրի՛ս, տեսա՞ր,
«ի՞նչ շուտ հասար.
«փայտս բարձիր,
«դուն ետ դարձիր:»

Ո՞Վ Է ՀԱՐՈՒՍՏԸ

Մարդուն մէկը ամէն առեն կը գանգատէր ու կըսէր.

— Հէ՛յ Աստուած, ուրիշներուն գրկով հարստութիւն ես տուեր ու ինձի չես տար. ի՞մ մեղքս ի՞նչ է... ե՞ս ինչո՞վ պակաս եմ ուրիշներէն...

Ծերունի մը լսեց այս խօսքերը և հարցուց մարդուն.

— Ո՞վ ըսաւ որ հարուստ չես դուն. տե՛ս, կարիճ երիտասարդ ես, ուժով բազուկներ ունիս, առողջ ես:

— «Զէ» չեմ ըսեր առանց. իրա՞ւ է որ ուժս տեղն է և կրնամ առողջութեանս վրայ հպարտանալ:

Ծերունին, այն առեն, մարդուն աջ ձեռքը բռնեց և հարցուց.— Եթէ հարիւր ոսկի տուող ըլլայ, կը թողո՞ս որ այս ձեռքդ կարեն:

— Աստուա՛ծ չընէ:

— Հապա ձա՞խ ձեռքդ:

— Ամենևի՛ն:

— Որ հազար ոսկի տան, երկու աչքերէդ կանցնի՞ս:

— Երկու աչքս չէ, մէկ աչքս անգամ չեմ տար՝ կշիռքովս տան անգամ ոսկի ալ համբեն ինձի:

— Կը տեսնե՞ս հիմա, ըսաւ ծերունին, թէ՝ առողջ մարդը քիչ հարուստ չէ աշխարհքիս մէջ:

ՃՇՄԱՐԻՏ ՍՓՈՓԱՆՔԸ

Եղաւ որ այրի կնոջ մը մէկ հատիկ զաւակը մեռաւ, ձգելով իր մայրն ու որբ մանուկները սուգի և աղքատութեան մէջ:

Մեռնողին վշտահար մայրը պատռտեց հագուստները, սևեր հագաւ, մազերը փետտեց, մոխիր ցանեց գլխուն ու եկաւ գնաց գերեզմանատուն. գնաց ու նստաւ իր զաւկին թարմ գերեզմանին քով:

Առտու ու ցորեկ, իրկուն ու գիշեր. նստեր էր մայրը գերեզմանին քով, նստեր էր ու կու լա՛ր, կու լա՛ր:

— Խե՛ղճ կին, կըսէին գեղացիք իրարու. ի՞նչ զուլումի հանդիպեցաւ. լացէն աչք չի բանար ու տուն չի դար...

Եւ հաւաքուեցան գեղին փորձառու ու խելացի ծերունիները. գացին գերեզմանատուն՝ վշտահար մօրը քով, և ըսին անոր.

— Հերի՛ք է լաս, ա՛յ խեղճ կին. լացավ կորուստդ ետ չի դառնար. աշխարհքիս օրէնքն է՝ ծներ ենք, պիտի մեռնինք. ո՛վ որ ողջ մնայ, ան թող պարծենայ. մահը մե՛րն է, մենք մահուանը. լեռներն ալ կը մաշին, ծովերն ալ կը ցամքին, թագաւորներն ալ կը մեռնին. սիրտդ մի՛ ըլար, երանի՛ տուր հանգուցեալին հոգիին, եկուր տուն ու տիրութիւն ըրէ որբերուն...

Այսպէս, խելոք-խելոք խօսքեր շատ ըսին ծերունիները և շատ խրատներ տուին. բայց սղաւոր մայրը վեր չի բարձրացուց գլուխը, մնաց անսփոփ և շարունակեց իր լացն ու հեծկլտուքը...

Ծերունիները, յոյսերնին կտրած, երերցնելով իրենց մօրուքները՝ հեռացան։

Բայց որբուկները մնացեր էին տունը, մարած օճախին բոլորտիքը՝ անօթի ու անտէր. ու իրենց մեծ-մայրը գերեզմանոցը նստած, կու լար առատ ու ցորեկ, իրկուն ու գիշեր, կու լա՛ր անյոյս ու անմխիթար։

Հաւաքուեցան գեղին հարուստները, եկան գացին յուսահատ մօրը քով և ըսին անոր.

— Հերի՛ք է լաս, մեռնողը մեռաւ, ողջ մնացողը պիտի ապրի, տո՛ւն դարձիր, խենդ մի՛ ըլար. հաւաքէ որբուկներդ գլուխդ, խնամէ՛, մեծցուր. քարէ պղտիկ չեն, մարդէ պղտիկ են. վաղը կը թեւաւորին, կը թռին ու կը բռնեն իրենց հօրը տեղը. մենք ալ քու դուռ-դրացիներդ ենք, օտար չենք, քու որբերդ ալ մերն են. երդո՛ւմ քեզի գեղին առջև, աշխարհին առջև՝ որ ձեռքերնուս եկածը չենք խնայեր քու թոռներուդ համար... մխիթարուիր, ելի՛ր, տուն դարձիր...

Բայց սգաւոր մայրը մտիկ չըրաւ անոնց, վեր չի վերցուց գլուխը և լացաւ աւելի անմխիթար ու անյոյս։

Այս միջոցին, ճամբորդ մը կանցնէր գնդին մէջէն. լսեց դժբախտ մօր սրտամորմոք լացը և լեցուեցաւ իր սիրտն ալ վշտով։

Հարց ու փորձ ըրաւ գեղացիներուն, հասկցաւ բանը. և անծանօթը փղձկեցաւ ինք ալ. ծռեցաւ գետին, գրկեց վշտահար մօր ոտքերը, գլուխը դրաւ անոր ծունկերուն վրայ և լացա՛ւ սրտանց, լացաւ մեծ կսկիծով...

Այդ ժամանակ, սգաւոր մայրը գլուխը վեր վերցուց, սրբեց արիւնաքամ աչքերը, սփոփանքի խորունկ հառաչ մը հանեց կուրծքէն և ըսաւ իր շուրջը հաւաքուած դրացիներուն.

— Հիմա մխիթարուած եմ ես. այս օտարականը բաժնեց իմ ծանր վիշտս, առաւ վշտիս կէսը, թեթեւցուց հոգիս. դուք ինձի պաղ-պաղ խրատներ կուտայիք. իսկ անծանօթը իր սիրտը տուաւ ինձի. զգաց իմ ցաւս, կրեց իմ տանջանքս, սգաց ինձի հետ...

Այսպէս ըսաւ սփոփանք գտած մայրը, ոտքի ելաւ և քալեց դէպի իր օճախը։



ՀՈՎՈՒԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Լեռան լանջն է մահճակալ,
չեչոտ քարը՝ գլխակալ,
հին կապերտ մը իր ուսին՝
այս է հովուին անկողի՛ն։
Երբ անձրեւը կաթկըթէ,
ծեծէ կապերտն հին լաթէ,
հովիւն՝ անամպ ցունի մէջ
քաղցր երազ կը տեսնէ,
ու կը ժրպտի, կը խնդայ։
Լսէ, հովի՛ւ, է՛յ տըղայ,
ցունըդ անո՛ւշ,
շահար ու նո՛ւշ...

ԾԵՐՈՒԿ ԹԱԳԱՒՈՐԸ

1

Կէս գիշեր էր, բայց ծերունի թագաւորը դեռ չէր քնացեր։

Վերջին ատենները սիրութիւն կուգար վրան։

— Երևի մահս կը մօտենայ... շշնջեց թագաւորը. և յանկարծ, այնպէս վախ ինկաւ սիրտը, որ փափաքեցաւ անպատճառ մէկու մը երես տեսնել, մէկու մը ձայն լսել։

Առաւ զանգակը և սկսաւ արագ-արագ հնչեցնել, կանչելով գիշերապահ մանկաւիկը։

Սակայն մարդ չէր գար։ Թագաւորը շունչը իրեն քաշեց, ականջ դրաւ և ձեռքով չփեց երեսը։

— Արդեօք քունի մէ՞ջ եմ, ըսաւ ինքնիրեն. արդեօք մեռա՞ծ եմ...

Նորէն զանգահարեց շտապով, և նորէն պատասխան չի կայ։

Ծերուկ թագաւորը, ոտքերքալով, ոտքի կեցաւ բազկաթոռէն, և կռթնելով գաւազանին՝ դուրս եկաւ իր առանձնասենեակէն, մտաւ մանկաւիկին սենեակը։

2

Ի՜նչ տեսնէ աղէկ։

Սեղանին վրայ երկու վառած մոմ, իսկ սեղանին առջև, աթոռին վրայ նստած՝ գիշերապահ մանուկը խորունկ քնա՛ցեր է։ Քովը ինկած է թուղթ մը, թուղթին քով ալ՝ գրիչ ու թանաքաման։

— Ես քեզի ցոյց կուտամ, ծո՛յլ անպիտան, ըսաւ սրտնեղած թագաւորը։

Բայց, յանկարծ, իր ուշադրութիւնը գրաւեց անոր քով ինկած թուղթը։ Նայեցաւ. տեսաւ որ կիսատ մնացած նամակ մըն է, որ մանկաւիկը գրած է իր մօրը։

«Սիրելի՛ մայրիկ, շնորհակալութիւն էք յայտներ՝ որ գրամ եմ խրկեր ձեզի։ Ինչպէ՞ս չի խրկէի։ Դուք գիտէք թէ՝ ո՛րքան կը սիրեմ մեր «ծերուկը». անիկա ամէն օր կը կրկնէ թէ «երախտամոռութեան պէս ատելի և գէշ արատ չի կայ...» Դուք գիտէք թէ մեր թագաւորը ամէն յանցանքի, ամէն թերութեան կը ներէ, բայց տեսնել անգամ չուզեր երախտամոռ մարդուն երեսը...»

Ահներև էր որ այս բառին վրայ՝ մանուկին քունը տարած էր։

— Ահա թէ ի՞նչ, շշնջեց թագաւորը։ Է՜, հապա ա՞ս ի՞նչ է։ Եւ քնացած մանկաւիկին գրպանէն կամացուկ դուրս հանեց ճմրթկած թուղթ մը։

«Շնորհակալ եմ քեզմէ, սիրելի՛ զաւակս, որ չես մոռնար քու ծերունի մայրդ և գրեթէ ամբողջ ամսականդ անոր կը խրկես։ Իսկ որ կը գրես թէ՝ աւագ սպաները կը հարկադրեն քեզ կարգէդ աւելի գիշերապահութիւն ընել՝ երեք գիշեր իրարու վրայ, համբերանք ունեցիր, զաւա՛կս։ Պէտք չէ նեղել մեր ծերունի թագաւորը, լա՛ւ հոգ տար անոր. անիկա մեզի համար շատ բան է ըրեր։ Այսպէս ուրեմն։ Աստուած քե՛զ օրհնէ։»

3

Թագաւորը աչքերը չփեց ու կամաց մը վերադարձաւ իր սենեակը։

—«Նոյնիսկ այստեղ ալ անարդարութիւն կը տիրէ,— կը մտածէր անիկա. հերթապահութիւնով խեղճ մանուկին հոգին կը հանեն... բայց ի՞նչ ազնիւ աղայ է... ճշմարիտ որ շատ կը մեղքնա՛մ իրեն...»

Առաւ բուռ մը ոսկի, փաթթեց նամակին հետ և զգուշութեամբ դրաւ մանկաւիկին գրպանը։

Յետոյ, նորէն վերադարձաւ սենեակը. առաւ զանգակը և այնպէս ուժով զանգահարեց, որ մանկաւիկը, սարսափահար, վեր թռաւ և վազեց թագաւորին քով։

— Բայց, բարեկա՛մ, դուն շատ խորունկ քնացեր էիր,— ըսաւ թագաւորը՝ դիտմամբ դէմքը խոժոռելով։

— Տէ՛ր... թոթովեց մանկաւիկը։

Եւ ձեռքը տարաւ գրպանը. բայց, յանկարծ, երեսը քթանի պէս ճերմակ կորեցաւ, ու լալով փաթթուեցաւ թագաւորին ոտքերուն։

— Ի՞նչ է, ի՞նչ եղաւ, հարցուց թագաւորը։

— Վեհափառ Տէ՛ր... հազիւ կրցաւ արցունքին մէջէն ըսել մանկաւիկը... զիս կուզեն կորուստի մատնել. կուզեն զիս վռնտել տալ այստեղէն... Այս բանը... դիտմամբ են դրեր գրպանս, որ յետոյ ըսեն թէ ես եմ գողցեր ձեր Վեհափառութենէն...

— «Ձեր Վեհափառութիւն»... ծաղրական ձեւով ըսաւ թագաւորը. հապա նամակիդ մէջ «մեր ծերուկը» կըսե՛ս... Տէ՛, հերի՛ք է, ո՛տքի ելիր։ Այդ դրամը խրկէ՛ մօրդ, ինծմէ ալ բարև դրէ և ըսէ որ բանի մը հոգ չընէ։ Կերևի ծանր է երեք օր իրարու վրայ գիշերապահութիւն ընելը, հը՞...։ Եւ թագաւորը խորամանկութեամբ մէկ աչքը գոցեց։

Յետոյ, շարունակեց.

— Դուն ալ պակա՛ս չես. գիշերապահութիւն կընես կանոնի հակառակ, ճշտապահ չես ըլլար և «մեր ծերուկին» քթէն կը խնդաս... Գնա՛ հիմա սենեակդ ու հանգիստ քնացիր։

Եւ թագաւորը իր խօսքին վրայ հաստատ մնաց. ապահովեց մանկաւիկն ու անոր մօրը ապագան։

ԳՈՐԾԻ ԺԱՄ

Կու - կու - լիկ - կո՛ւ... դո՛ւք, է՛յ թառին
վրայ նընջած ափլորներ.
իմաց տուէք մեծ ու փոքրին՝
թէ գործի ժամն է հասեր։

Թող ձեր, պառաւ ժամ շտապեն,
հարս ու աղջիկ դէպի գետ,
հօտ ու նախիր թող գոմերէն
ելնեն լեռը խոտաւէտ։

Մանկալ, հօտաղ դաշտը երթան,
ջրուոր, քաղուոր՝ դէպի գործ.
հընձուորները արտը երթան,
մանուկներն ալ դէպ դպրոց։

ԳԵՂԱՑԻՆ ԵՒ ՀԱՐՈՒՍՏ ՈՐՍՈՐԴԸ

1

Հարուստին մէկը որսորդութեան եկած էր անտառին մէջ։ Ինչպէս եղաւ, որսի ետև պոռոտած ատեն՝ ինկաւ մութ ու խորունկ փոսի մը մէջ։

Այս փոսը բացեր էին՝ վայրի գազաններ բռնելու համար։ Որսորդը հոն մնաց ցորեկ մը ու գիշեր մը։ Ինչ ըրաւ, ինչ չըրաւ որ ճար մը գտնէ ու դուրս ելլէ, չի յաջողեցաւ։

Այս վիճակին մէջ էր, երբ յանկարծ իր չորս կողմէն լսեց խուլ մռմրռուքներ, խեղդուկ սուլոցներ, հեծեծագին մռնչիւններ։

Մարդը, վախէն լեղապատառ՝ պտռուըտեցաւ փոսին մէկ անկիւնը, և կեցաւ անշարժ ու անխօս։

Երկրորդ օրուան առաւուն, լսեց որ մէկը կանչի վերէն, փոսին քովէն։ Սկսաւ բարձրաձայն ու լալով պոռալ. «օգնութի՛ւն, ազատեցէ՛ք զիս, հանեցէ՛ք զիս այս փոսէն»։

Գեղացի մըն էր որ անտառէն կանցնէր. երբ փոսին մէջէն եկող ձայնը լսեց, նախ վախցաւ. յետոյ սրտապընդուկով՝ մօտեցաւ ու հարցուց.

— Ո՞վ ես դուն։

— Խեղճ որսորդ մը. անզգուշութեամբ այս փոսը ինկայ, երկու օր ու մէկ գիշեր է որ հոս կը մնամ։ Հանէ՛ զիս այս տեղէն, ինչ որ ուզես՝ տամ քեզի։

— Շա՛տ աղէկ, չա՛տ աղէկ, ձեռքէս եկածը չեմ խնայեր,— պատասխանեց գեղացին։

2

Գեղացին անմիջապէս գօտիէն հանեց իր յօտոցը և ծառէն երկար ճիւղ մը կտրեց։

— Էյ, որսո՛րդ,— պոռաց վերէն գեղացին. մի՛կ ըրէ. հիմա երկար ճիւղ մը պիտի իջեցնեմ վար, փոսին եզերքին պիտի կրթնցնեմ և ուժով մը պիտի բռնեմ. նայիր որ դուն ալ ծայրէն բռնես ու վեր ելլես։

— Շա՛տ աղէկ, ձայն տուաւ որսորդը. ուզէ՛ դուն ալ ինչ որ կը փափաքիս և փափաքդ պիտի կատարեմ։

— Քեզ վեր հանելուս համար բան չեմ ուզեր ինձի, պատասխանեց գեղացին. քանի մը օրէն ալիտի կարգուիմ, եթէ կուզես՝ սրտէդ անցած նուէր մը տուր նշանածիս։

Եւ գեղացին ճիւղը երկնցուց փոսէն վար։ Երկնցուց թէ չէ, տեսաւ որ ճիւղը կը ծանրանայ. «հա՛, մարդը բռնեց, հիմա վեր կելլէ» կըսէր մաքէն։ Բայց, յանկարծ, տեսաւ որ մութ փոսին մէջէն, մարդու տեղ, դաբաս ցատկեց կապիկ մը՝ ուրախ զուարթ։

Գեղացին աս որ տեսաւ, սկսաւ փախիլ լեղապատառ։ Բայց որսորդը վարէն կը պոռար.

— Աստծո՛ւ սիրուն, նշանածիդ սիրո՛ւն, հանէ՛ զիս այս տեղէն. հանէ՛, ուզածդ պիտի տամ, պիտի հարստացնեմ քեզ. ես պալատներու, ոսկիներու տէր եմ. մի՛ թողուր որ անօթութենէ մեռնիմ այս սոսկալի փոսին մէջ...

3

Գեղացին սիրտը չի դիմացաւ փոսէն եկած այս պաղատանքներուն. «լէհլէթ, չա՛ր սատանայ» ըսելով, նորէն ետ դարձաւ։

Ճիւղը դարձեալ վար իջեցուց. իջեցուց, և ահա այս անգամ ալ առիւծ մը դուրս ցատկեց, ուրախ մռնչիւն մը արձակելով։



— Չէ՛, անպատճառ սատանայ կայ այս փոսին մէջ, ըսելով՝ գեղացին սարսափահար սկսաւ փախիլ։

Բայց հազիւ քանի մը քայլ էր առեր, երբ նորէն լսեց խորունկէն եկող սրտաճմլիկ աղաղակները.

— Աստուա՛ծ, Աստուա՛ծ, կըսէր ձայնը. պիտի մեռնի՛մ, անօթի պիտի մեռնիմ այս մութ փոսին մէջ. մէկը չի կայ որ զիս ազատէ... հէ՛յ, մա՛րդ, ո՛վ որ ես, կը պաղատիմ, ե՛ւ դարձիր, մի՛ թողուր որ մեռնիմ. փրկէ՛ իմ

կեանքս, քեզի կու տամ տուն մը, արտ մը, կովեր, ոսկի... ինչ որ ուզես, միայն թէ ազատէ զիս...

Գեղացին սիրտը նորէն չի դիմացաւ. վերադարձաւ և ճիւղը երկնցուց փոսէն վար։

Բայց այս անգամ ալ, սողալով վեր եկաւ օձ մը՝ ուրախ-ուրախ ֆշալէն։



Գեղացին որ օձը տեսաւ, երկիւղէն գետինն ինկաւ ու մարեցաւ։

Շատ անցաւ, քիչ անցաւ, երբ խելքը գլուխը եկաւ, լսեց որ ձայնը անդադար կը հեծէր փոսին մէջ. «ուրեմն ես հո՞ս պիտի մնամ, ուրեմն պիտի մեռնի՞մ. ա՜խ, Տէ՛ր Աստուած, աս ի՞նչ գալիք էր եկաւ գլխուս...» ու կուլար, ու կողբար։

— Չէ՛, այս ձայնը մարդու ձայն է, ըսաւ գեղացին։

Եւ լսեց որ փոսին մէջէն որսորդը կը պոռար.

— Եթէ հոդ ես դեռ, քու արևուդ, նշանածի՛դ աբևո՛ւն, ազատէ զիս, այս անիծեալ փոսէն ելլամ, գոնէ տունս երթամ ու հոն մեռնիմ... հանէ՛ զիս այս տեղէն

և քեզի տամ քաղաքի պարտես, անոր մէջի բոլոր թանկագին կահ կարասիներն ալ հետը. բոլորը քեզի, Աստուած վկայ, բոլորը քեզի, հալալ սրտով կու տամ...

4

Գեղացին մէկ կողմէն մեղքնալով այդ պաղատանքներուն վրայ, միւս կողմէն ալ գեղեցիկ-գեղեցիկ խոստումները լսելով, ճիւղը հեղ մըն ալ փոսը իջեցուց։

— Բռնէ նայիմ սա ճիւղը։

— Հա՛ բռնեցի այս անգամ, պատասխանեց ձայնը։

Եւ գեղացին դուրս հանեց մարդը։

Որսորդը փոսէն ելածին պէս՝ ուրախութենէն անմիջապէս նուաղեցաւ իր ազատարարին թեւերուն մէջ։

Գեղացին՝ ջուր զարկաւ անոր երեսներուն, խելքը գլուխը բերաւ և թեւը մանելով՝ ըսաւ.

— Երթա՞նք, հեռանանք այս անտառէն...

Որսորդին ոտքերը տակը կը ծալուէին և հազիւ կրնար քալել անօթութենէն։

— Ա՛ռ սա կտոր մը հացը ու կե՛ր, ըսաւ գեղացին, տոպրակէն հանելով իր պահած կտոր մը հացը։

— Ա՛խ, ի՜մ բարեբարս, ի՜մ փրկիչս, ի՜մ ազատարարս, կըսէր հարուստ որսորդը. ինչպէ՞ս պիտի ելլեմ ատ քու բարիքիդ տակէն...

— Շնորհակալ եմ, կըսէր գեղացին, որ նշանածիս համար օժիտ, ինծի համար ալ պալատ մը խոստացար։

Քիչ քիչ որսորդը կը գտնէր իր ուժերը.

— Այո՛, անշո՛ւշտ, նշանածիդ համար աղուոր օժիտ մը պիտի տամ. քեզ ալ քու գեղիդ մէջ ամէնէն հարուստը պիտի ընեմ...

— Բայց, ա՛ղա, ես շատ ձանձրացեր եմ գեղէն. խոստացած պալատդ որ տաս, ալ գեղը չեմ դառնար։

— Այլևս երանք անտառէն. ա՛լ գիտեմ ճամբան. կեցիր բարո՛վ, ըսաւ որսորդը։

— Երթա՛ս բարով. բայց, աղա՛, ե՞րբ գամ օժիտն ու պալատն առնելու, հարցուց գեղացին։

— Երբ որ կուզես։

Եւ իրարմէ բաժնուեցան։

5

Որսորդը գնաց քաղաք։

Գեղացին ալ դարձաւ իր գեղը, նշանածին պատմեց գլխուն եկածը և ըսաւ որ մէկ երկու օրէն հարուստ պիտի ըլլան իրենք և պալատ պիտի ունենան։

Միւս օրը, առտուն կանուխ, գեղացին ճամբայ ինկաւ դէպի քաղաք։ Հարցուց, փնտռեց, գտաւ հարուստ որսորդին պալատը։ Դուռը զարկաւ և ծառաներուն ըսաւ որ՝ եկեր է տէր ըլլալու պալատին ու բնակելու անոր մէջ։

Ծառաները խենդի տեղ դրին գեղացին, և գացին իրենց տիրոջը պատմեցին թէ՝ մարդուն մէկը եկեր է, այսպէս-այսպէս բաներ կըսէ։

— Վռնտեցէ՛ք այդ յիմարը,— ըսաւ հարուստը. ես այդպէս մարդ չեմ ճանչնար։

Ծառաները վռնտեցին գեղացին։

Մարդը յուսահատ, գլուխը կախ, եւ դարձաւ դէպի գեղը։ Եւ ճամբան քալելով, կը մտածէր. «հիմա ինչպէ՛ս պիտի նայիմ նշանածիս երեսը։»

6

Մտմտալով, մտմտալով՝ մտաւ իր խրճիթը։

Մտաւ խրճիթը, բայց ինչ տեսնէ. ահա մէկ անկիւն մը նստեր է կապիկը, միւս անկիւնը՝ առիւծը, ուրիշ տեղ մըն ալ օձը կլորուեր պառկեր է։

Գեղացին վախէն քար կտրեցաւ. «բանս բուսաւ, ըսաւ ինքնիրեն. մարդը վռնտեց զիս. օձն հիմա պիտի խայթէ, առիւծն ալ պատառ պատառ պիտի ընէ զիս և կապիկն ալ վրաս պիտի թնդայ. եկուր դուն մարդ ու գաղան ազատէ...»։

Բայց ահա կապիկը ոտքի ելաւ և դէմքը ծռմբռկեց քարեկամաբար. առիւծը կամաց մը պոչը շարժեց և եկաւ

իր ձեռքը լղեց. իսկ օձն ալ ուրախ ուրախ սկսաւ պտտիլ անեակին մէջ։

Գեղացիին վախը անցաւ։

— Խե՛ղճ կենդանիներ, ըսաւ. տե՛ս, ասոնք իրենց գաղան հալովը մարդէն ազէկ են. դեռ քիչ մը առաջ էր որ այն ապերախտ հարուստը զիս իր դռնէն դուրս վռնտեց՝ մուրացկանի պէս։ Բայց, հիմա ինչ պիտի ըսեմ նշանածիս. օժիտ ու պարատ չէ, գնդասեղ մը անգամ չունիմ որ նուէր տամ...

Եւ մարդը հա՛յ-վա՛խ կրնէր ու ա՛խ կը քաշէր։

7

Գեղացին երբ որ այսպէս կը մտմտար, կապիկը սկսաւ մրթմրթալ, առիւծը պոչը շարժեց, ու օձը գալարուելեր բրաւ։

Յետոյ, կապիկը եկաւ մարդուն մօտ և անոր առջևն իջնալով՝ տարաւ փայտանոցը։ Գեղացին տեսաւ որ՝ փայտանոցը բերնէ բերան փայտ լեցուած է։

Կապիկն էր որ անտառէն հաւաքած էր այդ փայտը և բերեր էր գեղացիին խրճիթը։

Գեղացին համբուրեց կապիկը։

Առիւծն ալ կամաց մը մռլտալով՝ տարաւ գեղացին խրճիթին մէկ անկիւնը, տարաւ ու ցոյց տուաւ երկու եղջերու, երեք այծեամ, 10-20 հատ նապաստակ, ճագար և աղուոր վարազ մը. որոնք թարմ մնալու համար, ծածկուած էին ծառի կանաչ ճիւղերով։

Առիւծն էր որ որսացեր էր այդ բոլորը և բերեր էր իր բարեբարին։

Գեղացին փայփայեց առիւծին բաշը, ու դառնալով օձին՝ ըսաւ.

— Հապա դո՞ւն, օ՛ձ, տեսնեմ դո՛ւն ինչպէս երախտագիտութիւնդ պիտի յայտնես. հարուստ որսո՞ղին՝ թէ այս աղնիւ կենդանիներուն պէս։

Օձն անմիջապէս արագօրէն սողաց, չոր տերևներու դէզի մը տակ, և շուտ մը նորէն դուրս ելաւ։ Դուրս ելաւ, բերանին մէջ բռնած անգին քար մը։

— Ադամանդ, պոռաց գեղացին, և ձեռքը երկնցուց օձին, որ անոր տուաւ անգին քարը։

8

Գեղացին հիմա իր հարստիքին համար փայտ ունի, միս ունի, մինակ՝ դրամ չունի։

— Տանիմ սա ադամանդը քաղաք, ծախեմ ու քանի մը ոսկի առնելով՝ դամ հարստիքս բռնեմ, ըսաւ։

Ու ելաւ գնաց քաղաք։ Ադամանդը ցոյց տուաւ ոսկերիչի մը։



Ոսկերիչը աղէկ մը քննեց քարը, տեսաւ որ շատ սուղնոց տեսակէն է. յետոյ հարցուց.

— Է՛, ի՞նչ գին կուզես ասոր։

— Եռասուն ոսկի, պատասխանեց գեղացին, վախնալով որ շատ ուզեց։

Ոսկերիչը ժիր ժիր նայեցաւ գեղացիին երեսը և ըսաւ.

— Այդ գինն ուզելէդ կը տեսնեմ որ դուն գող ես. քեզ ձերբակալել պիտի տամ։

— Եթէ քարս պակաս գին ունի, պակաս դրամ տուր, ազա՛ ոսկերիչ, կը պոռար գեղացին. ես գող չեմ, ես

պատուաւոր մարդ եմ. օձը տուաւ ինծի այս ադամանդը...

Ոստիկաններն եկան, գեղացին տարին ոստիկանատունը։ Երբ որ տեսան թէ գործին մէջ հարուստ որսորդին ալ անունը խառնուած է՝ խնդիրը հանեցին դատարանին առջև։

— Պատմէ՛ նայինք պատմութիւնդ, ըսաւ դատարանին նախագահը գեղացիին. բայց չըլլայ որ սուտ խօսիս, վերջը մեծ պատիժ կը կրես։

Գեղացին պատմեց գլխուն եկածները. պատմեց թէ ինչպէս հարուստ որսորդը երբ փոսէն ազատեցաւ՝ մոռցաւ իր խոստումը, և յետոյ մուրացկանի մը պէս զինք իր դռնէն դուրս վռնտեց։

Դատաւորները մարդ խրկեցին և կանչեցին հարուստը։

— Կը ճանչնա՞ս այս գեղացին, հարցուց նախագահը անոր։

— Ո՛չ, չեմ ճանչնար։

— Հապա ան կը պնդէ որ քու կեա՞նքդ ազատած է։

— Ո՛չ, ես այդպէս մարդ չեմ ճանչնար, կրկնեց հարուստը։

9

Դատաւորները խորհրդակցեցան. «այս գեղացին, ըսին, կա՛մ խենդ է, կամ խաբեբայ. բա՛նտ դնելու է զինքը. ժամանակ թող անցնի և խնդիրը կը պարզուի։»

Ապա, դառնալով հարուստին՝ ըսին.

— Դուք կրնաք երթալ, ազատ էք։

Յետոյ, նշան ըրին ոստիկաններուն որ գեղացին տանին նետեն դնտանը։ Գեղացին ծունկի եկաւ դատաստարանին մէջ.

— Պարո՛ն դատաւորներ, ես մեղք չունիմ. կրնայ ըլլալ որ այս ադամանդը գողցուած է, բայց ես լուր չունիմ, օձը տուաւ ինծի. օձն է որ խաբեր է զիս, ինչպէս որ խա-

բեց Եւան։ Արևուս վրայ երդո՛ւմ որ ես ազատեցի այս մարդը. փոսէն դուրս հանեցի, հաց տուի իրեն, ողջնցուցի. հիմա այլևս փոսին մէջ չէ. անօթի, թշուառ ու կիսամեռ չէ. բայց, Աստո՛ւած վկայ, կը ճանչնամ զինքը. ճիշտ իրեն ձայնն է, այն ձայնը որ փոսին մէջէն կը պոռար թէ «ազատէ՛ զիս»։ Պարո՛ն որսորդ, քեզմէ ո՛չ նշանածս օժիտ կուզէ, ոչ ալ ես պալատ. բայց խզճա՛ ինծի, չիտակը խօսիր, մի՛ թողուր որ զիս զնտանը նետեն. ես քեզ փոսէն հանեցի...

— Պարոնե՛ր, ըսաւ Որսորդը, խոնարհելով դատաւորներուն առջև. ես այս մարդը չեմ ճանչնար։ Սուտ ու փուտ բաներ կըսէ. մէկ վկայ, մէկ նշան ո՞ւնի իր ըսածները հաստատող։

10

Ճիշտ այդ պահուն էր որ դատարանին բարապանները սարսափահար եղան, տեսնելով որ առիւծ մը, կապիկ մը ու օձ մը կը մտնեն դատարանէն ներս։

Առիւծը իր կռնակն էր առեր կապիկը. կապիկն ալ իր թևն էր փաթթեր օձը։

Առիւծը կը մռնչէր, կապիկը կը մրթմրթար և օձը կը ֆչար։

— Ահա՛, փոսին կենդանիները ասոնք են, պոռաց գեղացին խելացնոր։

Երբ որ դատաւորները քիչ մը հանդարտեցան իրենց յուզումէն, նախագահը դարձաւ, ըսաւ հարուստին.

—Պարո՛ն, քիչ մը առաջ կը հարցնէիր թէ գեղացին վկայ ունի՞. ահա այդ վկաները որ Աստուած հրաշքով հոս կը խրկէ։ Երբ Աստուած է քեզի դէմ վկայութիւն տուողը, մենք յանցաւոր պիտի ըլլանք՝ եթէ չպատժենք քու ապերախտութիւնդ։ Պիտի գրաւենք քու պալատներդ և բոլոր ունեցած-չունեցածդ։ Եւ դուն քու կեանքիդ մնացած օրերը պիտի անցնես զնտանին մէջ։

Յետոյ, դառնալով գեղացիին, անոր ալ ըսաւ.

— Քանի որ այս քաղաքացին քեզի պալատ մը խոստացաւ, և նշանածիդ ալ՝ օժիտ, ահա մենք կը կատարենք անոր խոստումը. այս բանտարկուած մարդուն ունեցած-չունեցածը քուկդ է ասկէ ետք։

Գեղացին ու իր կինը երկար տարիներ ապրեցան հարուստին պալատին մէջ՝ առիւծին, կապիկին ու օձին հետ։

Այդ պալատին վրայ գեղացին նկարել տուաւ կապիկը՝ որ ելեր էր առիւծին չալակը և իր թևն էր փաթթեր օձը։

1. Պատմեցէ՛ք այս պատմութիւնը։
2. Արդո՞ր էր դատաւորներուն տուած վճիռը։
3. Ինչո՞ւ համար գեղացին իր բնակած պալատին վրայ նկարել տուաւ առիւծը, կապիկը և օձը։

ԴԱՄՈԿԼԵԱՆ ՍՈՒՐ

1

Դարեր առաջ Սիրակուսա քաղքին կիշխեր բռնաւոր
արքայ մը որ, Դիոնեսս էր անունն անոր, հի՛ն զինուոր:
Կապրեր իրեն դրդեակին մէջ գիշեր ցորեկ սահ՛բեկ.
միշտ կը փոխեր նրնջարանը, հանգիստ չուներ ան երբեմ:
Դուռով էր շատ ու ընչասէր, արիւնարբու մէկ գազան,
չուներ ո՛չ գութ, ո՛չ խղճմտանք, թշնամի էր մարդկութեան:
Ով որ անոր քով գալ ուզեր, թէ՛ մերձաւոր թէ՛ օտար,
պէտք է իրեն թիկնապանը զայն խուզարկէր անպատճառ:
Շատ հարուստ էր, բայց գանձերը միշտ դիզեր էր արիւնով,
անմեղներու գլուխները սուր ու թուրէ քաշելով:
Ոսոխներն իր կը հեծեին մութ ու խոնաւ բանտերեն,
կամ կը յանձնէր դահիճներուն որ խաչն հանեն ու գամեն:
Վստահութիւն չուներ մարդու, չուներ ընկեր-բարեկամ,
կը կասկածէր իր հարազատ զաւակներէն ալ անգամ:

2

Երբ Դիոնիս օր մը ծրպտած՝ պանդոկ մ'այցի գացեր էր,
այնտեղ տեսաւ մէկ ծանօթը՝ որ Դամոկլէս կը կոչուէր:
Ընկերներով Դամոկլէս հոն գինին դրած իր առջին՝
կը գովեր ու հա՛ կը գովեր Դիոնիսը դիւային:
Բռնաւորը մրտիկ կընէր ու կը ցընծար հոգեպէս
եւ իր մրտին մէջ կը կրկնէր. «Ապրի՛ս, ապրի՛ս, Դամոկլէս:»
Դիոնիսը իրեն ընտրեց զայն բարեկամ սրբտագին,
լիաձեռն վարձատրեց եւ դարձուց իր սիրելին.
տարաւ զինքը պալատն իր պերն, գահին վրայ բազմեցուց,

զրաւ անոր պատուի, փառքի, մեծարանքի ամէն ցոյց:
Դամոկլէսին բախտը սակայն պիտի ըլլար կարճատեւ,
զուցէ միայն օր մը, ժամ մը հազիւ փայլեր իր արեւ:
Եւ իրաւ ալ, երբ որ դարձուց յանկարծ աչքը դէպի վեր,
գլխուն վերեւ նուրբ մազէ մը կախուած տեսաւ մէկ սուսեր՝
որ կրսպառնար ամէն վայրկեան փրրթիլ մէկէն, իյնալ վար
ու ջախջախել ուղեղն իրեն: Եւ Դամոկլէս դողահար
ցատկեց գահէն արքայական, ահաբեկած պոռալով.
— «Ես չեմ ուզեր ո՛չ գահ, ո՛չ փառք, միայն ըլլա՛մ ապահով...»

ԻՄ ՄԵԾ-ՀՕՐՍ ՄԵԾ-ՀԱՅՐԸ

1

Սեղանի նստեր էինք ու կը ճաշէինք,— մեծ-հայրս, մեր աղախին Սրբուհին ու ես: Մեծ-հայրը երբ հաւը կը բաժնէր մեզի, հարցուցի իրեն.

— Մե՛ծ-հայր, քու պզտիկ եղած ատենդ ալ՝ քո՞ւ մեծ-հայրդ կը բաժնէր հաւը:

— Հապա՛, ըսաւ մեծ-հայրը:

— Իսկ եթէ կերակուր կերած ատենդ՝ սեղանի սրփռոցին վրայ կերակուր թափէիր, մեծ-հօրդ Սրբուհին կը բարկանա՞ր քեզի:

Ինծի այնպէս կու գար որ իմ մեծ-հօրս մեծ-հայրիկին Սրբուհին՝ մեր Սրբուհին պէս բարկացող չէր. անոր պէս չէր կշտամբեր դիս սոնկն անգամ, երբ սեղանին սփռոցն աղտոտէի:

Մեծ-հայրս պատասխանեց.

— Իմ մեծ-հայրս աղախին չունէր, որովհետև չատ աղքատ էր։ Յետոյ, սեղանին սիրոյն ալ չէր աղտոտեր, անոր համար որ փայտէ սեղանի վրայ կը ճաշէր։

Այս խօսքերը որ լսեցի, կաս-կամիր կտրեցայ։ Ամչցայ որ մենք ժամանակին աղքատ ենք եղեր. ըսել է մեծ-հօրս մեծ-հայրը տոպրակ մը ձգած ուսէն վար, դռնէ դուռ կը պտտէր՝ մուրացկան Կիրակոս աղբօր պէս, ու հաց կը մուրար։

Զղջացեր էի որ Սրբուհիին առջև եղեր էին այս խօսքերը. չատ ամօթ կը զգայի որ մեր աղախինը լսեր էր թէ՝ մենք աղքատ ենք եղեր ժամանակով։

2

Գլուխս կախ, ա՛լ աչքերս չէի վերցներ սնակիս վրայէն ու կուտէի կերակուրս։ Բայց, ինչպէս կուտէի, ես ալ չեմ գիտեր. պատառները պուկս կը կպէին և աչքերս արցունք լեցուեր էին։

Այս միջոցին դուռը զարկին և Սրբուհի դուրս եկաւ։

Մնացինք ես ու մեծ-հայրս։

Այն ատեն, լացկած ձայնով ըսի մեծ-հօրս.

— Ա՜խ, մեծ-հա՛յր, ըսել է քու մեծ-հայրիկդ ուսէն տոպրակ մը ձգած, կը մուրար դռնէ դո՛ւռ...

— Ա՞տ ո՛ւրկէ հանեցիր, հարցուց մեծ-հայրս։

— Դո՛ւն ըսիր։

— Ես այդպէս բան չըսի։

— Այո՛, չըսի՞ր թէ մեծ-հայրդ աղքատ էր։

— Բայց աղքատը ուրիշ բան է, մուրացկանը՝ ուրիշ բան. երկուքին մէջ լեռներ կա՜ն։ Աղքատ ըլլալը ամօթ չէ բնաւ, մինչդեռ մուրացկան ըլլալը չատ ամօ՛թ է։ Աղքատ

կըսեն այն մարդուն որ հարուստ չէ, բայց իր ճակտին քրտինքովը կապրի՝ պատուաւոր կերպով. տե՛ս, անա կօշկակար Սիմոն աղբարը, երկաթագործ Համբարձումն ամուն, այգեպան Թորոսը...։ Ամո՞թ բան է չատ դրամ չունենալը։

— Չէ՛, մեծ-հայրի՛կ։

— Իսկ մուրացկանը ուրիշ բա՜ն է։ Մէկը որ չափազանց ծերացած չէ, մէկը որ ոտք ունի, ձեռք ունի և փոխանակ աշխատելու՝ կը մուրայ, պարզապէս ծուլութիւն կընէ. անոր համար, չատ ամո՛թ է։

— Հապա ի՞նչ կընէր քու մեծ-հայրդ։

— Չարչի էր։

— Ի՞նչ ըսել է չարչի, մեծ-հա՛յր։

— Չարչի ա՛յն մարդուն կըսեն, որ կառնէ թել, ասեղ, կօճակ, պղտիկ հայելիներ, ժապաւէն, մասնոց, ասղաման և դեռ ուրիշ հազար մանր-մունր բաներ, կը պտտի դեղէ-դեղ, փողոցէ-փողոց, ու կը ծախէ։

— Հա՛, հասկցա՛յ, հասկցա՛յ, կարմիր Աւետիսին պէս։

— Այո՛, ճիշտ անոր պէս։

— Բայց, մեծ-հա՛յր, կարմիր Աւետիս կը գինովնայ. գիտե՞ս, անգամ մը խմեր-խմե՛ր ու պառկեր էր փողոցին թթենիին տակ...

Մեծ-հայրս ժպտեցաւ և ըսաւ.

— Այո՛, կը յիշեմ։ Բայց իմ մեծ-հայրս չէր խմեր, չէր գինովնար։ Կաշխատէր, գեղէ-գեղ ոտք կը քաշէր և իր վաստակովը թէ՛ մեր տունը կը պահէր, թէ՛ իր զաւակները կը կրթէր...

Մեծ-հայրս լռեց։ Բայց ես այլևս ամօթ չէի զգար։

Ո՞Վ. ԿԸ ՎԱԽՆԱՅ ՄՈՒԹԷՆ

1

Շատ վախկոտ էր իմ հօրեղբորս աղան՝ Օվիկը. վախկոտ ըսի՞ր թողուցիր. գիշեր որ եղաւ, առանց ճրագի, մառանն անգամ չէր կրնար երթալ։

Ես ալ՝ միշտ կը խնդայի վրան ու կը ծաղրէի զինք։

Իրկուն մը, հօրեղբրանքս մեր տունն եկած էին. ինչպէս եղաւ, չեմ գիտեր, նորէն «վախկո՛տ Օվիկ, վախկո՛տ Օվիկ», ըսի հօրեղբօրս աղուն։

— Դուն այդքա՞ն կարիճ ես, ըսաւ հօրեղբայրս՝ Տէր-Սահակը։

— Հապա ինչ, ես Օվիկին պէս մութէ՞ն կը վախնամ,— պատասխանեցի ինքնավստահ։

— Որ այդպէս է, գնա՝ մինակդ ժամը և Ժամագիրքը ինծի բեր, տե՛սնեմ. եթէ բերիր՝ «ապրիս» մը կայ քեզի,— ըսաւ Տէր-Տէր հօրեղբայրս։

Եւ ինծի երկնցուց ժամուն խոշոր բանալին։

Տեսայ որ հայրս ու մայրս, երէցկին հարանուկս ու Օվօն, ամէնքն ալ հետաքրքրութեամբ ինծի կը նային։

Առի բանալին։

— Տեսէք, կը բերե՞մ թէ չէ, ըսի. կոշիկներս հագայ ու դուրս վազեցի։

2

Դուրսը մութ էր. լուսնակ ալ չի կար։ Քալեցի, հասայ գերեզմաննոցին քով, որուն մէջէն պէտք է անցնէի՝ ժամուն դուռն երթալու համար։ Գլուխս բարձր բռնած և

բանալին պինդ սեղմած ձեռքս՝ անցայ գերեզմաննոցին մէջէն։

Մօտեցայ ժամուն դռան, բացի. ճռնչացին ծխնիները և թնդացին մութ կամարին տակ. կանգ առի. ինծի այնպէս եկաւ թէ տեսակ մը ձայն կը լսեմ ներսէն։

Սոսկում մը պատեց զիս. ներսի խորունկ մութը այնպէս զարհուրելի երևցաւ՝ որ մազերս փուշ-փուշ եղան։

Ո՛չ, անկարելի եղաւ որ ներս մտնեմ։ Ետ քաշուեցայ սեմէն և նորէն գոցեցի դուռը։ Անցայ բակէն, բայց այդ միջոցին մեր պզտիկ շունը, որ եաեէս եկեր էր, մօտեցաւ ոտքերուս և սկսաւ քծնիլ։

Ամչնալով վախէս՝ ետ դարձայ. ուզեցի որ շունն ալ հետս գայ, բայց անպիտան կենդանին չէր ուզեր։

Բացի դուռը և մէկ անգամէն ներս մտայ։ Մտայ թէ չէ, նորէն սոսկումը պատեց սիրտս. այնպէ՛ս մութ էր և այնպէ՛ս զարհուրանքի մատնուած էի՝ որ ո՛չ կոխած տեղս գիտէի, ոչ գացած ուղղութիւնս։

Գիտէի որ Ժամագիրքը աջ դասին մէջ էր, գրակալին վրայ. բայց ես գացեր էի ձախ դասը, կը խարխափէի. աչքերս խոշոր խոշո՛ր բացած, մութին մէջ կը փնտռէի գրակալը ու չէի գտներ։

Ցանկարծ, ինծի այնպէս եկաւ որ՝ չեմ գիտեր թէ ո՛ւր կը գտնուիմ. թևերս թուլցան. չունչս կը կտրուէր. կուզէի դուրս ելլել, կը փնտռէի դուռը ու չէի գտներ։

Վերջապէս, գտա՛յ, գտա՛յ դուռը, ու դուրս նետուեցայ, առանց Ժամագրքի։

Զէ՛, ինչ ալ ըլլայ, ետ պիտի դառնամ. ամօթ-ամա՜ծ հոգս չէ։

Ու ետ կը դառնամ։

3

Երբ որ մեր տանը առջև հասայ, լսեցի որ հօրեղբայրս քահ-քահ կը խնդայ ներսը։

Իմ վրաս է որ կը խնդայ, ըսի մտքէս, ու կեցայ դուրսը։

Յետոյ, լսեցի որ մայրս ալ կըսէ մեր աղախինին.

— Սրբո՛, գնա տես անգամ մը ի՞նչ եղաւ տա տղան. չըլլայ թէ գլխուն բան մը գայ. Օվիկը հետդ ա՛ռ, դուրս եկիր...

Ի՞նչ, վախկոտ Օվիկը եաւէս գայ ու գիս ներս բերէ. լա՛ւ է որ ամօթէս գետնին տակ անցնիմ։

Իսկոյն, բոլոր վախս ու սարսափս անհետացան։

Գլուխս եւ դարձուցի ու կրակէ՛ պէս հասայ եկեղեցին. բացի դուռը, վազեցի շիտակ աջ դասը, խարխափեցի, գտայ գրակալը, առի Ժամագիրքը եւ դուրս ելայ։

Երկու ոստումով կը հասնիմ մեր տունը, դուռը կը բանամ ուժով, և Ժամագիրքը կը նետեմ հօրեղբօրս գիրկը։

Միայն թէ՝ արտորանքս այնքա՛ն մեծ էր եղած, որ մուցեր էի ժամուն դուռը գոցել։

1. Ձեր մէջէն ո՞վ է որ մութէն կը վախնայ։
2. Ո՞վ փորձեր է մութ տեղ մը երթալ, միս-մինակը, և բան մը բերել։
3. Ձեզմէ ո՞վ չի վախնար հապա մութէն։



ՄԱՀՈՒԱՆ ՄԵԾ-ՎԷԶԻՐԸ

Աշխարհքին մեծ թագաւորը, Մահը, օրին մէկը դժողքին մէջ հաւաքեց իր բոլոր պալատականները։

Կուզէր իրեն համար այնպիսի մեծ-վէզիր մը ընտրել, որ շատ ու շատ ծաղկեցնէ իր թագաւորութիւնը։

Այս պաշտօնին համար, եկան, յամր-յամր քալելով, Տենդը, Կաթուածը և Պատերազմը։

Մահուան երեք հաւատարիմ սպասաւորներն էին անոնք, և երկինք-գետինք վկայեցին թէ պատուական մեծ-վէզիր կրնան ըլլալ Մահուան։

Մահը մեծարեց զանոնք և նստեցուց իր քով։

Յետոյ եկաւ Քոլերան։ Ամէնքը յայտնեցին թէ վէճի տակ չի կրնար դրուիլ անոր արժանաւորութիւնը։

Բայց ահա վրայ հասաւ Սովը և բանը փոխուեցաւ. մարդ չէր գիտէր թէ ո՞ր մէկը աւելի արժանի է մեծ-վէզիրութեան։

Մահը ինք անգամ տարակոյսի ու վարանման մէջ մնաց։

Այս միջոցին էր որ երևցան Մոլութիւնները։

Եւ Մահը, առանց վարանելու, զանոնք մեծ-վէզիր հռչակեց իրեն։

1. Ինչո՞ւ Մահին համար ըսուած է թէ «աշխարհքին մեծ թագաւորն է»։
2. Ի՞նչ տեսակ Մոլութիւններու անունը գիտէք։
3. Ինչո՞ւ Մահը իրեն մեծ-վէզիր ընտրեց Մոլութիւնները։

ԱՐԾԻՒՆ ՈՒ ԱՐՏՈՅՏԸ

Արծիւը կանգնած սեւ ժայռի գլխին՝
հանգիստ ու հրպարտ կը նայի
չորս դին.
վարն ամպեր ճերմակ՝ ձորեն կը
լողան,
վերեւն ալ երերն է կապտածորան:



Եւ ձիւնագագաթ լեռներու արքան
շուրջը կը նայի ու կրսէ անձայն.
«Ինծմէ բարձր ալ ո՞վ կրրնայ
սըլանալ,
«այս վեհ բարձունքին ինձպէս տեր
դառնալ:»

Ցանկարծ երկնքի անհուն կապոյտեն
հաղցր հռւոդիւն, երգեր կը հընչեն:
Արծիւն իր աչքը ուղղեց դէպի վեր,
տեսաւ որ ուժը չէ միշտ
երկրին տեր:

Արտոյտ մը փոքրիկ մինչ
երկինք հասած,
արեւի ոսկի շողովը օծ-
ուած,
գովքն էր որ կերգեր կենսաբեր գարնան,
մահամերձ երկրի օրհներգն յարութեան:

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Շահը կանչեց իր երկրին բոլոր իմաստունները։ Եւ հարցուց անոնց.

— Ի՞նչ բան է երջանկութիւնը։

— Քու արքայական երեսդ տեսնելն է, շուտով պատասխանեց առաջինը։

— Հանեցէ՛ք այդ չողոքորթին աչքերը, ըսաւ թագաւորը բարկութեամբ։ Թող գայ երկրորդը։

— Ով որ իշխանութիւն ունի, ով որ թագաւոր է, ա՛ն է երջանիկը, գոչեց երկրորդ իմաստունը։

— Բայց ես ահա անքունութենէ կը տանջուիմ ու չեմ կրնար բժշկուիլ։ Օգակ անցուցէ՛ք այդ անպիտանին քթին ծակերէն։ Թող գայ երրորդը...

—Հարստութիւնն է երջանկութիւնը, կակազեց յաջորդը։

— Ես հարուստ եմ, բայց կը տեսնե՞ս. ուրիշներուն կը հարցնեմ թէ ի՞նչ բան է երջանկութիւնը։ Գոհ կըլ-լա՞ս եթէ գլխուդ կշիռքովը ոսկի տամ քեզի։

— Օ՜, թագաւոր...

— Պիտի տամ։ Կշռեցէ՛ք այս աղքատին գլխուն չափ ոսկի, կապեցէ՛ք իրեն հետ և միասին նետեցէ՛ք ծովը։

— Թող գայ չորրորդը՝, պոռաց թագաւորը անհամբեր։

Փորին վրայ սողալով՝ մօտեցաւ ցնցոտապատ, տենդոտ աչքերով մարդ մը և մրմնջեց.

— Տէ՛ր թագաւոր, ես քիչ բան կուզեմ երջանիկ ըլլալու համար։ Անօթի եմ, հրամայէ՛ որ կշտացնեն փորս և երջանիկ ըլլամ ու կօրհնեմ քու անունդ։

— Կերցուցէ՛ք ուղածը այս ծակ աչքին, ըսաւ զըզուանքով թագաւորը. կերցուցէ՛ք այնչափ՝ որ մեռնի շատակերութենէն։

Եկան ուրիշներ, եկան կարգով, և ամէնքն ալ չարաչար պատժուեցան։

Ամէնէն ետքը, եկաւ պայծառ ճակատով ու հանդարտ դէմքով մարդ մը, ու ըսաւ։

— Երջանկութիւնը մարդկային գեղեցիկ մտքին մէջ է։

Թագաւորը ժանգոտ եբեսով հարցուց.

— Հա՛, մարդկային միտքը. բայց ի՞նչ ըսել է մարդկային միտք։

Իմաստունը կարեկցաբար նայեցաւ, ժպտեցաւ միայն և պատասխան չի տուաւ։ Այն տեղն, թագաւորը հրամայեց որ զայն նետեն ստորերկրեայ զնտանին մէջ։

Զնտանին մէջ գիշերուան պէս խաւար էր և դուրսէն ամէնափոքր ձայն մը անգամ չէր գար ներս։

Տարիէ մը յետոյ, երբ բանտարկեալը բերին թագաւորին առջև, կուրացեր ու խլացեր էր ամբողջովին և հազիւ կրնար ոտքերուն վրայ կանգնիլ։ Թագաւորը հարցուց.

— Է՞, հիմա ալ երջանի՞կ ես։

— Այո՛, երջանիկ եմ, պատասխանեց իմաստունը։ Ես բանտին մէջ թէ՛ թագաւոր էի, թէ՛ հարուստ, թէ՛ կուշտ, թէ՛ անօթի. այդ բոլորը ինծի կու տար իմ միտքս։

— Ի՞նչ է միտքը, անհամբերութեամբ պոռաց թագաւորը։ Գիտցի՛ր որ հինգ րոպէէն յետոյ ես քեզ կախել կու տամ. քու միտքդ կրնա՞յ մխիթարել քեզ այն ատեն։ Եւ ո՞ր տեղ կը գտնուին այն ատեն քու միտքերդ, որոնք դուն վատներ ես այս երկրին վրայ։

Իմաստունը պատասխանեց հանդարտօրէն.

— Ցիմա՛ր. միտքը անմահ է։

Աղօթքի ժամը։

ԱՐՏԻՆ ԽՕՍՔԸ՝ ՏՈՒՆԸ ՁԵՆ ԸՍԵՐ

1

Գարուն էր, սիրուն, անմման գարուն։ Թէև լեռները դեռ ծածկուած էին ձիւնով, բայց դաշտերուն ձիւնը հալեր, թաւշանման կանաչը դուրս էր սողացեր։ Ոչխար ու տաւար դաշտը կերթային։

Հաւաքուեր էին փոքրիկ տաւարածները, տաւարը թողեր բաց, ազատ դաշտերը, իրենք տափարակի մը վրայ կը խաղային, կը վազէին, կատակներ կրնէին։ Ալեքն էր, Գեւոն, Խաչոն ու Հայկը, Եղօն ու Վարդանը։

— Տղաք, հը՛, բան մը ինկաւ միտքս, բան մը ըսե՞մ ձեզի... Եկէք կիւլէշ բռնենք, կիւլէշ բռնել սորվեցնեմ,— ըսաւ Ալեքը։

— Ինչ լաւ ըսիր,— վրայ բերաւ Եղօն. բայց թէ ո՞վ բռնէ. ո՞վ բռնէ, ո՞վ չի բռնէ, ո՞վ բռնէ, ո՞վ չի բռնէ,— կրկնեց խորամանկ ժպիտով, հեղ մը մէկ ուսը բարձրացնելով, հեղ մը՝ միւս ուսը. Գեւոն ու Հայկը բռնեն։

— Տէ՛, Գեւո՛ ու Հա՛յկ, մէջտեղ եկէ՛ք,— պոռացին այս ու այն կողմէն։

Հայկն ու Գեւոն մէջտեղ եկան՝ դօտեմարտի, իսկ միւսները շրջանակաձև կանգնեցան անոնց շուրջը։

2

Գեւոն խոշոր էր, մեծ ու հաստ կազմուածքով։ Հայկը անկէ տարիքով մեծ էր, բարակ ու ջղուտ։

— Տէ՛, Գեւո՛, լա՛ւ փաթթուիր մէջքէն։

— Հը... կարիճ չեմ ըսեր Հայկին՝ որ տակը չառնէ Գեւոն։

— Գեւո՛, ոտքը ա՛ռ, քաշէ՛, մի՛ վախնար։

— Մէջքէն բռնէ՛, Հա՛յկ, մէջքէն։

— Հա՛, քե՛զ տեսնամ...

Այսպէս, կը պոռային ամէն կողմէ և կը խրախուսէին զօտեմարտիկները։

Մէյ մըն ալ, յանկարծ, երկուքը մէկտեղ պառկեցան քովի վրայ։

— «Հա՛յկը ձգեց, Հա՛յկը ձգեց»,— ճչալով վրայ թափեցան միւսները։

— Չէ՛, չէ՛, աս չեղաւ, սուտ բռնուկ էր, նոր պիտի բռնենք,— ըսաւ Հայկ՝ ու նորէն կպան իրարու։

Գեւոն քրտներ, յոգներ էր արդէն. Հայկն ալ տաքցեր, կրակ կարեր։

— Ծնո՛ա տուր, Հա՛յկ, ծնոտ տո՛ւր,— պոռաց Ալեքը։

Ոչ ոք չէր ապասեր. յանկարծ, Հայկը պառկեցաւ, ոտքը դէմ տուաւ Գեւոի փորին, և գլխուն վրայէն նետեց հեռուն։

Ուշադրութիւն չէին դարձուցեր որ կամաց-կամաց մօտեցեր էին քարքարուտի մը։ Միամիտ Գեւոն ինկաւ քարերուն վրայ և «վա՛յ, ո՛տքս» պոռաց։

3

Վազեցին, թափուեցան ընկերները, տեղէն հանեցին. բայց ի՞նչ օգուտ, ոտքը կոտրեր է և ոտքը կախ է ինկեր։

— Վա՛յ ոտքս, վա՛յ,— կը պոռար Գեւոն։ Իսկ միւսները շուարեր, չէին գիտեր թէ ի՞նչ ընեն։

— Ես վազեմ գեղը, իմաց տամ,— ըսաւ Եղօն, որ դեռ շատ փոքր էր և չէր գիտեր արտի կանոնները։

— Է՛յ, շաշ, ո՞ւր, ո՞ւր կը վազես,— կանգնեցուց զայն

Ալեքը. կերթաս բերնէդ դո՞ւրս տալու. դուն չե՞ս գիտեր որ «արտին բանը՝ տունը չեն ըսեր։» Խա՛չօ ու Վարդա՛ն, ձեռքերնիդ խաչմերուկ բռնեցէ՛ք։

Խաչօն ու Վարդանը բռնեցին իրարու դաստակներէ. Գեւոն վերցուցին, նստեցուցին անոնց ձեռքերուն վրայ, ան ալ փաթթուեցաւ անոնց պարանոցին։

— Է՛, տղա՛ք, դուք տաւարին նայեցէք, ես հիմա՛ կուգամ,— ըսաւ Ալեքը, որ բոլորէն մեծ էր և կարծես բոլորին հրամայողը. տանինք, տուն հասցնենք։

Գեւոին մայրը՝ Սառա հարսնուկը, երբ որ իրենց տանիքէն տեսաւ թէ Գեւոն կը բերեն, պոռաց.

— Վա՛յ, քոռնաք դուք. աս ո՞վ է կոտրեր տղուս ոտքը. վա՛յ ես ի՞նչ ընեմ, վա՛յ ես ի՞նչ գլուխս լամ...

— Է՛, Սառա՛ հարսնուկ, խաղալու ատեն՝ փոսին մէջ ինկաւ Գեւոն ու ոտքը կոտրեցաւ,— հաստատեց Ալեքը։

Ոսկրաբուժ կանչեցին, Գեւոին ոտքը կապեցին և երեք շաբաթ պառկած մնաց։

Կոտրածը կապելու ատեն, քիչ մը ծուռ էին կապեր և Գեւոն կաղ մնաց ու կաղ է մինչև հիմա։

4

Այդ օրէն անցեր էր տասնըհինգ թէ աւելի տարի. բոլորը մեծցեր, մեծ մարդիկ էին դարձեր։ Օր մը, պատահաբար բոլորը միասին հաւաքուած էին հարսնիքի մը մէջ։

Պար կը խաղային տաւուլի ու զուռնայի առջև. Գեւոն էր պարողը, որ չնայելով իր կաղութեանը, շատ լաւ կը խաղար։ Երբ մօտեցաւ հին ընկերներու խումբին, Եղօն ըսաւ.

— Շա՛տ լաւ կը խաղաս, մե՛ր տղայ։

— Լաւ կը խաղայ, մինակ մէկ ոտքը գործը կաւրէ,— աւելցուց Հայկը։

— Մէկ աչքդ կլայ, ատ ալ քու չնորհքդ է,— ծիծաղեցաւ Գեւոն։

Առաջին անգամն էր որ այդ գաղտնիքը երեւան կը հանէր Գեւոն։

Հայկ չփոթեցաւ, կարմրեցաւ, բայց ժպտելով վրայ բերաւ.

— Սո՛ւս... «արտին բանը՝ տունը չեն ըսեր...»

Ա՜Յ ՍԵՒ ԱՄՊԵՐ

Ա՜յ սեւ ամպեր, վա՜յ սեւ ամպեր,
սիրտս պատեց սեւ ու մութ.
արդեօք ինձի ի՞նչ է բերեր,
զարնան ա՞նձրեւ թէ կարկուտ։
Ցոյսով - լոյսով արտ եմ ցաներ,
արիւն թափեր ու քրտինք.
ես սուրբերուն մոմ եմ վառեր,
աղօթք ըրեր՝ որ երկինք
արտիս նայի ու խընայէ,
օր տայ, կեանք տայ իմ ցանքին.
վա՜յ որդոցս... Աստուած չընէ՝
թէ որ անհաց մընացին...։
Ա՜յ սեւ ամպեր, ի՞նչ կորոտաք,
սիրտս պատեց սեւ ու մութ.
արդեօք ի՞նչ է արտիս բերեր,
զարնան ա՞նձրեւ թէ կարկուտ...

ԱՊՈՒ-ՀԱՍԱՆԻՆ ԿՕՇԻԿՆԵՐԸ

1

Ո՞վ չէր ճանչնար Պաղտատի մէջ Ապու-Հասանին հրաշակաւոր կօշիկները. այն կողմերը ո՞ր մարդուն յայտնի չէր Ապու-Հասանին երեւելի կօշիկները։

Քիթերը թափած, կրունկներուն մէկը այս կողմ, միւսը ան կողմ ծռած, հազար տեղէն ծակտած, գոյնը վաղուց կորսուած, խռիկ, կեղտո՞տ այդ կօշիկները՝ իրենց նմանը չունէին ամբողջ Պաղտատի մէջ։

Ծերունիները հաղիւ կը յիշէին այն օրը՝ երբ այդ կօշիկները առաջին անգամ զարդարեցին Ապու-Հասանին ոսկրուտ ոտքերը։ Այն ատեն Ապու-Հասան թէև նոյնչափ բարձրահասակ ու նիհար էր, բայց դեռ չամիչի պէս չորցած չէր. մօրուքը թէև նոյնչափ երկար ու փառաւոր էր, բայց դեռ ճերմակ մազ մը անգամ չունէր իր մէջ։

2

Այդ ծեր ու ժլատ Ապու-Հասանը, օր մը, բաղնիք էր գացեր։

Կօշիկները հանած ատեն, իր ծանօթներէն մէկը նայեցաւ ու ըսաւ.

— Ցարգե՛լի Ապու-Հասան, դեռ մէկ կողմ պիտի չնետե՞ս այդ կոշիկներդ՝ որ փոտեր են ոտքիդ վրայ։

— Հա՛, հա՛, ես ալ կը տեսնամ որ քիչ մը մաշեր են,— մրթմրթաց Ապու-Հասան և շտապով գնաց ներսը լոգնալու։

Լոգնալէն յետոյ, երբ լաթերը կը հագնէր, Ապու-Հասան իր մաշած, խոսիկ կոշիկներուն քով նշմարեց զոյգ մը նոր, սիրուն կոշիկներ։ Ու բացագանչեց.

— Անչուշտ բարեսիրտ ծանօթս է նուիրեր լինի այս կոշիկները. Ալլահը մէկ օրը հազար ընէ իրեն, տունն ու տեղը չէն պահէ...

Ու անվերջ օրհնելով իր առատաձեռն ծանօթը, Ապու-Հասան հագաւ նոր կոշիկները ու երջանիկ-երջանիկ եկաւ, գնաց բաղնիքէն։

3

Դուն մի ըսեր, առ կոշիկները խատիմն են եղեր։

Խատին բաղնիքէն կելլէ՝ լաթերն հագնելու, ասդին կոշիկ, անդին կոշիկ. չի կայ։ Կը պոռայ, կը բարկանայ խատին։ Բաղնեպան, ծառայ իրար կանցնին ու կոշիկները կը փնտռեն։ Մէյ մըն ալ տեսնես. կը բերեն առա Ապու-Հասանին փառաւոր կոշիկները, քիթերը թափած, կրունկներուն մէկը ասդին, միւսը անդին ծռած, հազար ու մէկ տեղէ ծակած, փրթած, կեղտոտ կոշիկները։

— Ասոնք Ապու-Հասանին գարշելի կոշիկնե՛րն են, կը պոռայ խատին. առ ժլատը գողցեր է իմ նոր կոշիկներս։ Շուտ վազցէ՛ք, բռնեցէ՛ք։

Կը հասնին Ապու-Հասանին եռեւէն ճիշտ իր դռանը առջև, կը բռնեն զինք ու կը տանին դատարան։ Կրնա՞ր

արդարանալ որ... գողցած կոշիկները ոտքն էին։ Եւ Ապու-Հասան պէտք է բանտարկուէր. և սոսկալի բան, պէտք է տուգանք վճարէր, և նորէն իր հին կոշիկներով տուն վերադառնար։

Այդ օրուընէ, Ապու-Հասան ատեց իր հուշկաւոր հին կոշիկները. չէ՞ որ այս բոլոր դժբախտութիւններուն պատճառը անոնք էին եղեր։

Տուն վերադառնալուն պէս՝ հանեց կոշիկները ու նետեց իրենց տանը առջևէն հոսող առուին մէջ։

4

Երեք օր յետոյ, ձկնորսները ձուկ որսալու ատեն, ջրէն հանեցին, ձկան տեղ, զոյգ մը կոշիկներ. քիթերը թափած, կրունկներուն մէկը ասդին, միւսը անդին ծռած, հազար ու մէկ տեղէ ծակծկած, կեղտոտ կոշիկներ։

— Ասոնք Ապու Հասանին գարշելի կոշիկնե՛րն են, պոռացին ձկնորսները, ու տարին նետեցին Ապու Հասանին բաց պատուհանէն ներս։ Կոշիկներէն մէկը դպաւ հնուց մնացած յախճապակի թանկագին սափորի մը ու կտոր կտոր ըրաւ։

Ապու Հասան տեղէն վեր ցատկեց, ու տեսաւ իր հռչակաւոր հին կօշիկները, տեսաւ փչրուած սափորը. երկու ձեռքով գլխուն զարկաւ, բայց ինչ օգուտ։ Առտուն, լոյսը բացուելուն պէս՝ իշաւ պարտէզը, և թաղեց, խորունկ թաղեց կօշիկները ծառի մը տակ, որ աղատի անոնց երեսէն ուա՛լ անգամ մըն ալ չտեսնէ։

5

Դրացին տանիքէն նշմարեց որ Ապու Հասան բան մը թաղեց, ու միտքէն ըսաւ.

— Կեցիր տեսնա՞նք. հիմա հասկցայ թէ Ապու Հասան ո՞ւր կը թաղէ իր ոսկիները...

Ու ճիշտ նոյն գիշերը, գաղտուկ, մտաւ Ապու Հասանին պարտէզը։ Փորեց, փորփրեց, թուփերը արմատէն քաշեց։ վերջապէս ծառին տակէն դուրս հանեց բան մը։

Լուսնի լոյսով լաւ մը քննեց, ու տեսաւ որ՝ կօշիկներ էին, քիթերը թափած, կրունկներուն մէկը ապլն, միւսը անդին ծռած, հազար ու մէկ տեղէ ծակ ծակ. խռիկ կօշիկներ։

— Ասոնք Ապու Հասանին անպիտան կօշիկներն են, ըսաւ դրացին, ու զայրացած այնպէս իջեցուց զանոնք Ապու Հասանին տան դռանը՝ որ խեղճ ծերուկը վեր թռաւ անկողինէն, ու շապիկով վազեց իմանալու թէ արդեօք գո՞ղ է մտեր իրենց տունը։

Վախէն դուռը չի բացաւ. բայց ալ քուն կո՞ւգար աչքերուն։

6

Առտուն, երբ դուռը բացաւ՝ ապշած մնաց. իր հռչակաւոր հին կօշիկները խնկած էին սեմին վրայ. իսկ պարտէզը, իր աչքին լոյս պարտէզը՝ տակն ու վրայ եղած։

Ապու Հասանին ծունկերը դողացին, աչքերը դէպի երկինք դարձան, ձեռքերը վեր բարձրացան ու իր շրթունքները այսքան միայն կրցան ըսել.

— Ալլա՜հ, աս ինչ պատիժ է։

Ամբողջ օրը Ապու Հասան խանութին մէջ մէկ բանի մը վրայ միայն կը մտմտար,— թէ ինչպէ՞ս աղատի իր հռչակաւոր կօշիկներէն։

Իրկուան դէմ, կամացուկ եկաւ քաղաքէն դուրս։

— Ահա քեզի հրա՜շք, Ապու Հասանը պտոյտի է ելեր, կրսէին զարմացած՝ անոր պատահող ծանօթները։

Ապու Հասան գնաց հեռո՛ւ, գետին ափէն քալելով. նայեցաւ չորս բոլորտիքը, տեսաւ որ մարդ չի կայ, վերցուց կօշիկները ու նետեց ջուրը։

— Գացէ՛ն, գացէ՛ն, կրսէր ուրախութեամբ Ապու Հասան, գացէ՛ն ծովը։

Եւ հանգիստ սրտով վերադարձաւ տուն, ու անուշ քուն մը քաշեց։

7

Բաղաքին ջուրերը, ջրմուղներով, գետէն բերած էին։ Միւս օր, երբ Պաղտատի կնիկները գացին աւազանէն ջուր առնելու, տեսան որ ջուրը կարեր է և աւազանը պարապ է։ Կանչեցին քաղաքապետը, բացին խողովակները և յանկարծ խողովակներէն մէկուն մէջէն դուրս ելան զոյգ մը կօշիկներ, քիթերը թափած, կրունկներուն մէկը ասդին, միւսը անդին ծռած, հաղար ու մէկ տեղէ ծակտած, կեղտոտ կօշիկներ։

— Սոնք Ապու Հասանին բորբոսնած կօշիկներ՝ են, պոռացին ամէնքը. դատաւորին տարէ՛ք Ապու Հասանը, ջուր աղականող այդ անպիտանը։

Ապու Հասան դարձեալ կանգնեցաւ խատիին առջև։ Ի՞նչ պիտի ըսէր. բաղմութիւնը աչքովն էր տեսեր իր կօշիկները՝ ջուրի խողովակին մէջ։ Ապու Հասան պէտք է վճարէր մեծ տուգանք մը և ուտէր մարակի յիսուն հարուած։

— Մեռա՛յ, կաղաղակէր անիկա ծեծին տակ, վա՛յ, մեռա՛յ...

Տքալով, անիծելով այն օրը որ գներ էր իր հռչակաւոր կօշիկները, անիծելով իր սև բախտը, Ապու Հասան կը վերադառնար տուն ու կը կրկնէր.

— Ուրիշ ճար չի կայ, ուրիշ ճար չի կայ, կրա՛կը պիտի նետեմ, պիտի այրե՛մ...

8

Բայց կօշիկները այնպէս թա՛ց էին որ։ Ապու Հասան գրաւ պատուհանին վրայ չորնալու։ Տան կատուն ցատկեց պատուհանը՝ արևին տակ տաքնալու համար. դպաւ կօշիկ-

ներուն. կօշիկները գլորեցան վար՝ փողոցը, և ինկան, չի-տա՛կ, տակէն անցնող մէկու մը գլխուն։



Անցորդը ցաւէն ճչաց. հաւաքուեցաւ ժողովուրդը և ի՞նչ տեսնէ. ճակատը ճեղքուեր է, արիւնը կաթիլ կաթիլ կը մղի, իսկ գետինն ինկած են զոյգ մը կօշիկներ, քիթը թափած, կրունկներուն մէկը ասդին, միւսը անդին ծռած, հաղար ու մէկ տեղէ ծակծկած, կեղտոտ կօշիկներ։

— Տեսէ՛ք, տեսէ՛ք, Ապու Հասանին գարշելի կօշիկները, կը պոռային ամէն կողմէ։ Էյ, Ապու Հասան, էյ, դո՛ւրս ելիր, մարդասպա՛ն...։

Ապու Հասանին դէմքը երեցաւ պատուհանէն և ակնթարթի մէջ կտաւի պէս ճերմկեցաւ։

Ամբոխը քաշնէ քաշ տարաւ զայն նորէն խատիին քով։

— Արդա՛ր դատաւոր, ողորմի՛ր, կաղերսէր Ապու Հասան՝ գետինը փռուած, լսէ՛ ինձի։ Իմ կօշիկներս, իմ անիծած կօշիկներս են դիս այս տեղ հասցնողը։ Հոգիս ելա՛ւ, ա՛լ ճար չունիմ, ինչքան ոսկի կուզես, ա՛ռ, միայն թէ փրկէ՛ դիս սա կօշիկներուն ձեռքէն։

Խատին չի կրցաւ ծիծաղը զսպել։

— Ոտքի՛ կեցիր, Ապու Հասա՛ն,— ըսաւ անիկա. տե՛ս, առաջ դո՛ւն չէիր ուզեր կօշիկներէդ բաժնուիլ, հիմա

ալ կոշիկներդ չեն ուզեր քեզմէ ձեռք քաշել։ Ներողութիւն խնդրէ այս մարդէն, բժիշկին վարձքը տուր ու ճամբու դիր, դուն ալ դնա քու բանիդ։ Կոշիկներուդ համար ա՛լ տարտմի՛ ըներ։



Ապու Հասանին կոշիկները կախեցին Պաղտատի մեծ հրապարակին վրայ։

Ո՞վ չէր ճանչնար, Պաղտատի մէջ, Ապու Հասանին այդ կոշիկները· քիթերը թափած, կրունկներուն մէկը ասդին, միւսը անդին ծռած, հապար ու մէկ տեղէ ծակծրկած, կեղտո՛տ կոշիկները· ո՞ր ժլատը չէր սարսափեր անոնց քովէն անցած ատեն։

ՀԱՐՍՆՔԱՐ

Սուրբ խաչ վանքին ճիշտ դէմն ու դէմ,
լեռան լանջքին տափարակ՝
հայաբնակ, հարուստ ու շէն
գիւղ մը կար հին ժամանակ։

Այդ ատենը նոյն աւանի
մէկ տանը մէջ անուանի,
կըլլայ, չըլլար՝ նոր հարս մը հեզ,
ամօթխած ու գեղանի։

Հարսը, օր մը, գլուխը բաց՝
բակը լրուացէ էր նստած.
յանկարծ... դրսի դուռը նռռաց.
կնքահայրն էր որ կուգար։

«Հողը գլխու՛ս...» հարսը ճչաց,
տաշտը առաւ բաց գլխին,
ու ամօթէն արձան կտրած՝
աչքը ուղղեց երկնքին.

— «Ա՜խ, Տի՛ր Աստուած, գիս քար դարձուր
եւ կամ խորէ գետնին տակ.
հողը գլխո՛ւս, երեսիս մո՛ւր,
եղայ ահա խայտառակ...։»

Աստծու դուռը այդ վայրկեանին
բաց էր՝ լսեց անոր ձայն.
խղճաց պարտակ այդ նոր-հարսին,
ու դարձուց զայն քար-արձան։

Ու հիմա ալ լեռան լանջին,
դարեր, դարե՛ր. շարունակ՝
արձանն հոն է, տաշտը գլխին,
եւ կը կոչուի Հարսնքար։

Ձեր ալ գիւղին կամ քաղաքին մօտերը այդ տեսակ քարեր կա՞ն, որոնց վրայ պատմութիւններ լսած ըլլաք։

ԳԱՅԼԸ

1

Խոր աշնան՝ ճամբորդութեան մը միջոցին, գիշերը վրայ հասաւ լեռնային գիւղի մը մէջ։ Հիւր եղայ Անդրէաս քեռիին տունը։ Անդրէաս քեռին հին ու փորձառու հովիւ էր։

Գեղերը սովորութիւն կայ, որ տեսան թէ մէկուն տունը հիւր եկաւ՝ դրացիները կը հաւաքուին հիւրին գլուխը, կը հետաքրքրուին, հարց ու փորձ կընեն՝ իմանալու թէ ինչ կայ, ինչ չի կայ աշխարհքը։

Եւ ահա, հետզհետէ, գեղացիք հաւաքուեցան Անդրէաս քեռիին սենեակը։

Տան տէրը վառեց օճախը, մենք ալ, ով ինչպէս ուզեց, տեղաւորուեցանք լայն ու արձակ տախտերուն վրայ, սկսանք կալաճի ընել։

Այս խօսակցութեան միջոցին՝ գեղին շունները սկսան անհանգիստ հաչել ու ոռնալ։

— Գա՛յլ է, միաբերան բացագանչեցին գեղացիք։

— Ինչէ՞ն գիտէք, հարցուցի ես։

— Շունները գալուհաչ կընեն, աղա՛։

— Գալուհա՞չն ի՛նչ է. շունները չէ՞ որ միշտ մէկ տեսակ կը հաչեն։

— Չէ՛, աղա՛, գայլի վրայ ուրիշ տեսակ կը հաչեն, մարդու վրայ ուրիշ։ Մարդոցմէ ալ՝ գողի վրայ ուրիշ տեսակ կը հաչեն, անցորդի վրայ ուրիշ։ Խումբի վրայ ուրիշ տեսակ կը հաչեն, մէկ հոգիի վրայ ուրիշ...

Հէնց այս խօսքին մէջ էինք, երբ հրաշքն մը կրակ-

ուեցաւ. շուներուն հաչոցը սաստկացաւ ու միենոյն տեղն աղմուկ մը բարձրացաւ։

— Հասէ՛ք, հէ՛յ... տարա՛ւ, տարա՛ւ...

Գեղացիք դուրս թափեցան։

2

Գեղէն դուրս, գիշերուայ մութին մէջ կը լսուէր խուլ աղմուկ։

Ես միայնակ էի մնացեր։ Տանը կնիկներն էին միայն հաւաքուեր դռան առջև և վախ-վո՛ւխ կընէին։ Մէջերնէն պառաւ մը կանիծէր գայլը.

— Վո՛ւյ, անտէր մնաս դուն, անտէ՛ր։

— Ինչ է պատահեր,— կը հարցնեմ անհամբեր։

— Գա՛յլ է, որդի՛, գայլ։ Ոչխարը լեռնէն գեղն են բերեր, եաւէն է ինկեր։

Վերջապէս, խառն ի խուռն, բարձր-բարձր խօսելով ու ծիծաղելով, դարձան գեղացիք։

— Աղա՛, հրպա՞ որ մենք կըսէինք։

— Իրա՞ւ գայլ էր։

Ինծի պատասխան տալու փոխարէն՝ առաջ բերին թիապէմ, 17—18 տարեկան պատանի մը։

— Տղայ Սիմո՛ն, պատմէ՛ թէ ի՛նչպէս եղաւ։

— Հա թէ ի՛նչպէս եղաւ։ Ոչխարը կը բերէի որ տունն ընեմ. բերի, մօտեցուցի գեղին, մէկ ալ տեսնամ որ ոչխարը հոս ու հոն կը փախչրտի. շունն ալ հա կաշխատի որ ոչխարին մէջն ընկնի։ Այս տեղն է որ շունները թուփի մը տակէն գայլի մը վրայ տուին ու ինկան եաւէն։

— Հասի՛ր հա հասի՛ր, բռնէ՛ հա բռնէ՛...

Հեղ մըն ալ տեսնամ, ոչխարը գլուխն առաւ ու սկսաւ

փախիլ։ Դառնամ նայիմ որ անտէր գայլ մը բռներ է ոչխարին մէկը, քով քովի կերթայ անոր հետ ու պոչովը կը քշէ առնէն. ոչխարն ալ հետը չափ ինկած՝ կերթայ. կերթայ, ինչպէ՞ս կերթայ, կըսես հարսնիքի ձիաւոր է...

— Հա՛յ հա հա՛յ... անցայ մէկ կողմ։ Հրացանը որ պայթեց, գայլը թողուց ոչխարը ու փախաւ։

— Անտէրը մտեր է ոչխարին մէջ, խարեր է,— դիտել տուաւ քեռի Անդրէասը, ու դարձաւ ինծի. այդպէ՛ս է անոնց սովորութիւնը, աղա՛. կուգան էգ ու որձ։ Մէկը ոչխարներուն քովը կը պահուըտի, կամ եթէ յաջողցնէ՝ ոչխարներուն մէջ կը խառնուի. միւսը կուգայ խաբելու շունն ու հովիւը, և հոտուը ձգելով, կառնէ կը փախչի։ Այս խառնակ ատենը, միւս պահուած ընկերն է կը խառնէ ոչխարը առջևէն ու կը տանէ։ Շատ անգամ, կը տանէ ոչխարը, կը պահէ ու ետ կուգայ ընկերոջը օգնութեան։ Վարպետ հովիւը փախած գայլին հետևէն չիյնար, գիտէ որ կռնակին կողմէն վտանգ կայ պատրաստուած։

— Աս ալ խելացի է փրթեր,— զարմացի ես պատանին. կրցեր է գայլին բերնէն անվտանգ ազատել ոչխարը։

— Գայլին բերնէն անվտանգ ոչխար ազատելն ինչպէ՞ս կրլլայ, աղա՛,— խօսեցաւ պատանին։ Գայլը տեսաւ որ ոչխարը ձեռքէն կերթայ, մինչև իմ հասնիլս՝ բերան մը զարկաւ, փրցուց ոչխարին դմակը, տարաւ։

3

Խօսակցութիւնը չարունակուեցաւ։ Գեղացիք, մանր ու խոշոր, սկսան պատմել թէ գայլը ի՛նչպէս կը յարձակի զանազան կենդանիներու և մարդու վրայ։

— Եզան ու գոմէշին վրայ յարձակած ատեն՝ անոնց գոկորդէն կը բռնէ,— մէջ մտաւ տաւարած մը։

— Տաւարին վրայ յարձակիլը այնքան ալ հեշտ չէ գայլին համար,— պատասխանեց քեռի Անդրէասը։ Տաւարէն մէկը պոռաց թէ չէ՝ ամբողջ տաւարը կը հասկնայ թէ բանն ի՞նչ է. իսկոյն բոլորը կը հաւաքուին, քամակ քամակի կուտան ու պոչերնին դէմ տալով կը կանգնին...

— Եզն ու գոմէշը շուտ կը յաղթուին, քե՛ռի Անդրէաս, ու հեշտ ալ գայլին բերանը կերթան։ Իսկ ինչ որ ձին կընէ գայլին, ոչ մէկ անասուն չի կրնար ընել։

Ձին գայլին հոտն առաւ թէ չէ, կը սրէ ականջները, կը փնչէ, կը փռնչէ ու անմիջապէս իր բոլոր ընկերները կը հաւաքէ մէկ տեղ։ Ձիերը կառնեն իրենց քուռակները մէջտեղնին, կը շրջապատեն զանոնք ու կը կանգնին, քամակները դէպի դուրս՝ գայլերուն կողմը դարձուցած, և աքացիները պատրաստ։ Ու Աստուած հեռո՛ւ տանի, եթէ գայլ մը մօտեցաւ։ Կռիւին մէջ գայլին համար ամէնէն վտանգաւորը զամբիկն է։ Զամբիկը միւս ձիերուն հետ շրջանակի մէջ չի մտներ։ Բաշը թոթուելով ու փռնչելով՝ կատաղօրէն կը պըտրտի շրջանակին չորս կողմը, կը յարձակի գայլերուն վրայ ու առջևն եկած գայլը կը տրորէ, կտոր կտոր կընէ առջևի սաքերով, կամ գետնին կը փռէ աքացիի մէկ հարուածով։

Ձին եթէ մինակ է, հետը չէ զամբիկը, այն ատեն կառնէ քուռակն իր տակը ու կը կանգնի։

Գայլը՝ մինակ ձիուն այս կողմն ու այն կողմը կը ցատկրտէ ու յանկարծ ոտաւմ մը տալով, կը բռնէ անոր կոկորդէն կամ իր ժանիքներով կը պատռէ փորը։ Երբեմն, քթէն բռնելով՝ շունչը կը կտրէ. երբեմն ալ ձիերուն առջևը

կիյնայ ու կը փախի — իրը թէ կը վախնայ. ձին ալ դունչը անկած՝ ետևէն կիյնայ, հալածելու համար. բայց յանկարծ գայլը ետ կը դառնայ ու կը բռնէ զայն։

— Գայլը, երբ որ կուշտ է, չատ վախկոտ կենդանի է, աղա՛,— աւելցուց քեռի Անդրէաս։ Բայց երբ որ անօթեցաւ, Տէրը ետ ու հե՛ռի ընէ, ա՛լ ոչ տաւարի կը նայի, ոչ մարդու։

— Է՛, որ այդպէս է, այստեղ խօսքը լինի տուէ՛ք,— ըսաւ քէհեա Աւօն ու սկսաւ իր պատմութիւնը։

4

— Պատմեմ ձեզի իմ գլխուս եկած դէպք մը,— սկսաւ քէհեա Աւօն։ Ծիրան անունով եղ մը ունէինք։ Զմեռ մը՝ այս եղը կորսուեցաւ։ Աղբարս զիս խրկեց վնտռելու։ Ես ալ 16-17 տարեկան կամ ու չի կամ։ Գացի գեղին չորս կողմը դարձա՛յ, դարձա՛յ, չի գտայ։ Արտերուն դին գոմեր ունէինք. ըսի՝ եղը տրված է, կարելի է հոն է գացեր։ Գացի, ա՛յս գոմը նայեցայ, ա՛յն գոմը նայեցայ, վերջը տեսնեմ որ եղը մէկ գոմին մէջ է։ Սիրտս ահ մի ինկաւ։ Տեսայ որ լոյսով գեղը պիտի չկրնամ հասնիլ. կը մտմտամ, երթա՛մ-չերթա՛մ։

Ի՞նչ ընեմ...

Զորս կողմս ամայի ձիւնապատ դաշտ, մարդ չի կայ, մարդասանք չի կայ. մէջքս դանակ մը ու ձեռքս ալ ճիպոտ մը.

Ի՞նչ պիտի ընես. եղն առջևս ձգեցի, քշեցի։ Քիչ մը տեղ հազիւ էի քալեր, յանկարծ իրիկուան ցուրտ քամին հետ՝ տխուր ձայն մը ինկաւ ականջիս։ Կեցայ, ականջ դրի...

Տեսնեմ՝ գայլի ոռնոց է. ո՛ւ ո՛ւ...

Ո՛ւ... այս ոռնոցին միացան ուրիշ ոռնոցներ և դաշտը լեցուեցաւ սարսափով։ Նայիմ որ, ի՞նչ նայիմ, աջ կողմս, հեռո՛ւն, մութին մէջ, զոյգ զոյգ վառած ճրագներու բազմութիւն մը կը շարժի...։ Անմիջապէս հասկցայ որ գայլի աչքեր են։

Եղան գլուխը դարձուցի դէպի գոմերը, ու կը քշե՛մ, ինչպէ՛ս կը քշեմ. կը վազե՛մ, ինչպէ՛ս կը վազեմ...։ Ետ նայիմ, որ արդէն կուգան։ Ընկայ գոմը, բարձրացայ սիւներուն վերև, մտայ գերաններուն մէջտեղը դատարկ տեղի մը մէջ...

Դեռ չէի տեղաւորուեր— մէկ ալ տեսնեմ եղիս գոռոցը բարձրացաւ։ Զարմա՞նք բան է թէ այնքան տարածութիւնը ի՞նչպէս մէկ երկու րոպէի մէջ կտրեցին ու հասան։

— Վա՜յ, գայլի ոտքին ինչը՞ կը հասնի,— խօսեցաւ քեռի Անդրէաս։

— Հա՛, եղիս գոռոցը բարձրացաւ ու անմիջապէս կտրեցաւ, խռխռոցն ալ դադրեցաւ։ Խռխռոցն ալ դադրեցաւ, ու միայն գայլերուն մռլտուքը կը լսուի. ու կիմանամ որ ինչպէ՛ս կը լափեն...

— Վա՛յ, Ծիրա՜ն ճան... դուրս թռաւ սրտէս։

Բայց ի՞նչ Ծիրան ճանի ժամանակն է։ Ես իմ գլխուս ճարը նայիմ։ Կը մտածեմ թէ՝ աս լաւ եղաւ, եղով կը զբաղին՝ մինչև լուծայ. կա՛մ կը կշտանան ու կերթան, կա՛մ, կըսեմ, գիս չեն գտներ...։ Դուն մի՛ ըսեր՝ անօթի գայլերու վոհմա՛կ, ես յիսուն ըսեմ, դուն հարիւր հասկցիր. մէկ եղով ո՞րը պիտի կշտանայ։

5

Մէկ ալ տեսնամ, մութ գոմը լեցուեցան ան զոյգ զոյգ վառած ճրագները, երախնին բացած...

Գոան...

Եկեր լեցուեր են, ու վարէն ագահ ագահ ինծի կը նային։



Ես ալ չորցեր մնացեր եմ վերը, գերանին կպած։ Նայեցան, նայեցան ու թողին դուրս գացին։

Շունչս ետ եկաւ։ Ըսի՝ «փառք չատ ըլլի, Աստուա՛ծ, ազատեցա՛յ»...

Դեռ Աստծու փառքը բերանս էր, մէյ մըն ալ ինչ լսեմ։ Իմ ուղղութեամբ, վերէն տանիքը կը քանդէն. կը ճանկրտեն հողը ու ետ կուտան։ Ահա կը լսեմ որ ճանկերը արդէն կոճերուն կը դպնան...

Պաղ քրտինք մը կոխեց զիս... ինչ ընեմ. մտածեցի՝ փոխեմ տեղս. ու շուտով անցայ ուրիշ գերանի մը տակ, պառկեցայ։

Բացին. կոճը վեր առին, տեսան որ տակը չի կամ։

Նորէն եկան գոմը. նայեցան որ միւս գերանին տակ եմ. ետ գացին դուրս։ Հիմա ալ այդ գերանին վրայէն սկսան փորել տանիքը։

Դարձեալ տեղս փոխեցի։ Այսպէս, անոնք փորելով, ես տեղս փոխելով՝ հասանք վերջին գերանին։

Ալ ո՞ւր երթամ։

Եկան, կատղած նայեցան ու ետ գացին։ Կը փորեն, ինչպէ՞ս կը փորեն...

Հանեցի դանակս, բռնեցի ձեռքս. մաքէս աղօթք կը-ընեմ.— Տէ՛ր Աստուած, դո՛ւն զիս ազատես այս նեղ տեղէն...

Բայց, ճիշտ ականջիս վերև կը փորեն։ Փորելով հասան կոճերուն։ Մէկը՝ կոճերուն արայէն թաթը ներս կոխեց որ քաշէ կոճը։ Բռնեցի թաթը ու սուր դանակով, զը՛ռաթ, կտրեցի... վեր քաշեց ոտքը՝ ոռնալով ու կոնծկոնծալով. տանիքին վրայ իրարանցում մըն է սկսաւ։ Իմացեր էի որ եթէ գայլին մէկը վիրաւորուեցաւ, միւս ընկերները կը թափին, կուտեն անոր միսը։ Ըսի՝ ուրեմն կուտեն զայն։ Հիմա կը սպասեմ որ կուտեն, կը լմնցնեն ու նորէն կուգան։ Նորէն դանակը ձեռքս, պատրաստ կը սպասեմ։

Ականջս ձայնի է։ Գիշերը ուշ ատեն, երազի պէս, բարակ ձայն մը կը լսեմ։

— Հէ՛յ, Աւօ...

Զիս կը կանչեն...

— Տէ՛ր Աստուած, իրա՞ւ ինծի է ձայն կուտան... իրա՞ւ աղբարս է... իրա՞ւ մերիններն են...

Գոմէն ձայն կուտամ, կը պոռամ.

— Աղանի՛կ, հէ՛յ... հոս եմ... գո՛մն... եմ... գայլերը կուտեն զիս... հասէ՛ք, հէ՛յ...

Նորէն անոնք կը կանչեն. իմ ձայնս չեն լսեր, թէև ես շարունակ կը պոռամ։

Հեղ մըն ալ տեսնեմ, հրացանները կրակուեցան, ետեւէն ալ լսուեցան գայլերուն կաղկանձն ու մարդոց աղմուկը։ Որոշ ճանչցայ աղբօրս ու մեր գեղացի տղոց ամէն մէկուն ձայնը։

— Հէյ, Աւօ՛...

— Հա՛ս եմ... հա՛ս եմ... ողջ եմ...

Լեցուեցան գոմը։

— Փա՛ռք քեզ, Աստո՛ւած, փա՛ռք քեզ,— զարմացած կը կրկնեն ամէնքը։

Վար իջայ գերանին տակէն։ Ինկայ ագռօրս գիրկը ու սկսայ լալ։

— Ալ մի՛ լար, ղնա՛ փառք տուր որ այսօր նոր ծնար մօրմէդ,— ըսին այս ու այն կողմէն, ու զիս դուրս տարին, ուր թափած էին մեր Ծիրան եզին ոսկորները։

Դեռ լոյսը չէր բացուեր։

Հեռուէն կը լսուէր գայլերուն ոռնոցը, երբ մենք տուն կը դառնայինք։

ԳԻՇԵՐ

Ծաղիկներն ամէն ցնջեր են մուշ-մուշ՝
անմուն հովերու սրբիցգովն անուշ.
ցնջեր է արօտ, ցնջեր է ցոցիկ,
հանգչեր է խաղաղ՝ բլլուրն ալ հեռուն.
հանգիստ են հիմա հրսկան ու ցրնիկ,
իսկ երազին մէջ կը խնդայ առուն։



ՄՕՐ ՄԸ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՏՂՈՒՆ

Այս գիշեր, Շաւա՛ղ, գէշ երազ մը տեսայ։

Տեսայ որ ցուրտ տան մը մէջ կը գտնուիմ, ծերացեր եմ, ունեցած չունեցածս ծախեր եմ՝ քեզ կրթելու համար, և աղքատ եմ ինկեր։ Իսկ դուն՝ տխուր-տրտո՛ւմ, գեփ-գեղին կտրած, կըսես ինծի.

— Բայց, մայրի՛կ, մենք հարուստ պիտի ըլլանք. ես դրամ պիտի վաստակիմ, բժիշկ պիտի ըլլամ։

— Բայց, բա՛ն չես սորված, տղա՛ս, կը պատասխանեմ քեզի։

— Վաճառական պիտի ը՛լլամ։

— Հապա ինչ ես սորվեր որ վաճառական ըլլաս։

— Երկրաչափ պիտի ը՛լլամ։

— Ո՞ւր է հապա սորվածդ...

Դուն ինծի մէկիկ մէկիկ կը համրէիր բոլոր արհեստներն ու արուեստները, ես ալ միշտ կը պատասխանէի.— «հապա բան չես սորվե՛ր։»

Հեղ մըն ալ տեսայ որ սկսար լալ, ըսելով.

— Ինչո՞ւ համար է որ բան չեմ սորվեր, մայրի՛կ։

— Անոր համար է որ՝ երբ պզտիկ տղայ էիր, չէիր մը-տածեր քու մայրդ. կը խաղայիր, դասերուդ հոգ չէիր տա-ներ՝ ըսելով. «վաղը կը սորվիմ։» Ու հիմա մեծցեր ես ու բան չես գիտեր ան։. ես աղքատ եմ մնացեր, և աղքատ ու թըշ-ուառ ալ պիտի մեռնիմ։

1. Ինչ ըսել է արհեստ, ինչ ըսել է արուեստ։

ՈՍԿԻԷ ԻԼԻԿԸ

ՀԷՔԵԱԹ

1

Կար ու չկար, կին մը կար։ Ան կինը ունէր երկու աղջիկ. մէկը գեղեցիկ, բայց ծոյլ. միւսը տգեղ, բայց շատ աշխատասէր։

Մայրը շատ կը սիրէր գեղեցիկը, իսկ տգեղին միշտ բուրդ մանել կուտար։

Անգամ մը, ջրհորին գլուխը կեցած ատեն՝ տգեղ աղջկան թելը կտրեցաւ, ու իլիկը ինկաւ ջուրը։

Խեղճ աղջիկը գլխուն զարկաւ, եկաւ մօրը պատմեց թէ իլիկս ինկաւ ջրհորը։

Մայրը թէ՝ «աղջի՛կ, ո՛չ ան, ո՛չ ասա. պէտք է երթաս՝ իլիկը բերես, եթէ ոչ ձեռքէս չես ազատիր։»

Աղջիկը չէր գիտեր թէ ի՞նչ ընէ. տխուր-տրտում եկաւ ջրհորին բերանը. ծռեցաւ, վար նայեցաւ, ու յանկարծ գլխի վրայ ինկաւ ջրհորին մէջ։

Երբ խելքի եկաւ ու աչքերը բացաւ, տեսաւ գեղեցիկ, անմման մարգագետին մը։ Արև-արեգակ, ճաճանչ, կանանչ, ծառ ու ծաղիկ, վարդ ու մեխակ, մէկ խօսքով՝ ես քիչը ըսեմ, դուք շատը հասկցէք, չտեսած բաները տեսաւ։

Աղջիկն ուրախացաւ ու ատ մարգագետինը բռնելով՝ գնա՛ց, գնա՛ց հասաւ հացով լեցուն թոնիրի մը։ Թոնիրին մէջէն հացերը ձայն կուտային.

— Վառեցա՜նք, այրեցա՜նք, աղջի՛կ, հանէ՛ մեզ թոնիրէն, ազատէ՛։

Աղջիկը ծռեցաւ, փրցուց հացերը թոնիրին կողերէն, դուրս հանեց, փռեց, պաղեցուց և շարեց իրարու վրայ ու գնաց։

Գնաց, գնա՛ց հասաւ խնձորի ծառի մը։ Խնձորենին հիւանդի պէս կը ոգար ու կը կանչէր.

— Մեռա՛յ, մեռա՛յ. ծանր է բեռս, շատ են խնձորներս. մե՛ղք են ճիւղերս, թա՛փ տուր, թափահարէ՛, չա՛րժ տուր, շարժէ՛ զիս։

Աղջիկը լսեց, խղճաց խնձորենիին, թոթուեց ծառը, հաւաքեց խնձորները տեղ մը ու գնաց։

Գնա՛ց, գնա՛ց, այս անգամ դէմն եկաւ տուն մը։ Ներս մտաւ, տեսաւ ծեր կին մը՝ որ հիւանդ պառկած է։

— Աղջի՛կս, դուն բարով եկար, իմ աչքիս ու գլխուս վրայ եկար. ես անորդի մայրիկ եմ, տէր չունիմ, տիրական չունիմ, ինկեր եմ հիւանդ. պահէ՛-պահպանէ՛ զիս՝ մինչև որ աղէկնամ։

Աղջիկը մնաց հիւանդին քով, պահեց-պահպանեց զայն, հոգ տարաւ. խնամեց. ջուր դրաւ՝ լոգցուց, քրտնցուց, ոտքի հանեց։

Պառաւը որ աղէկցաւ ու ոտքի ելաւ, աղջիկն ըսաւ անոր.

— Մայրի՛կ, տէ՛ ինծի իրաւունք տուր՝ երթամ. երթամ իլիկս փնտռեմ, գտնեմ, տուն դառնամ, գործս տեղը չի մնայ։ Կարօտցեր եմ մեր տունը...։

— Լա՛ւ, աղջիկս, աղէկ կընես որ կը սիրես քու հօրենական տունդ. երթանք, գտնենք իլիկդ։

Ձեռք ձեռքի տուին ու գացին։

Շատ գացին, քիչ գացին, հասան փակ դռան մը։

Պառաւն ասաւ.

— Բա՛խտի դռնակ, բարև՛, բարև՛,
բացուի՛ր, մաղէ՛ ոսկի անձրև.
աս աղջիկը գեղեցկացուր,
և մազերը ոսկի դարձո՛ւր.
Ջանասէր է այս աղջիկը,
ոսկի ըրէ՛ իր իլիկը։

Այսպէս որ ասաւ, դուռը բացուեցաւ։ Երկուքն ալ մէկտեղ ներս մտան դռնէն։

Մէյ մը ալ անձրեւն է մաղ տուաւ-մաղեց, ցօղ աբուաւ-ցօղեց ոսկին աղջկան գլխուն. աղջիկն ունեցաւ ոսկիէ մազիկ, գեղեցկացաւ, խաս ու ղումաշ լաթեր հագաւ, դարձաւ կաքաւ։

Պառաւը վերցուց ոսկիէ իլիկը՝ տուաւ աղջկան, համբուրեց զայն ու ասաւ.

— Աս ալ՝ զիս պահելուդ վարձքը, աշխատանքիդ գինը։

Պառաւը այսպէս ասաւ-չըսաւ, դուռն է փակուեցաւ, պառաւն անյայտացաւ։

Աղջիկը աչքը խփեց բացաւ, ահա իրենց տունը։

Շունն ու կատուն դէմը վազեցին, աքաղաղն ալ կանչեց թառէն «կու-կու-լիկ-կո՛ւ»։

Ոսկեմազիկը գնաց մօրն ու քրոջը քով։ Պատմեց իր տեսածն ու լսածը։ Մայրն ու քոյրը սիրով ընդունեցին զինք, որովհետև ոսկի շատ էր բերեր։

2

Մայրը իր սիրելի աղջիկն ալ խրկեց ջրհորին քով՝ բուրդ մանելու։

Ծոյլ աղջիկը մանեց, մանեց, ու իլիկը գիտամբ ձգեց ջրհորը, ինք ալ գլխի վրայ ինկաւ մէջը։

Երբ որ խելքը գլուխն եկաւ, նորէն այն մարգագետնին վրայ տեսաւ զինք։

Մարգագետնէն գնաց, գնա՛ց, հասաւ այն թոնիրին։ Հացերը կը կանչէին.

— Հանէ՛ մեզ կրակէն, վառեցա՛նք, այրեցա՛նք։

Ծոյլ աղջիկը թէ՝

— Իմ շատ պէ՛աքս է որ վառեցաք, այրեցաք. ո՞վ վրան գլուխը պիտի կեղտոտէ ու ձեռքերը մոխրոտէ։

Գնաց, գնա՛ց, հասաւ խնձորենիին։

Խնձորենին կը կանչէր.

— Մեռա՛յ, բեռս ծանր է. թա՛փ տուր, թափահարէ՛, շարժ տուր, շարժէ՛ զիս, հասունցեր են խնձորներս։

— Հա՛, ա՛լը մնաց, ա՛տ էր պակաս։ Կը մեռնիս՝ մեռի՛ր, ինձի՛ ինչ որ կը մեռնիս. ես կերթամ՝ որ ոսկեմազիկ դառնամ, ոսկի բերեմ։

Գնաց, գնա՛ց, հասաւ պառաւին տունը և սկսաւ ծառայել անոր։

Առաջին օրը՝ կանուխ եկաւ, հաւքեց, մաքրեց սենեակը և կատարեց հիւանդին կամքը։

Երկրորդ օրը՝ սկսաւ ծուլանալ։ Երրորդ օրը՝ աւելի շատ։ Չորրորդ օրը արդէն տեղէն անգամ չէր շարժեր։

Պառաւը ձանձրացաւ ծոյլ աղջիկէն. հիւանդ-հիւանդ տաքի եկաւ, տաքտաքով տարաւ ծոյլը ան բախտի դռան մօտ ու ասաւ.

Բացուի՛ր, դռնա՛կ, տէ՛ ցնծա՛
այս աղջկան մէկ ընծայ.
շատ քրս-քրսան, ծոյլ է սա,
կարժէ կուպը մը կախեայ.

Թող կուպրոտի, լաւ սենայ,
ու կպրոտած՝ տուն դառնայ։
Երբ ծոյլ աղջիկը տուն եկաւ, աքաղաղը կանչեց.
— Կու-կու-լիկ-կո՛ւ.
աս ո՞ւր գնաց, ո՞ւր եկաւ.
աս կուպրոտը զո՞ւր եկաւ,
ճերմակ գնաց, սև եկաւ,
սիրուն գնաց, դեւ եկաւ.
ելէ՛ք, տեսէ՛ք. ո՞վ եկաւ։

Ու այսպէս, ջանասէր աղջիկը դարձաւ ոսկեմազիկ ու գեղեցիկ. ծոյլ աղջիկը կուպրոտ ու տգեղ մնաց։ Ինչքա՜ն լոգցուցին, չիտակեցաւ. այն կպրոտն էր, ու կպրոտ ալ մնաց։

Դուք ալ գիտէ՞ք ասոր պէս հէքիաթ մը. պատմեցէ՛ք ու գրեցէ՛ք թուղթի վրայ։

ԱՆՈՒՇԱՒԱՆԻՆ ԽԵՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ի՞ՆՉ ԼԱՒ ՁԻԱՒՈՐ ԵՄ»



Տես ինչպէ՞ս կը բռնեմ

Օգնէ որ հեծնեմ...



Ա՜յ, այսպէս
պէտք է նստիլ



Վա՜յ, հասէ՞ք...

Ճրլը՛մի...

Ցի՛ յի՛ յի՛

ՊԱՏԿԵՐԻ ԴԱՍ

ԴՐԱՒՈՐ ԵՒ ՌԵԲԱՆԱՑԻ

Պատմեցէք բերանացի՝ այս պատկերին պատմութիւնը և գրեցէք յետոյ այդ պատմութիւնը թուղթի վրայ։

Ուսուցիչներուն համար իբրև օրինակ կը դնենք ներկայ դասը, որպէսզի փորձեն յաճախ նման պատկերի դասեր, թէ՛ իբրև դիտողութեան մարզանք, թէ՛ իբրև շարադրութեան նիւթ։

ՆԱՄՈՒՍ ՈՒ ԽԱՅՐԱԹ

Դեռ բոբովախօս մանուկ մըն էի
եւ եօթ տարեկան անգամ չիկայի,
երբ ինձ աւանդեց իմ հայրըս անուս՝
սրբազան խօսք մը, այսինքն՝ «նամուս»։

Դպրոցի շեմքը դեռ ոտք չի դրած,
դեռ նոր ես գիրքը ձեռքս էի առած՝
երբ մօրս համբոյրը թրջեց իմ նակատ
եւ պատուիրեց ինձ ընել միշտ «խայրաթ»։

Բայց ի՞նչ մնացի ես վարժատունը,
աղքատի բախտ է, ամէն տեղ նո՛յնը...
հօրս պատուէրով սորվեցայ արհեստ,
սիրեցի անոր վաստակը համեստ։

Եւ անկէ իվեր,
երբ եղայ մուրճի ու սալի ընկեր,
քրտինքը դէմքէս կը ծորի կաթ-կաթ՝
ինձ յիշեցնելով «նամուս ու խայրաթ»,
նա՛մուս ու խա՛յրաթ։

ՏԵՍՆԵՆՔ Ո՞Վ Է ԿՏՐԻՃԸ

1

Անձրեւը մէկ քանի օր անդադար կուգար։ Փոքրիկ վտակները մէկ մէկ գետ էին դարձեր, ու փրփրալով, կատաղօրէն կը գլորուէին լեռներէն դարվար։

Երկաթուղիի գծին մօտ, տան մը մէջ՝ կը խաղային չորս տղայ, բոլորն ալ գրեթէ իրարու հասակակից։

— Է՛, Սագո՛ — պոռաց անոնցմէ մէկը. եթէ իրաւ կարիճ ես, կե՛ցիր երկաթուղիի գծերուն վրայ, այս բոպէին պիտի անցնի շոգեկառքը։

— Ինչո՞ւ կանգնիմ,— պատասխանեց Սագօն. ատոր կարիճութի՞ւն կըսեն։

— Ա՜, վախկո՛տ, վախկո՛տ, կը պարծենաս թէ ամէնէն քաջ ես։

Եւ երեք ընկերները սկսան ծաղրել Սագօն։

Փիչ մը յետոյ, անոնք դուրս եկան սենեակէն՝ տեսնելու թէ ինչպէս արագ կանցնի կառախումբը։

Իսկ Սագօն անոնց ետեւէն պոռաց.

— Ի՞նչ կայ այս անձրեւին դուրսը, եկէ՛ք ներս. պարապ տեղը կը թրջի՛ք։

Բայց, յանկարծ, լսուեցաւ սարսափելի դղրդոց մը։

— Սագո՛, Սագո՛։

Տղան դուրս վազեց։ Տեսաւ որ մօտակայ կամուրջը փլեր է դղրդալով։ Իսկ կառախումբն է շուտով պիտի գայ անոր վրայէն անցնելու։ Պիտի գայ ու գլորուի անդունդը։

Բոլորին սրտերը սաստիկ կը բաբախէր։

— Պէտք է շուտով հնար մը գտնենք՝ կառախումբը փրկելու,— պոռաց Սագօն։ Որքա՞ն ատենէն կարելի է հասնիլ կայարանը։

— Կէս ժամէն աւելի կը քշէ։

— Արդեւօք մէկէն ձի մը կարելի չէ՞ ճարել։

— Ջաղացպան Գրիգորն ունի. բայց Ջաղացքն ալ տասնըհինգ րոպէ կը տեւէ։

— Ուրեմն, գո՛ն, Ցոսէ՛փ, վազէ՛ դէպի Ջաղացքը և փորձէ որ կայարանը լուր մը հասցնես։ Արմո՛, դուն ալ գնա գծին ճամբով, գուցէ կարողանաս պահապանին իմաց տալ՝ որ կեցնէ կառախումբը։ Իսկ ես ու Արութը կը մնանք հոս. եթէ դուք բան չընէք, մենք կաշխատինք կանգնեցնել։

2

— Շատունց է որ այսպիսի հեղեղ չեմ տեսեր,— ըսաւ մեքենավարը, որ կը կառավարէր արընթաց կառախումբը։

— Ես ալ,— պատասխանեց օգնականը. վախնաս որ կամուրջները փլասուած ըլլան։ Տե՛ս, տե՛ս, ինչ հեղեղներ կիջնեն լեռներէն։

Կառախումբը շոգեշունչ կը սլանար։

— Ինչ կը պոռայ սա՛ տղան,— հարցուց մեքենավարը, տեսնելով գծին քով, քարի մը վրայ, տղայ մը՝ որ բարձր ձայնով կը պոռար։

— Հեղեղներու ձայնէն ու անիւներուն ժխորէն բան չի լսուիր։

— Այս անձրեւին ինչպէս մանուկները դուրսը կը թողուն։

Կառախումբը թշալով, օձի պէս կը սողար կատաղած գետին ափէն։

—Առաջ նայի՛ր,— կանչեց մեքենավարը. տա ի՞նչ բան է։

—Երկու մանուկ ժամանակ են գտեր գծին վրայ խաղալու։ Սուլէ՛ որ հեռանան։

Մեքենան սուլեց։ Սուլումին արձագանգը խուլ կըրկնուեցաւ ձորերու ոլորքներուն մէջ։

Մանուկները կեցած էին ճամբուն վրայ. պարզ էր որ կառախումբին կը սպասէին։ Մէկը թաշկինակը կը շարժէր՝ աւելի ու աւելի ուժով, և դէպի հեռուն ցոյց կուտար։

— Ա՛ռ քեզի բան,— բացագանչեց մեքենավարը։ Ի՞նչ կը նշանակէ ասիկա։

— Իրաւ որ զարմանա՛լի է։ Կը տեսնե՞ս, այն մէկը անդին քաշուեցաւ, բայց միւսը չուզեր հեռանալ ու միայն թաշկինակը կը շարժէ։ Ի՞նչ ընենք։

— Նորէն սուլեմ։

Կրկնուեցան խռովալի սուլումները։ Բայց տղան կեցած էր ու շարունակ կը շարժէր թաշկինակը։

— Տէ՛ր Աստուած, տղան պառկեցաւ ճիշտ գծերուն վրայ, պիտի ճզմուի... չո՛ւտ, անուարգելին դիմէ։

Թէև յոյս չի կար, սակայն երկուքն ալ սկսան արագ-արագ դարձնել անուարգելը։

Միայն հարիւր, հարիւր յիսուն քայլ կը բաժնէր կառախումբը մանուկէն. իրա՛ւ, անուարգելը արդէն կը սկսէր աղդել, բայց շոգեկառքը չէր դադրեր արագօրէն սլանալէ։

Արդեօք կարելի պիտի ըլլա՞յ փրկել մանուկին կեանքը։

Ո՛չ, յոյս չի կար. կառախումբը աւելի ու աւելի կը մօտենար։

Անդադրում սուլոցները վախ ազդեցին ճամբորդներուն, որոնք սարսափահար խռնուեր էին դռներուն ու պատուհաններուն մօտ։

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ,— կը հարցնէին իրարու։

Ճի՛շտ է, կառախումբը կը դանդազի, բայց տարածութիւնը այնքան փոքր է մնացեր։

— Այդ տղան կա՛մ խուլ է, կա՛մ խելագար,— կըսէ մեքենավարը. պառկած է ու տեղէն չի շարժիր։

Սուլոց սուլոցի հետէ. խղո՛ւր։

Արդէն միայն քսան, տասը, հինգ քայլ է մնացեր տղուն մահուան։ Ցանկարծ, ուրախութեան ճիչ մը փրթեցաւ մեքենավարին ու օգնականին կուրծքէն. կառախումբը կանգառաւ տղայէն երկու քայլ հեռուն։

Մեքենավարը վար ցատկեց և բարկացած պոռաց.

— Անպիտա՜ն...

Իսկ տղան, կարծես յանկարծ ցնցուած, վեր ցատկեց տեղէն և ցոյց տալով կամուրջը՝ ըսաւ.

— Փլե՛ր է։

Ու անմիջապէս նորէն խնկաւ դեռին։

Անցորդները դուրս թափեցան վագոններէն ու կը վազէին մեքենային կողմը։

— Ի՞նչ է եղեր, ի՞նչ է եղեր։

— Կամուրջը քանդուեր է, ահա՛ մեր փրկիչը,— պոռաց մեքենավարը յուզուած։

Բայց Սագօն բան չէր լսեր, որովհետև մարած էր...

Երկինքէն անձրևը շարունակ կիջնէր, իսկ լեռնային հեղեղները դղրդալով կը գահավիժէին դարվար, դէպի վարարած գետը։

ԿՈՅՐ ԵՐԿՐԱԳՈՐԾԸ

Օգոստոսի մէջ էր, հունձքերը հասունցեր էին ու գեղացիք չատունց մտեր էին մանգաղի։

Յովհաննէս ամուն կեցեր էր գերեզմաննոցի ծառին տակ միսմինակ ու կը քաշէր չպուխը։ Քիչ մը անդին կարծէր իր էշը, կրծելով կանաչ խոտերը։

Յովհաննէս ամուն ութսուն տարեկան էր և խեղճին աչքերը վաղուց կուրցեր էին։

Մինակ է, կըսեմ. երթամ քիչ մը իր քով։

Կերթամ, կը նստիմ մօտը ու ձայն կուտամ։

— Դո՞ւն ես, Կարապե՛տ, կըսէ ինծի, ճանչնալով ձայնէս... չուքին տակ կեցեր եմ, զաւա՛կս։

Ու, անուշ-անուշ, կը խօսինք իրարու հետ։

Յովհաննէս ամուն չատ կը սիրէ իր էշը, որ նոյնպէս ծերացեր է։

— Է՛, տարիքս անցեր է, կըսէ ինծի; աչքերս ալ չեն տեսներ։ Նստեր եմ ահա՝ էշը կը պահեմ. չիտակն ըսելով, էշն ալ զիս կը պահէ... երկուքս ալ բանի չենք դար այլևս... բայց, չատ խելօք կինդանի է. գիտէ որ չեմ տեսներ, անոր համար քովէս չատ հեռուները չերթար...

— Բայց, ամո՛ւ, օրերը երկար չե՞ն երևնար քեզի այսպէս։

— Չէ՛, ամենեւի՛ն, կըսէ ծերունին՝ գլուխը երերցընելով։ Մինակ թէ՝ տունը չեմ կրնար նստիլ. երբ դուրսը արև-բարի ըլլայ, կելլեմ տունէն, կը նստիմ այս ծառին տակ կամ կերթամ արտը։ Մաքովս կը տեսնեմ դաշտը, մեր գեղը, մեր գեղին տունները, երդիքներէն ելլող մուխերը. կը տեսնեմ գոմէշները՝ որ կորոճան դաշտին մէջ, ճամբորդները՝ որ կանցնին գեղին ճամբէն։ Գիտե՞ս, հիմա իմ աչքերս ականջներուս մէջ են, ձեռքերուս վրայ են... երբ որ կկուին ձայնը լսեմ, կըսեմ ինքնիրենս. «ահա Մարտին մէջ ենք, օդերը տաք պիտի երթան»։ երբ որ ականջիս գայ կերնեխին սուլոցը՝ կըսեմ. «ահա Ապրիլն ալ եկաւ»։ իսկ որ ճպուռը իր ձայնը ձգեց՝ խօսք չի կայ որ Օգոստոսն է արդէն... կը համրեմ այսպէս ամիսներն ու օրերը, միտքս կը բերեմ լոյս աչքով տեսածներս ու կը միխիթարուիմ...

Եւ ծերունին կը քաշէ չչուխը և ձայն կուտայ իր իշուն.

— Է՛յ, խը՛ռօ, հո՞տ ես, հեռուները չերթա՛ս...

1. Ինչո՞ւ Յովհաննէս ամուն ըսաւ թէ «հիմա իմ աչքերս ականջներուս մէջ են, ձեռքերուս վրայ են». ի՞նչ ըսել է այս խօսքը։

ՕՁՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Ամառ էր։ Նախրապան Աւօն իրենց մէկ քանի գլուխ անասուններն ըրած էր լեռան թփուտը, իսկ ինք թրթնջուկ կը քաղէր։

Ցանկարծ, թփի մը տակէն դուրս սողաց անագին սև օձ մը, կանգնեցաւ պոչին վրայ և խոժոռ դէմքով սկսաւ նայիլ Աւօյին։ Զարմացած, Աւօն սկսաւ փախչիլ՝ որքան ուժ որ կար ոտքերուն վրայ. իսկ օձը ինկաւ անոր ետեւէն։

Սարսափելի էր։

Փախստականը ա՛լ քար ու թուփ չէր նայեր. կը վազէր՝ առանց ետեւը նայելու, կը վազէր՝ լեռան ստորոտը, կը վազէր՝ որ հոգին ազատէ։ Իսկ կատաղի օձը անընդհատ կը սուլէր և մերթ կը ոստնէր, մերթ կը սողար՝ որ բռնէ առաջ հասնի իր զոհին։

Վարը, ձորին մէջէն, կը հոսէր գետակ մը։ Հասնելով անոր, Աւօն ինք ալ չի հասկցաւ թէ ինչպէս անցաւ միւս ափը, և շարունակեց հև ի հև փախչիլ։

Օձին սուլոցը ա՛լ չէր լսուեր։

«Երեւի, ջրին ձայնը չի թողուր որ լսեմ» մտածեց Աւօն և աւելի ուժ տուաւ ոտքերուն։

Երբ գետակէն բաւական հեռացաւ և դարձեալ օձի սուլոց չի լսեց, սրտանդուեցաւ, կանգ առաւ՝ և մեքենաբար ետ նայեցաւ։ Իրաւ որ օձ չի կար, բայց գետակին միւս ափը՝ թռչուն մը կարծես կը կռուէր սև բանի մը հետ։

Մոռնալով իր երկիւղը, Աւօն չտասլով բարձրացաւ մօտի բլրակին գագաթը և հետաքրքրութեամբ սկսաւ դիտել թռչունը։

Արագիլ մըն էր՝ որ կը կռուէր սև երկար բանի մը հետ։ Ի՞նչ բան պէտք է ըլլար։ Աւօն վերցուց գտակը, բռնեց արեւին դիմաց և սկսաւ ուշի ուշով դիտել։

Արագիլը՝ գետին ափը, ապառաժներուն վրայ, կը կռուէր սև օձի մը հետ, ճիշտ այն օձին՝ որ քիչ առաջ իր ետեւէն էր ինկեր։



Թռչունը յանկարծ վար սուրաց, բռնեց օձը և վեր պռցաւ։

Օձը կպչխատէր ազատիլ արագիլին ճանկերէն, բայց ի զուր. արագիլը ամուր բռնած զայն՝ վեր կը պարնար։

Երբ բաւական բարձրացեր էր, մէկէն թողուց սողունը, որ անագին բարձրութենէն թափով ինկաւ ապառաժներէն մէկուն վրայ, և անշարժ մնաց տեղը։

Սատկեր էր։ Արագիլը արագ-արագ վար իջաւ, կրկին բռնեց անոր պոչէն և մէկ թռիչքով անհետացաւ մօտակայ բլուրին ետեւը։

Աւօն ազատ չունչ քաշեց, բայց և այնպէս չի վստահեցաւ անցնիլ դեռակը. նստեր էր ծառի մը տակ և կը սպասէր արեւին մարը մտնելուն։

Շուտով արեւը մարը մտաւ. ինկաւ իրկուան հովը. անասունները իջան լեռնէն, ջուր խմեցին և ամէն օրուայ պէս ճամբայ ինկան դէպի տուն։

Աւօն վեր եկաւ ինք ալ և հետեւեցաւ անոնց։

ՃԳՆԱՒՈՐԻՆ ԱՂՕԹՔԸ

1

Դարեր, շատ դարեր առաջ, Մասիս լեռան վրայ իմաստուն ճգնաւոր մը կապրէր։

Ճգնաւորը, ամէն գիշեր, կը բաթքանար բարձր ժայռի մը գագաթը և կաղօթէր. կաղօթէր՝ երբ խաղաղ գիշերը կը պարուրէր աշխարհը և պայծառ աստղերը անո՛ւշ-անո՛ւշ կը նայէին երկրին։

Կաղօթէր արշալոյսին, երբ ոսկիէ շղակաթ ճառագայթները կը զարնէին դարեւոր ծառերու գագաթին, և ամէն թռչնակ, ուրախ երգով, կողջունէր գալիք օրը...

2

Օր մը, դարձեա՛լ, իրիկնամուտին՝ կաղօթէր ճգնաւորը։ Երկնակամարին վրայ կը հալէին վարդագոյն ամպերը. վերջալոյսը կը դալկանար. լեռան ծաղիկները կը փակէին իրենց թերթիկները։

Ցանկարծ, որոտաց երկինքը. փայլեցաւ դեղին կայծակը և սասանեցաւ Մասիս։ Ակնթարթ մը ետքը, լսեց որոտումը, անհետացաւ կայծակը և լռեցաւ ձայն մը.

— Մահկանացո՛ւ, ըսէ՛, ինչ կուզես. խնդրէ՛ և պիտի կատարուի։

— Աշխարհի հայր, ըսաւ ճգնաւորը, մարդիկ տանջանքի մէջ են այս երկրին վրայ։ Վագրը կը խլէ մօտիկներ իր զաւակը. արեւը կայրէ երկրագործին հունձքը, հեղեղը կաւերէ անոր տունն ու տեղը... օգնէ՛ խեղճ մարդոց, աշխարհի հա՛յր, օգնէ՛ անոնց...

Ճգնաւորին ձայնը հեզ էր ու խաղաղ. իր խօսքերը արտայոյտին երկերուն չափ քաղցր էին։

— Ես մարդոց չեմ կրնար հանգստութիւն ու երջանկութիւն տալ. պատճառ՝ որ երջանկութիւնն ու անբախտութիւնը իրենց ձեռքէն կախուած է... Ես միայն ուժ կուտամ քեզի, որ երթաս և հասկցնես ասիկա իրենց...

3

Ճգնաւորը վար իջաւ Մասիսէն և գնաց արտարատեան դաշտը. գնաց գեղերն ու քաղաքները։

Հրամայեց մարդոց որ միանան իրարու, առուներ շինեն իրենց դաշտերուն մէջ, մեծ խրամատներ բանան ու ջրամբարներ կառուցանեն։

Յետոյ, սորվեցուց մարդոց՝ արհեստներ ու արուեստներ։ Հրամայեց որ միշտ միասին ապրին, զօրաւոր ազգ մը կազմեն՝ որ չի վախնան ո՛չ վայրի գազաններէն, ո՛չ հեղեղներէն, ո՛չ երաշտէն։

Ճգնաւորը տեսաւ որ իր ըրածը լաւ բան է և հոգին լեցուեցաւ ազնիւ հրճուանքով. օրհնեց մարդիկը և դարձեալ բարձրացաւ Մասիս լեռը՝ աղօթելու համար։

Եւ ամպ ու գոլորշի իջաւ և ծածկեց զինք մարդոց աչքերէն...

4

Անցան տարիներ, անցան դարեր, անցան հազարաւոր տարիներ։

Ահա ցրուեցաւ ամպը լեռան գագաթէն ու ճգնաւորը նայեցաւ դէպի արարատեան անսահման դաշտը։։

Մարգագետին ու արօտ կը շողշողային զմրուխտ կանաչով. պարարտ մաքիները, կովերն ու եղները խաղաղ կարածէին արօտներուն մէջ. ոսկի արտերը կը ճօճէին հովին տակ և երկիրը դարձեր էր դրախտ։

Դիտեց ճգնաւորը զմայլած, թեւերը բացաւ, աչքերը ուղղեց երկնքին, աղօթեց ցնծագին ու անսերեւոյթ եղաւ։

Անսերեւոյթ եղաւ, ու ա՛լ անգամ մըն ալ չերեւցաւ անկէ ի վեր։

ԵՂՆԻԿՆ ՈՒ ԱՐԾԻՒԸ

Եղնիկը, իր եղնորթին հետ, կարծէր լեռան վրայ։ Մայր ու զաւակ ապահով էին. ո՞ր մարդը, ո՞ր որսորդը կըրնար բարձրանալ մինչև այդ ժայռուտ կատարները։

Անոնք այդ տեղուանքը բարձրացեր էին՝ իրենց թեթև ու ճկուն կճղակներով. բարձրացեր էին՝ քարէ քար, ժայռէ ժայռ ոստնելով։

Բայց ահա, յանկարծ, չչուկ մը լսելի եղաւ։ Եղնիկը դադրեցաւ արածելէ և սարսռաց։ Լսուեցաւ թեւերու թափահարում մը և տեսնուեցաւ, մօտակայ ժայռին վրայ, խոշոր չուք մը։

Եղնիկը գիտցաւ իսկոյն որ արծիւը կիջնէր, յա-

փրշտակելու իր ձագը։ Կանգնած է, գլուխը վեր տնկած, վիշտաձակերը ուռեցուցած, ամբողջ մարմնովը դողդողալով. կանգնած է ու կը նայի թէ ինչպէս արծիւը կիջնէ վերէն, չրջաններ գծելով իր գլխուն վերև, և կը մօտենայ հեռագնեակ։

Կեցած է՝ պաշտպանելու համար իր ձագը։

Եղնորթը ինք ալ հասկցեր է վտանգը, և դողդոջուն՝ եկեր պտուրտեր է մօրը ետև, գրեթէ մտեր է անոր տակ։

Իսկ մայրը, սրունգները բացած, կճղակները ամուր տեղմած գետնին՝ պատրաստուեր է կռիւի։ Արծիւը զո՛ւր տեղը կը ջանայ դառնալ ու դառնա՛լ, վախցնել մայրը և հեռացնել իր եղնորթէն։

Եղնիկը չի շարժիր տեղէն, կեցեր է անշարժ՝ ապառաժի պէս։

Ամէն անգամ որ արծիւը կը փորձէ յարձակում տալ եղնորթին վրայ, կը գտնէ մայրը իր դէմ, որ կը պահպանէ զայն։

Վերջապէս, թռչունը յանդուգն փորձ մը կընէ. վեր կը բարձրանայ, գրեթէ կը կորսուի երկինքին մէջ, յետոյ, ակնթարթի մը մէջ, կայծակի պէս կը խոյանայ վար և կիյնայ երկու կենդանիներուն վրայ. յոյս ունի

թէ՝ այսպէս, մայրը սարսափելով զարհուրելի բաղխումէն, մէկ կողմ պիտի քաշուի։

Բայց արծիւը սխալած է. եղնիկը չերերար տեղէն և կը կենայ անշարժ. կը կենայ անշարժ և իր խոշոր եղջիւրները դէմ կուտայ գիշատիչ թռչունին։

Այդ եղջիւրները ուժեղ են պողպատի պէս. եթէ թռչունը զարնուի անոնց, կը պատռի իր կուրծքը և կը մեռնի վայրկենաբար։

Փետուրներու ամպ մը կը բարձրանայ և կը ցրուի չորս կողմը։

Արծիւը՝ յաղթուած, ցաւի երկար ու կատաղի ճիչ մը կարձակէ, և կը հեռանայ։ Կերթայ, կը թառի հեռուն՝ ժայռի մը գագաթը, ուր կը թոթուրտուի, կտուցով կը մաքրէ իր փետուրները ու կարգի կը դնէ զանոնք։

Եղնիկը, տեսնելով որ ա՛լ վտանգ չի կայ, կուղղէ իր լարուած սրունդները ու հանդարտօրէն կը կանգնի. կը լզէ իր ձագը և կարծես հպարտ է իր քաջասրտութեանն համար։

Յետոյ, յանկարծ, ոստում մը կընէ ձագին առջևէն և զայն ետեւը ձգած՝ կը սուրայ դէպի ուրիշ արօտատեղիներ։

ԱՅՍՊԷՍ ՉԻ ՄՆԱՐ...

Եղեր է թէ չէ, յայտնի չէ հաստատ.
Եւ ի՞նչ է հաստատ աշխարհի վրայ...
աշխարհի վրայ հաստատ մէկ բան կայ,
ա՛յն է որ հաստատ բան մրն ալ չի կայ։
Ատենօք կըլլայ մարդ մը գեղացի,
աղքա՛տ, օրական ապրուստի կարօ՛տ.
կուենայ տրղայ մը շատ խելացի,
կը տանի ծառայ կուտայ մէկուն մօտ։

1. Կանցնին տարիներ։ Այս խելոք տրղան
այնպէս ազնիւ է, կաշխատի այնքա՛ն,
որ կաւելցնէ վարձքն՝ իրեն աղան
եւ կը սեպէ զայն հարազատն իր տան։
Կը յիշէ օր մը հայրն իրեն որդին,
կելլէ ու կու գայ տեսուքեան զաւկին։
— Ինչպէ՞ս ես, որդի՛, հիմա ալ այնպէս
է՛, մերկ ու բոպիկ, ալ անօթի՛ չե՞ս։»
— Չէ՛, լա՛ւ եմ, հայրի՛կ, ապրո՞ւստն է դրժուար.
բայց ի՞նչ ընես որ... այսպէս չի մընար։»

2. Կերթայ խեղճ հայրը։ Կանցնին տարիներ։
Կը յառաջդիմէ տրղան օրէ օր,
շատ կը բարձրանայ, պալատ կը հասնի,
կը դառնայ ծառայ ինք թագաւորի։
Կը յիշէ օր մը հայրն իրեն որդին,
կելլէ ու կերթայ տեսուքեան զաւկին։
— Հը՞, ա՛լ ինչպէ՞ս ես, ո՛րդի, ի՞նչ կուզես.
հոս ամէն բան կայ առատ ծովու պէս։»

— Հա՛, շատ լաւ եմ, հա՛յր, մօրքս բարեւ տա՛ր,
բայց եկուր տես որ . . . այսպէս չի մընար...»

3. Կերթայ խեղճ հայրը : Կանցնին տարիներ :
Այնքան կը սիրուի խելոք տղան մեր՝
որ թագաւորը կառնէ ու ծառան
երկրորդը կընէ իր իշխանութեան :
Կը յիշէ օր մը հայրն իրեն որդին,
կելլէ ու կուգայ տեսութեան զաւկին .
— Հը՛, ալ ի՞նչ ունիս դուն պակաս, ո՛րդի,
ամէն մարդ խօսքովդ կելլէ-կը նստի:»
— Հա՛, մեծ եմ, հայրի՛կ, նազիր եմ, տեսա՛ր,
բայց ի՞նչ ընես որ . . . այսպէս չի մընար...»

4. Կերթայ խեղճ հայրը : Կանցնին տարիներ :
Այդ բարի երկրին թագաւորը ծեր՝
օր մը, անժառանգ կիյնայ, կը մեռնի՛,
գահն ու աշխարհը կը մնան անտէր :
Ժողովրդի կուգան իշխան ու մեծեր,
շատ խորհուրդ կընեն ու առօք-փառօ՛ք,
կը բերեն իրենց նազիրը խելոք
կընեն թագաւոր, կու տան գահն անոր :
Գեղացի հայրն է կը լսէ մէկ օր
թէ զաւակն եղեր է մեծ թագաւոր :
Կուգայ.— է՛, որդի, ալ ի՞նչդ է պակաս,
այս աշխարհիս մէջ մէկ դուն ես որ կաս...»
— Փա՛ռք Աստծու, հայրի՛կ, ունիմ թագ, գոհար,
բայց եկուր տես որ... այսպէս չի մընար..:»

5. Կերթայ խեղճ հայրը : Կանցնին տարիներ :
Բազմա՛ծ իր գահի՛ն, ինքնակալը մեր

կը վրնռէ կեանքն ու մահն ասոր-անոր,
բուռը հաւաքած աշխարհը բոլոր :
Բուռդ հաւաքէ աշխարհքն որ կուզես,
դարձեալ աշխարհէը դուն թողելու ես :
Մեր թագաւորն ալ՝ օր մը, իր կարգին,
ինկաւ անկողին, աւանդեց հոգին :

6. Գիւղին մէջ ծերուկ հայրը կը լսէ :
որ իր թագաւոր որդին մեռեր է :
Ի՜նչ ըսել կուզէ — կուգայ ու վրրան
կիյնայ ու կուլայ, կընէ մեծ շիվան...:
Զօրքով, աշխարհքով, ծէսով, հանդէսով
կը թաղեն արքան նախորդներուն քով,
ողորմիս տալով մեռնողին հոգուն,
կը դառնան, կերթան ամէնքն իրենց տուն :
Կանցնին տարիներ : Հայրը մէկ անգամ
«երթամ ես, կըսէ, զաւկիս վրրայ լամ:»
Կուգայ. ի՜նչ տեսնէ,— մահարձան մարմար,
ու վրրան գրրուած... «այսպէս չի մընա՛ր . . .»

7. Կերթայ խեղճ հայրը : Կանցնին տարիներ,
ո՞վ գիտէ հաշիւն այն օրն ի վեր...
բայց անկէ ասդին անվերջ, դարէ դա՛ր,
մեծերը կըսեն — «այսպէս չի մընար . . .»

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

1. Սերմնացան 5
2. Հո՛-հո՛, ե՛կ ճան . . . 7
3. Շողգամն ու քաղքը . . 8
4. Իմաստուն ջուլհակը. . . 10
5. Կոտրոզ դգալը 12
6. Գեղեցիկ պարտէզը. . . 13
7. Հէ՛յ ճան լուսին. . . . 16
8. Ապու Սէիտին էշը . . . 17
9. Տերեւաթափ 20
10. Յարենտէրն ու Ջաղացպանը 21
11. Առիւծը, շնագայլը և ոչխարը 24
12. Հայրենասէր աղջիկը . . 25
13. Աշուն է 27
14. Ապրշումին կծիկը . . . 28
15. Սարդն ու մեղուն . . . 33
16. Մեր ուսուցիչը 34
17. Ժամանակը 37
18. Աշխարհքի ամենէն պէտքի բանը 38
19. Հայրենի օճախ 42
20. Մեծ մայրս 44
21. Կաւախաւմբը 47
22. Այծուած եղջն 48
23. Ծիծեռնակը 51
24. Եգեմոկան ծաղիկը. . . 52
25. Դէ՛հ քաշեցէ՛ք, սիրուն եղներ 57
26. Ծիլն ու ապառաժը. . . 58
27. Մայրիկը կը քնանայ . . 60
28. Դարնան առաւօտ . . . 61
29. Ծերուն Խաչոյին ընտանիքը 62
30. Շերամ. 63
31. Երեք խրատ 65
32. Անձրեւի կաթիլը . . . 85
33. Կլայագործ վարպետ Սահակը 86
34. Սասունցի Դաւիթը . . . 88
35. Մեղուներն ու պիծակները. 91
36. Խելացի աղջիկը 94
37. Փայտահատն ու մահը . . 97
38. Ո՞վ է հարուստը . . . 98
39. Ճշմարիտ սփոփանքը . . 99
40. Հալուի անկողինը . . . 101
41. Ծերուկ թագաւորը. . . 102
42. Դարձի ժամ 105
43. Գեղացին և հարուստ որսորդը 105
44. Դամոկլեան սուր. . . . 118
45. Իմ մեծ-հօրս մեծ-հայրը . 119
46. Ո՞վ կը վախնայ մահէն . 122
47. Մահուան մեծ-վէզիրը . 125
48. Արծիւն ու արտոյտը . . 126
49. Երջանկութիւնը 127
50. Արտին խօսքը տունը չեն ըսեր 129
51. Այ սև ամպեր 132
52. Ապու-Հասանին կոշիկները 133
53. Հարսնքար 140
54. Գայլը 142
55. Գիշեր 150
56. Մօր մը նամակը իր տղուն 151
57. Ոսկիէ իլիկը 152
58. Անուշաւանին խենդութիւնները 156
59. Նամուս ու խայտաթ . . 159
60. Տեսնենք ո՞վ է կտրիճը . 160
61. Կայր երկրագործը . . . 164
62. Օձն ու արագիլը . . . 166
63. Ճգնաւորին աղօթքը . . 168
64. Եղնիկն ու արծիւը . . . 170
65. Այսպէս չի մնար . . . 173

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
Ա. ՍՊԱՍՆԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013 3604-3607

<< Ազգային գրադարան
NL0059764

<< Ազգային գրադարան
NL0059763

<< Ազգային գրադարան
NL0059762

<< Ազգային գրադարան
NL0059761

10 - 50

02 - 0